ԲԱԳԻՆ
Pakine

ԾԴ. տարի, թիւ 2



Ապրիլ / Մայիս / Յունիս 2015

Գրականութիւն - Արուեստ - Իմացական Աշխարհ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ՕԳՆԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ
Նորա Բարսեղեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Սարգիս Կիրակոսեան (Լիբանան)
Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Շուշիկ Տասնապետեան (Լիբանան)
Յակոբ Տէր Ղուկասեան (Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)
Անուշ Թրուանց (Հայաստան)
Արքմենիկ Նիկողոսեան (Հայաստան)
Հրանդ Մարգարեան (Մ. Նահանգներ)
Աւետիս Հաճեան (Մ. Նահանգներ)
Յարութիւն Պէրպէրեան (Գանատա)

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղղոյեան կեդրոն
Բ. յարկ
E mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Ցրուման կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղղոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս. (01)260329
Փոստարկղ. 80 1096 Պ. Համուտ
E-mail: imphamaz@inco.com.lh

Հրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան

ԲԱԳԻՆ

Ապրիլ / Մայիս / Յունիս 2015

ԾԴ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵՐ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՅԵԼԻՆ ____ 1

■ ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԷՆ
ԱՐԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ-ԱՐՓԻԿ ՄԻԱԱՔԵԱՆ ____ 4

■ ՔՆՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ
ԾԱՌԸ - Հրանտ Մարգարեան ____ 6

■ ԱՐՁԱԿ
ՎԵՐՋԸ ԻՆՉ - Մարուշ Երամեան ____ 8
ԱՄԷՆ ՏԵՂ ՀԱՅ ԿԱՅ, ՈՐԹԱՏՈՒՆԿ, «ԱՆՏՈՒՆԻ»... - Յ. Պալեան ____ 13
ԿՈՏՐՈՒԱԾ ԱՊԱԿԻՆԵՐ - Արմինէ Պետրոսեան ____ 19
ՏԻՐԱՆ ԵՒ ԻՆՏՐԱ. ԱՆՈՒՆԻ ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆԸ - Պետրոս Դեմիրջեան ____ 27
ՑԱՒԻ ՅԱՒԵՐԺ ԿԱՆՉԸ - ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ -
Վաչագան Աւագեան ____ 31
ՈՐՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ, ՄԻ՞ԹԷ ԴՈՒՆ ԿՐՆԱՅԻՐ ԱՅԴՔԱՆ
ԴԱՌՆ ԾԻԾԱՂԵԼ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՎՐԱՅ - Լեռ Կամսար ____ 34

■ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՇՏՈՑԻ ԳՈՐԾԻ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ - Նշան Որբերեան ____ 39
ԱԵՌԻ ԵՒ ԱՐԵԱՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՌՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ
ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ Յ. ՕՇԱԿԱՆԻ «ԾԱԿ ՊՏՈՒԿ» ՎԷՊՈՒՄ -
Անուշ Վլադիմիրի Դոլուխանեան ____ 48

■ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՓԱԹՐԻՔ ՄՈՆՏԻԱՆՕ 2014-Ի ՆՈՊԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ ____ 54

■ ԱՐՈՒԵՍՏ
ՉԻԼՁԵԱՆՆԵՐԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ - Վալենտին Խաչիկի Թովմասեան ____ 64
ԱՆԱՏՈԼԻ ԱՒԵՏԵԱՆ՝ ԱԶԱՏ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՄԸ - Յակոբ Պալեան ____ 74

Կողքի նկար՝ ԱՐԱՐԱՏ
(1992- պղինձ, արոյր, փաթինա
չափ՝ 81x73 սմ)
Գործ՝ Անատոլի Աւետեանի

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵՐ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՀԱՅԵԼԻՆ

Ժամանակակից հաղորդակցական միջոցները, պատկերի եւ համացանցի անմիջականութիւնը, ինչպէս նաեւ զբօս-ժամանցի մերօրեայ քաղաքակրթութիւնը հեռզհեռէ աւելի կը նեղցնեն գիրի եւ գիրքի հորիզոնը:

Գրականութենէն եւ գիրքէն հրաժարելու ընթացք կայ, մանաւանդ փոքր ժողովուրդներու պարագային: Նուազ մեծերը դեռ կը դիմադրեն: Խնդիրը համաշխարհային է:

Կ'ըսենք՝ համաշխարհայնացում: Այսինքն՝ հարթում մշակութային տարբերութիւններու:

Գրողին եւ անոր գործին ճառագայթման համար անհրաժեշտ են ազգային լեզուով հեղինակուած գիրքերու մեծ համարուած լեզուներով թարգմանութիւնները, որպէսզի համալսարաններու մէջ ուսումնասիրուին, մամուլը եւ լրատուամիջոցները անդրադառնան:

Եթէ հայկական շրջանակէ դուրս գանք, ո՞վ եւ որո՞նք իմացած կ'ըլլան Մուշեղ Իշխանի, Վահէ Վահեանի, Լեւոն Շանթի, Պէպօ Սիմոնեանի, Մարուշի, Յարութ Պէրպէրեանի եւ ուրիշներու մասին:

Ժան-Փոլ Սարթր այս մասին վերլուծումներ կատարած է (Situations, 2012)՝ փորձելով պատասխանել երեք հարցումներու.

Ի՞նչ կը նշանակէ գրել:

Ինչո՞ւ գրել:

Որո՞ւ համար կը գրենք:

Պէտք է պատասխանեն մեր ժամանակակիցները,- գրող, ընթերցող, ընթերցումէ հրաժարած եւ չընթերցող: Նաեւ հայեր, ոչ միայն մտաւորականներ. ինչո՞ւ պէտք է գրել, հայերէն գրել եւ հայերէն գիր-գիրք կարդալ:

Ժան Փոլ-Սարթր կարեւոր նշումներ կ'ընէ:

Կ'ըսէ, թէ գրելը նկարել չէ, երաժշտութիւն յօրինել չէ: Նկարիչը եւ երաժիշտը կը ներկայացնեն պատկերը կամ նուագը: Դիտողը կամ

ունկնդիրը կը տեսնեն եւ կը լսեն ինչ որ ուզեն, ըսփ հոգեվիճակի եւ պրամադրութեան:

Գրողը պարբեր յաւակնութիւն ունի. կը ձգտի առաջնորդել, թելադրել, պատգամել: Հրամցուած էջը կը դադրի սոսկ առարկայ մը ըլլալէ, չէզոք չ'ըլլար, կ'ըլլայ նշան, որ կ'ունենայ առաջնորդելու, ուղղութիւն տալու միտում: Ան ընթացիկ իմաստով ղեկավար չէ, հոգեկան-ոգեկան խորքի ուղենիշ է, առանց որուն տեղի կ'ունենայ նկարագիրի կորուստ. ազգ, ժողովուրդ, համայնք կը դառնան ամբոխ:

Ժան-Փոլ Սարթր կը սահմանէ արձակի եւ բանաստեղծութեան նշանակալից տարբերութիւնը: Կ'ըսէ, որ «արձակագիրը բառը կը նկատէ հում նիւթ, ինչպէս նկարիչը՝ գոյները, երաժիշտը՝ ձայները: Արձակագիրին ընթացքը հիմնովին տարբեր է: Անոր համար բառերը առարկաներ չեն, այլ կը նշեն առարկաներ: Արձակագիրը խօսող մըն է, եւ խօսիլ կը նշանակէ գործել: Արդարեւ, խօսելով կը յայտնաբերենք, եւ պրամաբանութեան վերջին հանգրուանը, յայտնաբերել փոխել է»:

Ուրեմն, արձակագիրը իր խօսքով կը յայտնաբերէ, լոյս կը սփռէ, որպէսզի մարդիկ գիտնան եւ ոեւէ պարագայի չփորձեն չքմեղանալ, ինչպէս կ'ըսուի օրէնքին համար, զոր ամէն ոք պարտի գիտնալ:

Ինչ կը վերաբերի ոճին, Ժան-Փոլ Սարթրի բացատրութիւնը գրողին իմաստութիւնն է, պէտք է ըլլայ. ոճը կը գումարուի խորքին վրայ, բայց յարաբերաբար անոր՝ առաջնահերթ չէ: Երբ ոճը կը դառնայ ինքնանըպատակ, կ'ըլլայ ճոռոմաբանութիւն: Դէպքերը, կացութիւնները եւ մշակուելիք նիւթը կը մղեն գրողը, որ ան գտնէ արտայայտութեան նոր ձեւեր: Ոճը կը կրէ նիւթը, անհրաժեշտ ըլլալով հանդերձ՝ նպատակ չէ:

Գրողը յանձնառու է, կ'ազդէ գիտակցութեան վրայ, իմաստ կը փոխանցէ, ժամանակին արձագանգն է, խորհրդածող է արժէքներու եւ ընտրանքներու համար: Իր խօսքը ներկայի դատումն է եւ ապագայի տեսիլքը:

Այս արդէն երկրորդ հարցականին կ'առաջնորդէ:

Ինչո՞ւ գրել:

Գրականութիւնը յաւակնութիւն է, այն իմաստով, որ գրողը կ'ուզէ թափանցել միւսին գիտակցութեան մէջ, երթալ դէպի միւսը, այսինքն՝ հաղորդակցիլ, որովհետեւ ըսելիք-փոխանցելիք ունի: Այն, ինչ որ կը փոխանցուի գրողին կողմէ, կ'իրականանայ լեզուով, որ միջոց է, եւ ամբողջանալու համար պէտք է ընթերցուի: Գրականութեան գոյութիւնը կը պայմանաւորուի ընթերցումով, դերակատարը ընթերցողն է, որ իր կարգին կը յայտնաբերէ գրողը, անոր գիտակցութիւնը, էջը առարկայ ըլլալէ կը դադրի ընթերցողով, որ կը լրացնէ գրողին մտածումը՝ անոր կեանք տալով, վերստեղծելով երկը, զայն կ'իմաստաւորէ: Ընթերցողը՝ գրողը ինք կամ միւսը՝ որ կը սպանայ էջին վրայ արձանագրուած խօսքը, հաղորդակցութեան երկրորդ դէմքն է:

Պարզ. գրողը կ'ամբողջանայ ընթերցողով:

Գրողը կը գրէ ընթերցողին համար՝ հաւատալով, որ ան մասնակից պիտի ըլլայ իր գեղեցիկի եւ մտածումի յայտնաբերումին, հասկնալու համար խօսքի արկածախնդրութիւնը, տեւաբար կրկնուող եւ նորոգուող, որ տեղի կ’ունենայ անաւարտ եւ ընդարձակուող սահմաններու մէջ: Ինքնաճանաչման փորձ, որ միշտ կարիք ունի միւսին, որպէսզի գիտակցութիւնը հարստանայ:

Առանց գրող-ընթերցող զոյգին,- եթէ չնչուին երկուքն ալ ընկերային կեանքի հորիզոնէն,- կը յանգինք զբօս-ժամանցի եւ սպառողական ընկերութեան, միապարածք մարդուն, խորքէ պարպուած, որուն պատկերացումը ունեցած է Ճորճ Օրուէլ, տեսնելով իբրեւ թուանշան:

Երբ կը դադրի ընթերցումը, մեր ժողովուրդի պարագային՝ հայերէն ընթերցումը, կը ծնին այլ ձեւով միապարածք (Herbert Marcuse) ծագումով հայեր, որոնք կորսնցուցած կ’ըլլան իրենց ինքնութեամբ գեւելու էական ազատութիւնը, որուն մշակն է գրողը, իր անհատական յատկանիշներէն եւ փառասիրութիւններէն անդին: Գրականութիւնը կը զարգանայ խորհրդապատ եւ լայնածիր մշակութային շրջանակի մէջ, ուր գրող եւ ընթերցող կրնան գեւել միասնաբար շնչելով:

Այսօր այս «միասնաբար»ը ամէն օր կը կծկուի, հայ ընթերցողը հետզհետէ աւելի կը բացակայի, այդ բացակայութիւնը կը չափուի գիրքերու տպաքանակով, աւելի ճշգրիտ՝ սպառած-վաճառուած օրինակներու համրանքով:

Այս նշումներու լոյսին տակ, միթէ պէտք չէ՞ եզրակացնել, որ ունինք ազգային ինքնութեան պահպանման լուրջ խնդիր, որուն կրնաք տալ մշակութային քաղաքականութիւն անունը: Կրնա՞նք ընել այնպէս, որ օր մը չըսենք, թէ ուշ է, թէ անապակ դարձած ենք հայկական ազատութիւնը պահելու: Եթէ այդ ազատութիւնը կորսուի, ի՞նչ բանի ծառայած կ’ըլլան ղեկավարութիւնները:

Այս լուրջ խնդիրը հակակարգախօսային եւ հակադիրքապաշտպական է:

Գրականութիւնը մտածումներու զարգացման եւ բախման դաշտն է, ուր ազատութեան լոյսին տակ ինքնութիւն կը պահուի:

Եզրակացնե՞նք, որ ազգային ինքնութեան պահպանման լուրջ խնդիր կը դրուի: Կրկննենք. ունինք մշակութային քաղաքականութիւն ճշդելու եւ գործադրելու խնդիր, երբ ամէն օր կը դառնանք քիչ մը աւելի հակամշակութային:

Կրնա՞նք ընել այնպէս, որ օր մը չըսենք, չըսուի, որ արդէն-այլեւս ուշ է:

Գրականութիւնը մտածումներու զարգացման եւ բախման դաշտն է, ուր ազատութեան լոյսին տակ ինքնութիւն կը պահուի:

Ինքնութիւնը ազգի գոյատեւման երաշխիքն է, առանց որուն համաշխարհայնացումը մեզ կը հարթէ, պահ մըն ալ օրօրելէ եկք՝ որ մենք համաշխարհային ազգ ենք:

Ի՞նչ ընել, որ գրող եւ գրականութիւն վերադառնան ազգին:

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԷՆ

ՄԱՀ ԱՐԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ 1943-14 ԱՊՐԻԼ 2015

Դոկտ. Արա Գաբրիէլեան (1943-2015) կեանքէն բաժնուեցաւ ցեղասպանութեան հարիւրամեակի նշման նախօրեակին, Նիւ Եորքի մէջ: Կր պապրասպուէր Երեւան երթալ եւ մասնակից դառնալ համաժողովրդական ալիքին: Սփիւռքի ոչ-ընթացիկ փիպար մրն էր Արա Գաբրիէլեան, Ամերիկա ծնած, բաձրագոյն ուսման փիրացած, բայց միշտ կապուած մնացած իր ժողովուրդին, անոր դպրին, մշակոյթին, լեզուին: Լեզուին՝ որուն կր փիրապեպէր, փալով փասպր, որ օպար ափերու վրայ կարելի է փէր րլլալ եւ պահել մեր ոսկեղինիկր, այսինքն՝ բարոյալքող պեղապուութեան հակափասպը: Ուսուցիչ էր եւ Մշակոյթի մարդ ողբացեալ մեր ընկերը, աշխոյժ, գործունեայ, պապնէշի վրայ, համազգայնական: Իր կեանքին եւ գործին մասին գրեցին ընկերներ, թերթեր: Զարմանալի թող չթուի, բայց «Բագին»ն ալ կորսնցուց իր աշխապակիցր: Արա Գաբրիէլեան որոշած էր աշխապակցիլ «Բագին»ի եւ իր առաջին էջր լոյս փեսաւ մեր նախորդ համարով, բայց ափսոս, այդ պիպի րլլայ իր վերջին էջր: Այլապէս կսկծալի, քանի որ հայերէն գիր-գրականութեան սէր ու կիրք ունեցող մրն է, որ մեզմէ բաժնուեցաւ:

«Բագին»ի ընպանիքր կր վշպակցի իր կողակիցին՝ Արեւիկին եւ որդիին՝ Արմէնին:

ՄԱՀ «ՅԱՌԱՋ»Ի ՎԱԱՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ԱՐՓԻԿ ՄԻԱԱՔԵԱՆԻ

Յուզումով իմացանք «Յառաջ»ի բազմամեայ խմբագիր Արփիկ Միսաքեանի մահը, 20 Յունիս 2015-ին: Հայկականութեամբ բաբախող ժամանակաշրջանի մը էջը դարձաւ: Հայկականութեամբ բաբախող «Յառաջ»ը դադրած էր 2009-ին:

«Յառաջ»ը ընթացիկ լրապուամիջոց չէր: Շաւարշ Միսաքեանի օրէն, որուն ուղիղ գիծին վրայ մնաց Արփիկ Միսաք-

եան, ան հայոց լեզուի եւ գրականութեան անառիկ բերդ էր, ազգային հիմնականի պաշտպանութեան գիծերուն վրայ անզիջող: Շաւարշ Միսաքեանի «Յառաջ»ը արմատախիլ ժողովուրդի զաւակներուն համար հանդիսացաւ դպրոց: Պէտք է մտաբերել «ՅԱՌԱՋ»Ի ՍԱՆԵՐԸ, որոնք հայերէն սորվեցան թերթով եւ գրականութիւն փորձեցին: «Յառաջ»ը միշտ հանդիսացաւ հայ գրողներու եւ մտաւորականութեան բեմը, Շաւարշ Միսաքեանով եւ Արփիկ Միսաքեանով, որուն ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ յաւելուածները մշակութային զարգացման անշրջանցելի օրինակելի էջեր են:

«Յառաջ»ը իրաւ եւ հարազատ հայ մամուլի աւանդապահն էր, փուրք չփուաւ սուսկ լրատուութեան եւ քարոզչութեան: Զդարձաւ օպարաբարբառ, բարձր պահեց հայ ազգային ինքնութեան յատկանիշ լեզուն: Ինչպէս «Ազատամարտ»ը (Պոլիս) եւ «Մշակ»ը (Թիֆլիս), ան ծառայեց հայ գրականութեան եւ միտքին: 1925-էն 2009, բացի Բ. Աշխարհամարտի ընթացքին կարճ դադարեցումէ մը, «Յառաջ» լոյս տեսաւ անխափան եւ սփիւռքի հայ մամուլին մէջ ունեցաւ իր ուրոյն տեղը:

2009-ին «Յառաջ»ի դադարեցումը վկայութիւնն էր մեր նահանջներուն:

«Յառաջ»ը ծաւալուն եւ բազմածալ, գունաւոր էջերով, ուշագրաւ թերթ չէր, ան էապէս մթնոլորտ մըն էր, զոր կարելի էր ապրիլ անոր էջերու ընթերցումով, կամ այդ զգալ իր պզտիկ խմբագրատան մէջ, որուն եփին կը գտնուէր նախապետական փպարանը:

Միայն յարգանքի եւ հիացման խօսք հայ մամուլի եւ հրապարակագրութեան Մեծ Տիկինի անհետացման առիթով, գաւելով, որ մեծ համայնք մը անկարող եղաւ Շաւարշ Միսաքեանի եւ Արփիկ Միսաքեանի հայութեամբ բաբախող մշակութային ժառանգութիւնը վառ պահել եւ ապրեցնել:

«Բ.»

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԾԱՌԸ

Յոգնած էր, յոգնած
Անպառին խորքը ծուարած թաքուն
Այս հի՛ն ծառը ծեր...
Ճիւղերը չորցած,
Տերեւներն վաղո՛ւց դալկած, խամրած
Գարունը արդէն հրաժեշտ տուած
Անցած, գացած էր անյայտ եզրերը վառ հորիզոնի...

Ժամանակի բութ լուծին տակ կքած,
Յոգնա՛ծ էր, յոգնա՛ծ
Այս հին ծառը ծեր...

Արեւի առջին «բարի լոյս»ն անգամ
Որ սիրոյ բոյրով պահեր կ'աւետէր
եւ հին օրերը նազով կ'օրօրէր,
Հիմա կոշտացած, արձագանգ մ'իսկ չէր...

Բացաւ աչքերը...
Երազանք մը հին ապրելու համար

Նայեցաւ վերեւ...
Ամպերն կուտակուած ահաւոր համերգ մը երկնելու համար
Պահը կ'ապրէին...

Շուրջը նայեցաւ...
Հին ընկերները չորցած, սպառած մոմերու նման
ընդհատուած երգի արձագանգ էին...
Թեքեց գլուխը...
Նայեցաւ հողին հետ ընդելուզուած իր արմատներուն
Որոնք պարտասած հողին մէջ խրուած
Անցեալ երգերու բառն էին մոռցած...

Ճիւղերը պարզեց,
Ամպերէն շատ վեր,

Աղօթեց երկար...
Բայց բառերն անկար
Շուրթին քարացան...

Հողմը երկներ էր...
Ամպերն ահաւոր կայծակներ շալկած
Բնութեան երգի նոր յօրինումով
Շանթերու շռայլ խուրձերով ահեղ
Հռնդիւնով մը
Հազար գոյներով
Հողը ներկեցին...

Ցոգնա՛ծ էր ծառը...

Վերջին ճիգ մ՚ըրաւ՝ դարաւոր գլուխը բարձր պահելու...
Բայց ո՜ւշ էր արդէն...

Ու փափանեցաւ յոգնած ծեր ծառը...

Ու հասակովը պարթեւ ու խրոխտ
Թեքուեցաւ դանդաղ հողը գրկելու...

Եւ յանկարծ լսեց խմբերգ մը հաղորդ
- Դարերու կանչի արձագանգ մ՚ինչպէս -
«Ահա մեր ուսը
Հանգչեցուր գլուխդ:
Հողը փեղդ չէ...»

Նայեցաւ ծառը
Իր շուրջը խմբուած, ուս-ուսի փուած մափղաշ բուներուն

«Բայց ո՞վ էք» ըսաւ
«Ուրկէ՞ էք եկած»:

Մափղաշ բուները շշուկով ըսին
«Հին արմատներէդ
Ծնունդ ենք առած»:

12 Ապրիլ 2015, Նիւ Եորք

ՄԱՐՈՒԾ ԵՐԱՄԵԱՆ

ՎԵՐՋԸ ԻՆՉ

Նախ՝ մեծ գնահատանք այն հսկայ եւ միաձոյլ աշխատանքին համար, որ կատարուեցաւ մեր ԲՈԼՈՐ միութիւններուն եւ ժողովուրդի ԲՈԼՈՐ խաւերուն կողմէ, առանց խտրութեան, միջազգային հպարտ-տառիթ ձեւով նշելու հարիւրամեակը:

Սակայն հիմա, երբ հարիւրամեակի ամբողջ խանդավառութիւնը, յուզումը եւ «յաղթանակը» արդէն հանդարտած են, մեզի կը մնայ նոր հանգրուանի մը գիտակցութիւնը ունենալ, եւ ըստ այնմ աշխատիլ: Հարիւր տարի կրեր ենք ջարդուած րլլալու ծանրութիւնը, եւ ձեւով մը այդ ծանրութեան վրայ բեռցուցեր մեր անձրագիր գոյութիւնը: Հիմա ատենն է - նոյնիսկ ուշ ենք - նոր յիսնամեակի շեմին քիչ մը մենք մեզ հաւաքելու եւ մեր շուրջը նայելու:

ՀԱՐՑԵՐ

Գլխաւորաբար երկու ճակատներու վրայ թերացած ենք, կարեւոր է պիրկ եւ լուրջ աշխատանքի ձեռնարկել. թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներուն վրայ՝ այլ խօսքով «ներս»ը եւ «դուրս»ը, Հայաստան եւ Սփիւռք: Պերճ Ջեյթունցեան իրապէս շատ լաւ խօսք մը րսած էր այս առիթով. «Լաւագոյն վրէժը զօրաւոր երկիր մը ունենալն է»: Զօրաւոր՝ իր պետականութեամբ, իր Սփիւռքով եւ թիւով. որակը չեմ նշեր, որովհետեւ հարիւր տարիներու ընթացքին նուաճուած այդ որակը բնաւ արհամարհելի չէր: Բայց զօրացնել երկիրը այնքան, որ իր դերը ունենայ միջազգային որոշումներու մէջ, եւ ոչ թէ իրեն պարտադրուին այդ որոշումները, եւ ինք անյուսօրէն ընդրէ «երկու չարեաց փոքրագոյնը»: Երկրորդ գլխաւոր եւ պահանջական առկախ մնացած հարցը՝ ինչպէ՛ս դիմագրաւել **Ջարդը**, այսինքն անոր իրողութիւնը ինչպէս ներկայացնել գալիք սերունդին, որ արդէն հինգերորդը պիտի րլլայ եւ շատ հեռացած **Ջարդի** ժամանակէն, կարենալ զգացականօրէն ազդուելու համար:

Կը մնայ ուրեմն գիտական մօտեցումը: Յաճախ կը խօսուի, օտարներուն կողմէ, պաշտօնապէս՝ մամուլով եւ հեռատեսիլով, կամ անպաշտօն՝ արտայայտուած որպէս հանգամանալի կարծիք, թէ **հայերը ինչպէ՞ս պիտի կարենան ապրիլ իրենց «ջարդուած» ըլլալու իրողութեան հետ, ինչպէ՞ս պիտի կարենան նոր սերունդներ հասցնել եւ դաստիարակել այս հոգեբանութեամբ:**

Անկեղծօրէն նման հոգեբանութիւն երբեւէ չեմ նկատած մեր ներաշխարհին մէջ, Հայաստանի թէ Սփիւռքի պարագային: Ընդհակառակն՝ ո՛ւր որ գացեր-հասեր ենք, մի՛շտ ալ ունեցեր ենք կարկառուն դէմքեր տարբեր ասպարէզներու մէջ. բան մը, որ մնացեալիս հպարտութիւն կառթէ, քիչ մրն ալ ինքնահաւանութիւն՝ եթէ ցեղասպանուելէ կրցանք մինչեւ միջազգային բեմեր հասնիլ կամ համաշխարհային դէմքեր րլլալ, ուրեմն ...

«Բաւարարուած րլլալով այս կարեւորագոյն հարցին մէջ, անոնք պիտի կարենա՞ն արդեօք պահպանել համայնքային կեանքը, մշակոյթը, իրենց առանձնայատուկ կրթական համակարգերը, պիտի

կարենա՞ն արդեօք անցեալը վերյիշելէ զատ յառաջ նայիլ նաեւ դէպի ապագայ՝ որպէս մարդկային խումբ», կ՛ըսէ ֆրանսացի հասարակագէտը՝ Միշէլ Վիէւորքա: **Ասիկա հարց մըն է, զոր միայն օտարները կրնան դնել, որովհետեւ եթէ Ջարդը ապրած եւ Աղէտը պեսած սերունդը կրցաւ այս կամ այն ձեւով շրջանցել այդ անդոհը, ուրեմն յաջորդ սերունդները շատ աւելի ուժեղ են կրելու այս «բեռ»ը:**

Այսպեղ ալ սակայն ունինք արդէն միակ ջարդուած ժողովուրդը չըլլալու հանգամանքը: Առաջինն ենք, բայց ոչ միակը, դժբախտաբար: Հետեւաբար մասնագիտական մօտեցումի մը կարիքը ունինք այս հարցին պարագային եւս:

Սփիւռքի մէջ մեր ֆիզիքական բաժանեալ - չըսելու համար պառակտուած - գոյութիւնը այնպիսի հարցեր կը ներկայացնէ, որ յստակ չէ, թէ ինչպէս պիտի կարենանք միանալ եւ ուժ կազմել: Հարիւրամեակը ունեցաւ ուժը մեզ միացեալ ձեւով ներկայացնելու աշխարհին: Հիմա ուրեմն պիտի վերադառնա՞նք այդ նախկին, բաժանեալ վիճակին: Եւ ասիկա՝ տարբեր ճակատներու վրայ: Օրինակ՝ **ուղղագրութեան հարցը**: Ունինք այնպիսի առաջնահերթ հարցեր, որ կարելի է պահ մը ոչ թէ մոռնալ ուղղագրութեան հարցը, այլ՝ «հարցի» չվերածել զայն: Բայց ...

Հայաստանի մէջ կարգ մը թերթեր եւ հանդէսներ սկսած են ըստ բնագիրի ուղղագրութեան հրապարակել գրութիւնները, թէեւ պակաւին կը շարունակուին «Եղեռնագողի» գրողներու գործերը աբեղեանական ուղղագրութեամբ հրապարակուիլ, այդպիսով թէ՛ անարգելով յիշատակը նոյն այդ «եղեռնագողի» գրողներուն, թէ՛ ալ դժուարացնելով մեսրոպեանականին ընկալումը Հայաստանի մէջ: Այս գիրքերուն հրապարակութիւնը իրապէ՛ս ճիշդ առիթը պիտի ըլլար Հայաստանի ընթերցողները ընտելացնելու դասական ուղղագրութեան, մինչ հիմա կարծես կը շեշտուի խուչընդոտը, կը շարունակուի յամառութիւնը: Ցաւալի է, չէ՞, թէ ի՛նչ կ՛ըլլուի այսպեղ. որովհետեւ շատ դիւրին պիտի ըլլայ պատահական տող մը վերցնել եւ վերստին ապարդիւն վէճերու ձեռնարկել: Ինչ կը վերաբերի Սփիւռքին. մենք

եւս ունինք մեր ուղղագրութեան «հարցը»: Նկատի առնելով, որ Սփիւռքի մէջ չունինք «լեզուի կաճառ» մր կամ գիտական ակադեմիա մր, որ միաձեւ օրէնքներ պարտադրէր մամուլին, գրագէտներուն եւ բոլոր դպրոցներուն, ո՛ւր որ ալ գտնուէին այդ դպրոցները, մեր մօտ կը շարունակուին ուղղագրական տարբերակներ, որոնք կը բարդացնեն ո՛չ թէ ուղղագրութիւնը, այլ զայն ուսուցանելու կերպերը: Ասիկա շատ յստակ է խմբագիրներուն, գրագէտներուն եւ բոլոր ուսուցիչներուն համար: Եւ որովհետեւ մեր թիւին կէսը ուսուցիչ, խմբագիր, կամ գոնէ սկսնեղծագործող է (առաւելապէս բանաստեղծ), ուրեմն այս հարցն ալ յստակ պէտք է ըլլայ: Տակաւին կայ ընդհանրապէս դպրոցականներու ծնողներուն կողմէ որդեգրուած կեցուածքը լեզուին հանդէպ՝ «հայերէնի ուղղագրութիւնը ՇԱՏ դժուար է»: Առաջին մտածումը, զոր կ՛ունենամ, արժանապատուութեան խնդիրն է՝ փրանսացիները օր մր օրանց մտածե՞ր են իրենց ուղղագրութիւնը փոխելու, «դիւրացնելու» մասին (բացի շատ հազուագիւտ պարագաներէ), կամ արաբները, որոնց լեզուին ուղղագրութիւնն ալ բաւական դժուար է: Ո՞ւր է մեր հպարտութիւնը մեր լեզուով, ո՞ւր է մեր արժանապատուութիւնը, այդքան թեթեւութեամբ մօտենալու համար երեւոյթի մր, որ մեր **ազգային կռուան**ներէն մէկը կը համարուի:

Կայ նաեւ «առանց լեզուն գիտնալու հայ ապրելու եւ զգալու» երեւոյթը: Ասիկա իրապէս առանձինն լայնօրէն արծարծուելիք նիւթ է: Միայն կարելի է նշել այն, որ առանց լեզուին, եւ կրօնական պարբերութեան չգոյութեամբ, խառն ամուսնութիւնները շատ աւելի կր հեշտանան, եւ, երկար ժամանակի վրայ, ձուլումի կր տանին (մեր կարգ մր գաղութներուն պատմութիւնը վկայ):

ԾՐԱԳԻՐ

Տակաւին կայ ամբողջ ազգի մր գալիք ծրագիրը: Ժամանակին հեգնանքի առարկայ էին սովետական հնգամեայ կամ տասնամեայ «փլան»ները, որոնք, խորքին մէջ ծրագրումի ձեւեր էին (այսպեղ հարցր անոնց յաջող կամ անյաջող րլլալր չէ): Ո՞ւր են մեր ծրագիրները:

Վարժուեր ենք վերջին վայրկեանին աշխատելու «ոճ»ին, եւ մանր ձեռնարկներու յաջողութիւնները որպէս հաստատում բերելուն, որպէս արդարացում ցուցադրելուն: Թերեւս նման «ոճ» արդիւնաւէտ րլլայ միութեան մր մէկ յանձնախումբին համար: Բայց ամբողջ ազգի մր պարագայի՞ն ...

1965 թուականին Ցեղասպանութեան յիսնամեակր փօնուած էր աւելի մշակութային գետնի վրայ. կարծես յիսնամեակր մենք զմեզ հաստատելու ձեւ մրն էր, ըսելու աշխարհին, որ կա՛նք տակաւին, եւ կա՛նք նաեւ որպէս սկսնեղծագործ ժողովուրդ: Յիսնամեակի առիթով էր, որ գրական թէ արուեստի բազմաթիւ աշխատանքներ կատարուած էին:

Հարիւրամեակր աւելի քաղաքական բնոյթ կր կրէր, արդարօրէն:

Հիմա սակայն մեր ապագան է նժարի վրայ:

Մելինէ Թումանի, պարսկահայ յօդուածագիր մր, «Նիւ Եորք Թայմզ»ի էջերուն իրաւամբ կր գրէ. «Հայերը Ցեղասպանութեան րնթացքին կորսնցուցին ո՛չ միայն ժողովուրդին երկու երրորդն ու ահագին կալուածներ, այլ մանաւանդ «գոյութենական ինքնավստահութիւն» մր (existential confidence)». ըստ յօդուածագիրին, այս կորուստն է եւ Ցեղասպանութեան ճանաչման համար ի գործ դրուած եռանդր, որ խոչընդոտած է յառաջդիմութիւնր որոշ մարզերէ ներս, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ:

Նոյն յօդուածին մէջ հեղինակուհին կը նշէ իր հրապարակած յուշագրութիւնը, ուր հարցադրումի կ՛ենթարկէ մեզ, հայերուս համար որոշ հարցադրումներ ընելու անկարելիութիւնը կամ արգելքը: Այս ալ՝ հարցադրումներ ընելու քաջութիւնը յաղթահարելի խոչընդոտ համարել, ոչ միայն պատասխաններ գտնելու, այլ իւրաքանչիւրիս ներաշխարհին մէջ այս հսկայ, աներեւակայելի եւ անհասկնալի ցաւը հասկնալի դարձնելու համար:

Նման մեծ ցաւ յաղթահարելու միջոցներէն մէկն ալ յուշարձաններ եւ յուշակոթողներ կառուցելէ դադրիլն է: Նախ որ արդէն մեծ թիւով եւ գրեթէ ամէն գաղութի մէջ կանգնեցուած յուշարձաններ ունինք, ապա՝ այդքան նիւթական կարելի է մարդուժ պատրաստելու համար ծախսել: Օրինակ՝ ո՛ւր են մեր թերթերուն - ԲՈԼՈՐ թերթերուն եւ հանդէսներուն - մասնագէտ խմբագիրները ... իւրաքանչիւր գաղութ չի՞ մտածեր գոնէ երկու երիտասարդ ղրկել մասնագիտական ուսման, մեր մամուլին վիճակը բարելաւելու համար, որովհետեւ - ծուռ նստինք շիտակ խօսինք - մեր թերթերը միայն երէց սերունդն է, որ կը շարունակէ կարդալ. երիտասարդները ոչ իսկ կը թերթեն մեր մամուլը: Իսկ համացանցային թերթերուն վիճակը աւելի լաւ չէ, հոն ալ կը փիրէ այնպիսի խառնաշփոթ մը, մանաւանդ լեզուին մէջ, ու երբեմն այնպիսի տափակութիւններ կը ցուցադրուին, որ միայն ափսոսանք կը սղեղծեն ընթերցողին մէջ, որ վերջաւորութեան այդ թերթերուն ալ մեծ մասը կարդացուելէ կը դադրի:

ԾՐԱԳՐՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ ՈՐՈՇՈՒՄ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Ծրագրել, անշո՛ւշտ, բայց չկենալ այդ հանգրուանին, ինչ որ րրած ենք մեր գրեթէ բոլոր ծրագիրներու պարագային, այլ ծրագրել ԵՒ կատարել: Կատարելը սակայն կ՛ենթադրէ նախ որոշումներ կայացնել, յստակ ու երբեմն ոչ-սովորական որոշումներ, ու յետոյ՝ անոնց կատարումը հետապնդել: Ասիկա հսկայ աշխատանք է, բազմաթիւ մարդոց միակամ եւ համերաշխ գործակցութեամբ միայն իրագործելի:

Այստեղ ալ ահագին հարցեր կը դիմագրաւենք.

- Ծրագրողները միշտ չէ, որ որոշումներ կայացնողներ են: Հոսկէ կրնան ծագիլ պարակարծութիւններ, որոնք ոչ միայն կը խոչընդոտեն աշխատանքը, այլ նաեւ կրնան կասեցնել զայն:

- Որոշումներ կայացնողներն ալ, բնականաբար, զանոնք գործադրողները կրնան չըլլալ:

- Երբեմն, դանդաղօրէն ընթացող «ազգային գործ»ի մր պարագային, երբ կր փորձենք խնդրին էութիւնը քննել, կր տեսնենք, որ անձնական համոզումներն ու անհատական հակակրութիւնները մեծ դեր ունին:

Ո՞ւր է մեր գիտակցութիւնը:

ԲԱՅՑ ՊԷՏՔ ՈՒՆԻ՞ՆՔ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ

Հայաստանի մէջ եւ նուազ թիւով Սփիւռքի տարածքին, վերջին հինգ տարիներու ընթացքին կառուցուած են տասնեակ մր նոր եկեղեցիներ, մեծ մասը Երեւանի մէջ, որ կրնայ արդար ժառանգորդը րլլալ Անիին, իր բազմաթիւ եկեղեցիներով: Իսկ Հայաստանի բազմաթիւ եկեղեցիներու եւ վանքերու մասին այսպէս չեմ խօսիր:

Այս օրերուն, երբ պատրաստուած մարդուժի խիստ կարիքը կր զգացուի Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, աւելի արդիւնաւէտ չէ՞ նիւթական ներդրումներուն գո-

ԲԱԳԻՆ

նէ կարեւոր մէկ մասը դնել մարդուժի պատրաստութեան համար, մասնագէտներ պատրաստելու բոլոր մարզերուն մէջ՝ քաղաքականէն մինչեւ մշակութային եւ ծանուցողական:

Կը շարունակենք համագումարներ եւ գիտաժողովներ կազմակերպել, հսկայական գումարներ ծախսելով, երբ այդ նոյն գումարները կարելի պիտի դարձնէին հիմնական խնդիրներու լուծումները, մանաւանդ՝ մարդուժի պատրաստութիւնը:

Եւ անշուշտ կը շարունակենք ազգովին միջամուխ ըլլալ «ազգի գործերուն»՝ քննադատելու կամ կարծիքներ յայտնելու իրաւունք վերապահելով մենք մեզի:

Այստեղ չեմ կրնար չյիշել Ալեքսանդր Սարուխանի մէկ երգիծանկարը, ուր կը նկարագրուի Առաջնորդարանի բակին մէջ նոր տեղադրուած արձանի մը մասին գաղութահայերու կարծիքը.

- Եթէ հակառակ կողմը դրուէր, աւելի լաւ կ՛ըլլար:
- Քիչ մը աջ պէտք էր ըլլար:
- Շատ ցած է, քիչ մը բարձր:
- Շատ լաւ է, տեղը շատ յարմար է, բայց եթէ այն կողմ ըլլար, աւելի լաւ կ՛ըլլար:

Երգիծանկարը խորագրուած է՝ «Ազգային գործ է, ամէն մարդ քիթը պիտի խոթէ»:

Այո՛, յաճախ անտեղի քննադատութիւններ եւ ոչ-գործնական կարծիքներ կը լսուին ամէն կողմէ: Բայց կան նաեւ սրտցաւ մարդիկ, որոնք իրապէս մտահոգ են գալիքով, մեր կացութեամբ, մեր «անառագաստ նաւով»:

ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Բայց կայ գիտակցութիւն մը, որուն բացակայութիւնը հասարակութեան մէջ իր ժխտական արդիւնքները ունենալու կողքին, նաեւ յուսալքումի կրնայ տանիլ նոյն ժողովուրդին զաւակները՝ «խէր չկայ, պիտի չփոխուինք». որովհետեւ անցեալէն ա՛յս կառչածութիւնը եւ այսքա՛ն կառչածութիւնը կը սանձէ յառաջխաղացքը ազգի մը, որուն իմացական կարողութիւնը բնաւ կասկածի չենթարկուիր:

Այս գիտակցութեան բացակայութեան է, որ լեզուն իր նահանջը կ՛ապրի, որովհետեւ գիտակից հայը պիտի հասկնար, թէ ինչո՛ւ ամէնէն զարգացած ոստանին մէջ իսկ պէտք է պահել մայրենին, կամ պիտի հասկնար, թէ գրականութիւնը նաեւ նորութիւններու բացուիլ կը նշանակէ, աւելի՛ն, կը պարտադրէ՝

Որ կարելի է արուեստը դուրս հանել ազգայինի փիրապետութենէն, առանց «դաւաճանելու» ազգին,

Որ գրականութեան, արուեստին ու մշակոյթին կողքին կայ նաեւ գիտութիւն ըսուած բան մը,

Որ պէտք չէ սփիւռքի փարածքին սերունդներու դաստիարակութիւնը ոչ-մասնագէտ փարրերու վստահիլ, որքան ալ «ազգային» ըլլան այդ փարրերը ...

Յստակ է, որ մեր գրեթէ բոլոր հարցերուն փակ գիտակցութիւնն է, կամ աւելի ճշգրիտ ըլլալու համար՝ անոր բացակայութիւնը: Կարելի է հոնկէ սկսիլ, եւ նախ հարց փալ՝ բայց ի՞նչ կը նշանակէ «գիտակցութիւն»: Որովհետեւ գիտակցութիւնը բնաւ պայմանաւոր չէ «ազգային»ով, թէեւ զայն ապահովելուն մէջ է ազգին կամ ազգայինին առողջութիւնը:

Հարիւրամեակէն եկք թող ասիկա ըլլայ գիտակցութեան, ծրագրումի եւ փրամաբանութեան մեր նոր դարաշրջանը:

17 Յունիս 2015
ՀԱԼԷՊ-ԵՐԵՒԱՆ

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

ՔԱՒՆՔ 100-ԱՄԵԱԿ

ԱՄԷՆ ՏԵՂ ՀԱՅ ԿԱՅ, ՈՐԹԱՏՈՒՆԿ, «ԱՆՏՈՒՆԻ»...



Այգիի, որթատունկի եւ «Անտունի»ի մասին...

Ամէն տեղ հայ կայ...

Երբ անցեալ եւ հոգի կը պեղենք: Կը պեղե՞նք:

Հոգիները պեղելը առաքինութիւն է:

Փոխանակ մեռելներով զբաղելու եւ յուզուելու, ողջերով եթէ զբաղած ըլլայինք եւ զբաղէինք...

Հարիւր տարիէ ի վեր հարենահանուածներով եւ անոնց սպառնացող աւերով պագնապեցա՛նք, փոխանակ ցեղասպանութիւն հոլովելու...

Տարիները կ՛անցնին: Անցան: Դէմքեր, հանդիպումներ եւ դիպուածներ հմայող կամ սիրտ ճմլող հեպքեր կը ձգեն:

Հաստաբեսպ ծառի մը կոճղին փորագրուած կամ հնութիւններու պատերուն վրայ գրուած բառ ու փողի պէս՝ որպէսզի չմոռցուինք: Յիշողութիւնը շուարումի կը մատնուի, երբ կը բանայ անցեալ կարծուածի էջերը:

Մոռցուած եւ յանկարծ յայտնուող օրեր: Դաջուած: Տխրեցնող: Քաղցրացած: Անվերադարձ:

Լոյս եւ սպուեր:

Մարսիլիա:

Ջուարթ եւ բազմաթիւ ծագումներով եւ խայտաբղետ բնակչութեամբ քաղաք մր, ուր, կ'րսէին, թէ փողոցր քալողներու փասնէն մէկր հայ էր: Ար հայկական դպրոց չունէր:

Դարերու մէջէն անցած ծովափնեայ քաղաքր կարծէք մնայուն դարձող գաղթականական կայան էր, բազմագոյն, բազմալեզու, բազմապարագ: Միշտ այդպէս եղած ըլլար կարծէք:

Անկարելի համարուող հայկական դպրոցր սրեղծուեցաւ: Բարի կամեցողութիւններ հարկ էր գրնել, երբեմն յաջող եւ երբեմն ձախող փորձեր րնելով:

Կ'ուրախանայի, երբ հեռաւոր քաղաք բնակող հայու մր հեռաձայնով կր բացատրէի դպրոցին սրեղծումր, նպատակր, նշանակութիւնր, ան կ'րնդունէր սան պահել: Այդ հայուն հանդիպելու երբեք առիթ չունեցայ:

Ուրիշներ, արդէն համաշխարհայնացած, չնաշխարհիկ կարծիքներ կր յայտնէին, կ'րսէին, որ *դուրսէն եկողներր թող ղրկեն իրենց զաւակներր, եթէ դպրոցը լաւ ըլլայ, մենք ալ կր ղրկենք:*

Ղեկավարութիւն խաղացող մր, որ ոչ գրականութիւն գիտէր, եւ ոչ ալ պատմութիւն, կ'րսէր, թէ նման նախաձեռնութիւն *սուրի հարուած էր ջուրի մակերեսին պրուաձ,* այսինքն՝ անկարելի, ցնորական, բայց երբ դպրոցր իրականութիւն դարձաւ, որպէս ջոջ՝ ճաշկերոյթի ներկայ եղաւ, պատուոյ հիւր:

Նոյնքան փիլիսոսաւոր եւ գործնապաշտ ուրիշ մր՝ թէ իրենք *ուսումնասիրած էին դպրոցի ծրագիրը, եւ գրած էին, որ ան հաւատաբեր չէր:*

Այս խօսքերր երեւակայական չեն:

Արդէն երեսունհինգ տարիներ անցած են: Յիշողութիւն, որ ջարդ եւ արիւն չէ:

Դպրոցր կար: Հարկ էր զայն պահել: Պաշտպանութեան կարօտ նորածինի պէս:

Բարեկամ մր ըսաւ, որ Պուշ-փի-Ռոն նահանգի Ս. քաղաքր կր բնակի յաջողած հայ մր, Պէյրութի ճեմարանի առաջին սերունդէն: Յաջողած: Ընկերային րնդունուած բարբառով այդ կր նշանակէ հարստացած: Աւելի յարմար անձ կարելի՞ էր գրնել նորաբաց դողդոջ ճեմարանին օժանդակելու համար անոր նեցուկին դիմելու:

Ան ինքնաբերաբար երբեք նորաբաց դպրոցր պիտի չգար, ուստի մենք պէտք էր, որ իրեն երթայինք:

Գացինք երեք հոգիով, հիւրրնկալին ծանօթ բարեկամ մր՝ անոր տարեկից, նախկին դպրեվանեցի մր եւ ես:

Այդ քաղաքին թերեւս միակ հայն էր նախկին ճեմարանականր, բայց անդամ էր քաղաքապետական խորհուրդին, առեւտրականներու դատարանին: Այսինքն՝ չկար հայկական համայնք, որ զայն ներկայացնէր, եւ որ զօրավիգ րլլար: Բայց քաղաքի երեւելիներէն էր:

Կարմիր կտուրներ կային ճամբու եզրին: Ցեղոյ՝ այգիներ: Գիւղի մր ճամբան աւարտեցաւ, եւ մենք մեզ գրանք մեծդի դարպասի մր առջեւ: Ցառաջացած աշնան տերեւներր խշրտացին ինքնաշարժին անիւներուն տակ: Երեկոն արդէն մութ էր: Դարպասր բաց էր: Հիւրրնկալր մեզ կր սպասէր եւ անմիջապէս րնդառաջ եկաւ: Մեր րնկերակիցր, Պ. Վ., ծանօթացումներր րրաւ: Գեղադէմ եւ գեղակազմ անձ մրն էր մեր հիւրրնկալր՝ Խ. Գ., սպիտակած, բայց կայտառ:

Ուրախացնող պպաւորութիւնս եղաւ այն, որ ան նախանձ շարժող մաքուր հայերէն կր խօսէր: Այդ աշխարհներուն մէջ հազուագիւտ երեւոյթ:

Խ. Գ. յաճախած էր Պէյրութի Ճեմարանը: Այդ լաւ էր, քանի որ նորաստեղծ վարժարանը իր դպրոցին կրթսեր քոյրն էր, նոյն գաղափարական ընտանիքին նախաձեռնութիւնը, յանդգնութիւնը:

Ֆրանսայի գինիները դասակարգեր ունին, երբեմն գլխապտոյտ պատճառող գիներով, թէեւ մարդոց դասակարգերու վերացման սկսած եւ չաւարտող պայքար կայ ընկերութեան մէջ: Գինիները կը պահուին մեծ խնամքով: Մեծ ճաշարաններու մէջ յատուկ պատրաստութեամբ անձեր կան, կ'ըսեն՝ sommelier, հայերէն կ'ըսէինք՝ տակառապետ, բայց ալ այդ բառը գործածող չկայ, արդիականացման ճամբուն վրայ օտար բառերը աւելի հարազատ դարձած են, մեր աւազանի անուններուն պէս: Գինին արհեստ-արուեստ-ճարտարարուեստ է, գինեգէտներ կան, oenologues, Հայաստան ալ կան, քանի որ գինեգործութիւնը շատ հին արմատներ ունի մեր երկրին մէջ, Նոյ նահապետէն ի վեր:

Գինեգործարանի ընդարձակ սրահը մտանք: Մեղմօրէն տաքաղեալ դրան ձայներ եւ լոյսերը անհանգստացուցին գերաններու վրայ թառած եւ հոն գիշերող տատրակները, որոնք իրենց տեղը մնացին, իրենց թեւերը քանի մը անգամ թափահարելէ ետք՝ նկատելով, որ իրենց վտանգ չէինք սպառնար:

Տակառներ եւ շիշեր: Արտադրուած գինիի շիշերուն վրայ մեծ դղեակի անուն չկար, գրուած էր Vin de Pays, *շրջանի յատուկ գինի:* Այդ անուններու գործածութիւնը երկրագործութեան յատուկ սպասարկութիւն մը կ'արտօնէ: Սփիւռքի յատուկ դիպուածով մը, այդ տարիներուն, կրկին Պէյրութի Ճեմարանէն երկրագործութիւն ուսանած մը, նախարարութեան պաշտօնեայ, Ա. Գ., այդ անուններու տուչութիւնը կ'ընէր, appellation contrôlée: Պէտք չէ մտածել, թէ ինչպէ՛ս եւ ինչո՛ւ:

Գինիի հոտը խաւ կազմած էր պատերուն վրայ, ռունգ կճելու չափ:

Կը դիտէի եւ կը լսէի ճեմարանականը, որուն մասին պատմած էր մեզ առաջնորդող Պ. Վ.ը: Այս ճեմարանականը Ամերիկա չէր գացած, ինչպէս որ սկսած եւ շարունակուող սովորութիւն է, բայց չես գիտեր ինչպէս ինքզինք գտած էր Թուլուզ, ուր ուսանած էր երկրագործութիւն, ապա՝ Ալժերիա, այգեգործութեամբ զբաղած էր: Խորհի՞նք, որ առհաւական եւ արքետիպերու չգիտակցուած հաւատարմութեամբ՝ հայոց աշխարհին մէջ Նոյի առաջին որթատունկին...

Հիւսիսային Ափրիկէի այդ երկիրները ֆրանսական գաղութներ էին, կ'ըսէին՝ նահանգներ: Տարիներ անցած են եւ ճեմարանականը յաջողած է, հաստատուած: Գործնապաշտ հայր, զգալով գաղութարարութեան աւարտը եւ այդ երկիրներու ազատագրական զարթօնքը, լուծարքի ենթարկած է իր բոլոր ունեցուածքը եւ գործառնութիւնները, փոխադրուած է Ֆրանսա, գնած է հողեր եւ կալուածներ, շարունակած է գինի արտադրել:

Միջոցին, կը պտտէինք պահեստանոցներուն մէջ: Գինիի տակառներ, երկրագործական մեքենաներ: Այդ բոլորը կը յուշէին, որ մեծ գործատէր էր ճեմարանականը: Դպրեվանքեցին եւ ես, թափառելով հանդերձ լաւ չլուսաւորուած մառաններու եւ պահեստանոցներու մէջ, քիչ մը գաղտագողի, կը փնտռէինք հայկական հետք մը, պատահական եւ մոռցուած հայկական թերթ մը, հայերէն գիրք մը, մեր այնքան սիրած բազմատեսակ օրացոյցներէն մէկը, նոյնիսկ հին, Արարատի սովորական կարօտի պատկեր մը:

Ոչ մէկ հայկական հետք:

Ճեմարանականը յայտնեց, որ կալուածներ ունէր Քամարկի մէջ, շէնքեր եւ հողամասեր՝ քաղաքին մէջ:

Մեր արշաւր աւարտեցաւ եւ հրաւիր-

ուեցանք կալուածին ծայրամասը գտնուող բնակարանը, ուր մեզ կը սպասէին փանտիրուհին, որ հայուհի չէր, աղջիկները եւ թոռները, զաւակը, որոնց կեանքի ընկերները հայ չէին: Չեմ յիշեր քանի հոգի էին:

Հայերէնը փոխարինուեցաւ ֆրանսերէնով: Զայնապնակ փոխելու պէս: Արարի մը վարագոյրը իջած էր, նոր արար մը կը սկսէր:

Այցելուներս, երեքով, խօսեցանք դպրոցի մասին, ուր հայերէն ալ պիտի սորվէին փղաքը: Այդ օրերուն թափ առած էին Հայ դպրի շուրջ նախաձեռնութիւնները, խօսեցանք այդ մասին: Նաեւ՝ հայ մշակոյթի եւ բռնագրաւուած Հայաստանի: Նիւթերը անպակաս էին: Ոմանք կ'երազէին, ուրիշներ կը շափախօսէին, ուրիշներ ալ կը նախաձեռնէին:

Ճեմարանականին աղջիկները եւ զաւակը երբեմն հարցումներ կ'ուղղէին, քիչ մը հեգաքրքրութեան համար, քիչ մըն ալ հաւանօրէն քաղաքավարութեան:

Ի վերջոյ, հասաւ ճշմարտութեան պահը:

Զաւակը եւ աղջիկները զարմացած էին մեր պատմածներէն, եւ լսեցի հեգեւեալ արտայայտութիւնը.

- Մեր հայրը երբեք մեզի չէ խօսած այս բոլոր հարցերուն մասին:

Վահրամ Մավեանի «*Ամէն տեղ հայ կայ*»-ն յիշեցի: Ինչպէս հոս:

Հոս ալ հայ մը կար, եւ կային միւսները, զորս ինչպէ՞ս պէտք էր անուանէի, չէի գիտեր:

Կար հայ մը՝ Լեւոն Շանթի եւ Աղբալեանի երազներու բովէն անցած, որ ժառանգած էր երգեցիկ հայերէն, առանց զայն կտակելու: Մտածեցի, որ այս հայը չէ՞ր ունեցած կարօտի զգացում, իր երդիքին տակ հայերէն լսելու ցանկութիւն, չէ՞ր փորձուած հայերէն Աստուածաշունչ մատեան մը կամ գրաբար Նարեկ մը պահել բարձին տակ, ինչպէս որ կ'ընէին հայերէն չգիտցող թրքախօս եւ անուս մամիկները, որոնց շարքին թերեւս նաեւ իր մամիկը:

Կը դիտէի լայնատարած հիւրասրահը, հոն գտնուող բիւրեղապակեայ ջահերը, ծաղկամանները, ճոխ վարագոյրները: Այդ պահուն յիշեցի ֆրանսացի բարեկամ լրագրողի մը հեգեւեալ խօսքը, ըստ որուն, Ֆրանսան կը դիմանայ ամէն կարգի օտար ազդեցութիւններու «իր մշակոյթի ձուլման կարողութեամբ», (la puissance assimilatrice de la culture française):

Ճեմարանականէն ի՛նչ պիտի մնար:

Ան ոչ իսկ մէկ սերունդ դիմացած էր «ֆրանսական մշակոյթի ձուլման կարողութեան»:

Երբ կը մեկնէինք, դարպասին առջեւ կրկին դիտեցի հայ մարդու ձեռներէցութեան արդիւնքը, երեւակայեցի այդ շրջափակէն անդին ինչ որ կար... Եթէ այս պիտի ըլլար արդիւնքը, ինչո՛ւ պայքարած էին մարդիկ, ինչո՛ւ կը պայքարէին:

Վերջին պահուն ճեմարանականը յայտնեց, որ դպրոցին ի նպաստ ըլլալիք ճաշկերոյթին ներկայ պիտի չըլլար, բայց կը բերէր գինիները: Այդքա՜ն:

Եւ ամէն տարի առատօրէն գինի շարունակեց մատակարարել: Հաւանօրէն երբ հայու հանդիպեցաւ իր պահած գեղեցիկ հայերէնով խօսեցաւ: Թերեւս հիմա ալ կը խօսի, կարապի երգի պէս:

Իր քաղաքի թերթերուն մէջ իր անուան կը հանդիպէի, կը պահէր ԵԱՆը, հաւանօրէն ընտանիքի անդամներն ալ պահած են այդ ԵԱՆը:

Պիտի ըսե՞նք, որ ամէն տեղ հայ կայ, ԵԱՆ-ԵԱՆ:

Յաճախ յայտարարուած տասը կամ տասնհինգ միլիոնին մէջ արձանագրուա՞ծ են այս բոլոր ԵԱՆ-ԵԱՆները: Մէկը դեռ հայերէն կը խօսէր, մենախօսութեան պէս:

«Անդունի», Գալստեան Վերիքնազ

Իսկ ո՞ւր պէտք է արձանագրել հին եւ նոր ԵԱՆ-ԵԱՆերը, որոնք պան մէջ արաբերէն, ֆրանսերէն եւ հիմա մանաւանդ անգլերէն կը խօսին, Անգլիայէն կամ Ամերիկայէն հազարաւոր մղոններ հեռու ժողով կը գումարեն անգլերէնով, ափենագրութիւն կը պահեն անգլերէնով... իսկ եթէ հայերէն ճառ պիտի խօսին այդ գրել կու պան *լատինատառ հայերէնով,* այս ալ արդէն նորահայերէնի յառաջդիմութիւնն է, չվարանելով ըսելու, որ նախագահներն ալ իրենց «գրիչ»ները կամ «նեկր»ները ունին:

Գ'րսեն՝ լկտի սնափառութեամբ, ամբոխ գոհացնելու կամ քնացնելու ճապկումներու ծառայելով:

Ամէն տեղ հայեր կային, հիմա կրնանք ըսել, թէ *ամէն տեղ ծագումով հայեր կան,* իսկ այդ ծագումէն հեռզհեռէ պիտի մնայ այդ ԵԱՆը, թէեւ այդ անգամ որպէս աւելորդ բեռ ջնջողողներ ալ կան:

Հայկական սփիւռքներէն դէպի յաւերժութիւն բարեւ Վահրամ Մավեանին, բոլոր հայ մտաւորականներուն պէս ազնիւ եւ բարեմիտ հայուն, որ *«ամէն տեղ հայ կայ»*ով կը հրճուէր... Տեւելու եւ փոկալու յոյս եւ կրակ ունէր: Ունէին:

Եթէ համացանցը միւս աշխարհին կապուած ըլլար, այս բոլորը իրեն կը ղրկէի ել-նամակով, հասկնալի ըլլալու համար՝ ի-մէյլով: Թերեւս այդ հրաշքն ալ օր մը կ'իրականանայ: Այս մէկ հրաշքին աւելի դիւրին կր հաւատանք, որովհետեւ արդիական է եւ գիտական:

Ոչ յոռետեսութիւն եւ ոչ լաւատեսութիւն: Նոր օրերու նոր հաւատք: Չհաւատաք անգամ ձեւացուցէք, որպէսզի արդիական ըլլաք, չխրտչեցնէք, չխափանէք փառասիրութիւններու բեմերու լոյսերը եւ բարձրախօսներու աղմուկը: Դրական եղէք:

Կրկնե՛նք:

Ամէն տեղ հայեր կային, հիմա կրնանք ըսել, թէ ամէն տեղ ծագումով հայեր կան, իսկ այդ ծագումէն հեռզհեռէ պիտի մնայ այդ ԵԱՆը, թէեւ այդ անգամ որպէս աւելորդ բեռ ջնջողներ եղան եւ պիտի ըլլան, աւազանի անուններդ գեղծելէ ետք:

ԲԱԳԻՆ

Երբ կր վերադառնայինք, անձրեւր կր մափնահարէր ինքնաշարժի ծածկին վրայ, փուներու լոյսերր մարած էին, կր պեսնէինք միայն լուսաւորուած սեւ կուպրապատ ճամբան: Ոչ ոք կր խօսէր: Կարծէք հոգեհանգիստէ կր վերադառնայինք:

Ճեմարանականի պահեստանոցներուն եւ փան մէջ ոչ Նարեկ կար, ոչ Արարատ:

Ժառանգները կային. «**Մեր հայրր երբեք մեզի չէ խօսած այս բոլոր հարցերուն մասին**»:

Հայրր, ինչ որ սպացած էր Լեւոն Շանթէն եւ Աղբալեանէն, որպէս հոգիի ժառանգութիւն չէր փոխանցած:

Ոչ առաջին եւ ոչ վերջին հայրեր եւ մայրեր են այս բոլոր հարցերուն մասին չխօսող...

Ճամբու լռութեան մէջ, դպրեվանեցին երգելու պէս մռմռաց մեր սրտի խոց «Անփունի»ն.

Սիրտս նման է էն փլած փներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է սներ,
Բուն պիտի դնեն մէջ վայրի հաւքեր:
Երթամ՝ ձի թալեմ էն ելման գեղեր,
Ըլնիմ ձկներու ձագերացն կեր:
Ա՛յ, փօ լա՛ճ փնաւեր:

Սեւ ծով մր եմ փեսէ, սիպտակն էր բոլոր,
Ալին կր զարնէր, չէր խառնի յիրոր:
Էն ո՞րն է փեսէ մէկ ծովն երկթաւոր,
Անփունի սիրտն է պղտոր ու մոլոր:
Ա՛խ, իսկի մի՛ լնիք սրտիկ սեւաւոր:
Ա՛յ, փօ լա՛ճ փնաւեր:

Հայու բնակարաններ, որոնց գերաններր կանգուն են:

Հայու փներ, որոնք այդպէս ալ չեն...

Երեւացին մեծ քաղաքի լոյսերր եւ ճամբու ձախին մութին մէջ պարզուող Միջերկրականի անսահմանութիւնր:

Ճեմարանականը չէ խօսած Կոմիփասի եւ Շահմուրապեանի մասին...

Եւ մտածեցի. գեղեցիկ շէնքեր, բայց *փլած փներ*... ուր «Անփունի» չ'երգուիր: Անոնց բնակիչներր օր մր կրնան Հայասփան գացող-եկող զբօսաշրջիկներ դլլալ, ինչպէս կ'երթան Թայլանդ, Հոնոլուլու կամ Ալասքա:

Հայրենադարձութիւն եւ զգացական զբօսաշրջութիւն հասարակաց ոչինչ ունին:

Եթէ բարձրախօսներր լռեցնէինք, ամպագորգոռ եւ Բաբելոնէն սպացուած բոլոր լեզուներով ճառերու փոխարէն Շահմուրապեանի հետ «Անփունի» երգէինք, *թերեւս ծագումներր կեանք կ'ըլլային*... եւ նորերր չէին ըսեր.

«Մեր հայրր երբեք մեզի չէ խօսած այս բոլոր հարցերուն մասին»:

Այդ հայ հայրր երբեք չէ սրսկած նորերու հոգիին մէջ՝ որ **«Անփունի սիրտն է պղտոր ու մոլոր...»**

Բեւեռային աշխարհներու մէջ արմաւենի փնկելու փորձ ըրած էր եւ «այդ բաներուն մասին չէր խօսած»...

Եւ մտածեցի, որ ամեակներ եւ փօնախմբութիւններու յարդի բոցր եւ աղմուկր ինչպէս մեզի պիփի բերեն ճեմարանականը, որ Թունուզ գացեր էր, Ալժերիա գացեր էր, Քամարկէն հողեր գնած է, ֆրանսացիի պէս յաջողած է, բայց իր զաւակներուն «այդ բաներուն մասին չէր խօսած»:

Ամէն փեղ եղած հայերուն փիպա՞րն էր, թէ՞ բացառութիւնր...

Հայ դպրոց կր սփեղծուէր...

Երբ կր վերադառնայինք ռոմանթիկ դպրեվանեցին «Անփունի» երգեց...

Նուազի-Լը Կրան, Ֆրանսա

ԱՐՄԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԿՈՏՐՈՒԱԾ ԱՊԱԿԻՆԵՐ

- Սա ի՞նչ է,- ճղճղաց պուլղարուհին՝ նայելով դիմացը դրուած ափսէին:

- Տոլմա է, փիկի՛ն:

- Եւ սրան դուք տո՞լմա էք անուանում՝ այս ջրախառն մասսայի՞ն,- շարունակեց գոռգոռալ պուլղարուհին՝ անգլերէն բառերով պայթեցնելով հայկական ճաշարանի «*տուրիստաֆիկացուած*» մթնոլորտը:

Մատուցողը մի քայլ յետ գնաց, բայց պատասխանատուութիւնից խուսափել հնարաւոր չէր:

- Այո՛, փիկի՛ն, տոլմա է՝ մեր ազգային կերակուրներից է: Դուք փորձէք եւ կը համոզուէք՝ շատ համեղ է:

Պուլղարուհին նայեց մատուցողին, փնչաց ու ձեռքն առաւ պատառաքաղը:

Մատուցողը, լարուած լռութիւն դարձած, սպասում էր:

- Թո՛ւ, ո՞նց էք յաջողացրել այս համեղ կերակուրն այսպէս փչացնել, հը՞, շատ հետաքրքիր է: Մի օր Վառնա կը գաք, կը հիւրասիրեմ, կ՛իմանաք հայկական տոլման ինչ է: Գոնէ սխտորամածուն բերէիք հետը:

- Դուք սփիւռքահա՞յ էք, փիկի՛ն:

- Ո՛չ, ես բնիկ պուլղարուհի եմ: Ե՞ւ, ի՞նչ է փոխւում:

- Ոչինչ, փիկի՛ն, կը ներէք, եթէ ինչ-որ բան ձեր սրտով չէ:

- Կանչէք վարիչը:

Մատուցողի մաշկը ձգուել էր, դէմքը երկարել: Այլ ելք չկար. պատկառելի փիկինը կարող էր աւելի զայրանալ:

Մի քանի րոպէ յետոյ երեւացին ճաշարանի՝ լայն ժպիտով վարիչը, եւ նրան ուղեկցող մատուցողը՝ սկուտեղի վրայ դրուած գինին ու գաւաթները ձեռքին:

Տիկնոջ հետ բառ փոխանակել չէր սպացւում:

Վարիչն անցաւ ծրագրի երկրորդ մասին:

- Ցարգելի՛ փիկին, մենք հիմա ձեզ երեսուն տարուայ հնեցմամբ հայկական գինի կը հիւրասիրենք: Հաւատացէ՛ք, որ անչա՛փ գոհ կը մնաք:

- Ո՛չ, շնորհակալութիւն: Տուէ՛ք հաշիւը:

Վարիչի մասնագիտական հմտութիւնները ոչինչ էին կնոջ անվրդովութեան համեմատութեամբ:

- Տոմա՛, վե՛ր կաց, գնում ենք:

Հայեացքներն ուղղուեցին դէպի երիտասարդը, ում մինչ այդ չէին էլ նկատել:

Տոման հանգիստ վեր կացաւ, գլուխը թեթեւ խոնարհեց եւ հետեւեց կնոջը:

- Պառաւին տե՛ս, յետեւից գցած ջահել սիրեկանին տե՛ս,- նետեց վարիչը:

- Հա՛-հա՛-հա՛,- հռհռաց մատուցողը, որ դեռ կանգնած էր սեղանի կողքին:

ԲԱԳԻՆ

Կինր թեքուեց, ծուռ նայեց երկուսին էլ եւ, անգլերէն շպրտելով. «Յիմա՛ր անդաստիարակներ, գիտեն, թէ միայն իրենք են հայերէն հասկանում», թեւանցուկ արեց երիտասարդին ու դուրս եկաւ:

* * *

Հանդիսութիւնների մեծ դահլիճը շողում էր լոյսերի առատութիւնից, որոնք արտաձգւում էին այնտեղ շարունակ պտտուող հայ եւ արտասահմանցի մեծահարուստ գործատէրերի ու փիրուհիների արդուզարդի վրայ՝ շլացնելով լուսաճառագայթների խաղով:

«Շատ լաւ է, երկու ժամում երկու յաջող գործարքի պայմանաւորուածութիւն, ապրե՛ս, Միրրելկա»,- քթի տակ ինքնագոհ ժպտալով՝ մտածում էր «Վառնա տուրիզմ» ընկերութեան սեփականատէր պուլղարուհին:

- Վեներան երկնքից իջել եւ մենա՞կ է մնացել, այս ի՞նչ բան է, թոյլ չեմ տայ մտածելու՝ հայ տղամարդիկ այդքան անուշադիր են, գեղեցկուհի՛,- ասաց մի երիտասարդ՝ քոնեակի երկու գաւաթ ձեռքին մօտենալով Միրրելային:

- Գեղեցկութիւնը տրուած շնորհ է, մարդկանց մասին կարծիք կազմելիս դրան վերջում անդրադարձիր, ջահե՛լ,- պուլղարուհին քմծիծաղ տուեց, կում արեց երիտասարդի բերած քոնեակից ու ցածրաձայն շարունակեց,- ինձ մենակ երբեք չեն թողնում, եթէ ինքս չուզեմ մենակ մնալ:

- Ըրր, ոնց հասկացայ խանգարում եմ, այո՞,- երիտասարդը շփոթուած էր:

- Ճիշդ էք հասկացել,- լայն ժպտալով պատասխանեց կինը:

- Մենակ թափովների հետ ես պալիսառնում, հա՞, պառաւ,- արդէն հայերէն փնթփնթալով ասաց ջահել տղամարդն ու հեռացաւ:

- Չէ՛, բա, քեզ նման սկսնակների, որ հարուստ պառաւ (ինձնից ի՞նչ պառաւ, նեղացկո՛ղ յիմար) են ուզում գտնել ու առաջ գնալ,- իր մայրենի լեզուով աւելացրեց պուլղարուհին, բայց երիտասարդն այդ լեզուն ոչ միայն չէր կարողանայ հասկանալ, այլեւ արդէն բաւական հեռացել էր:

Միրրելայի աչքի առաջ նորից յառնեց ցաւոտ պատկերը, որ նրան երբեք հանգիստ չէր տալիս՝ կիսամութը, կիսասովը, բթացած ուղեղը, բթացած զգայարանները, երեք տղամարդիկ...

«Զզուելի՛ նկուղ, էլի միտքս քեզնո՞վ արեցիր, աաաայ, ե՞րբ եմ վերջապէս մոռանալու»:

* * *

- Բայց ինչո՞ւ են հայ հարուստները միշտ ուռած փորերով, իրենց առողջութեան մասին չեն մտածում, ի՞նչ է,- պուլղարերէնով բարձր ասաց Միրրելան՝ տեսնելով իրեն մօտեցողին:

- Ի՞նչ էիք ասում, թագուհի՛,- անգլերէնով հարցրեց վերջինս:

- Ասում էի, որ շատ լաւ մթնոլորտ է, շատ եմ սիրում Հայաստանն ու հայերին, մանաւանդ՝ գործարար,- վերջին բառերը ձայնի խորամանկ ելեւէջներով քաղցրացընելով՝ անգլերէնով պատասխանեց կինը:

- Բա մենք ձեզ ո՞նց ենք սիրում՝ ամառներն ու ձեր ծովափերը վկայ,- հռհռաց տղամարդը,- բայց ես արդէն շտապում եմ, գո՞ւցէ գնանք:

- Մէկ րոպէից, ես մի քանի կարգադրութիւն անեմ օգնականիս ու գնանք:

Միրրելան շտապ քայլերով մօտեցաւ սեղանների մօտ միայնակ կանգնած Տոմային:

- Տոմա՛, սիրելի՛ս, ես Յարութիւնեանի հետ եմ գնալու, գիշերն ինձ չսպասես: Լա՛ւ, մի՛ նեղացիր, հոգի՛ս, դէ, գիտես, որ

պէտք է, դէ՛, առաջին անգամ չէ, սովորած պիտի լինէիր արդէն, գիտես, որ պարտքի տակ չեմ մնայ:

- Լաւ, կեա՛նքս, ինչպէս ասես:

- Դէ, չմոռանաս, վաղն առաւօտեան վարորդին կ'ասես, որ եօթի կողմերը գայ, գնալու ենք Սեւանայ կղզի, ես մինչ այդ մեր համարում կը լինեմ:

- Եղաւ, սիրելի՛ս:

Միրրելան մի քանի րոպէից արդէն լքեց սրահը, շատ չանցած՝ նրան միացաւ Յարութիւնեանը:

Կիսամութը, կիսասովը, բթացած ուղեղը, բթացած զգայարանները, երեք փղամարդիկ...

....

Այն ե՛րբ էր...

Վառնայում փօթ ամառ էր:

Փոքր աշխատասենեակում եռուզեռ էր: Սեղաններին արկղերն էին դրուած, այլեւս տեղ չկար, իսկ դեռ հինգ արկղ էլ պիտի ներս բերէին:

- Բորի՛ս, ե՛կ, մենք սկսենք արկղերը նկուղ տանել, մինչ Կոնստանտինը մնացածը կը բերեն: Անտոն, Դանիէլ, առա՛ջ ընկէք,- ասաց Կարէնը:

- Կարծում եմ՝ ես էլ կարող եմ ձեզ օգնել,- ուրախ ժպտալով առաջ եկաւ Միրրելան,- տեսէ՛ք, այս մի արկղը շատ թեթեւ է, արկղ չէ, արկղիկ է, ա՛յ, տե՛ս, Կարէ՛ն:

Կարէնը մռայլուած շուռ եկաւ: Կնոջ դէմքը լողափին փայլող արեւի պէս իրեն էր նայում: Ժպիտի մէջ կայծոռիկներ էին թռվռում:

- Միրրելկա՛, գա՛նձս, դու կարող ես սենեակում մնալ, մենք արագ յետ կը գանք:

- Իսկ եթէ ես շա՛տ եմ ուզում գալ:

Միրրելան ու Կարէնը երկու ամիս առաջ էին ամուսնացել: Երեք տարի ընկերութիւն էին արել, բայց հանդիպումները կախուած էին Երեւան-Վառնա թռիչքի ու Կարէնի գրպանի ընձեռած հնարաւորութիւններից: Զոյգի ցանկութիւնը Վառնայում Կարէնին աշխատանք գտնելն էր: Կէս տարի առաջ էր, որ Կարէնի հօրաքրոջ որդին «Վառնա տուրիզմ» ընկերութեան համակարգչային մասնագէտի թափուր տեղի մասին էր տեղեկացրել, շատ չանցած Կարէնն արդէն իր աշխատանքն ունէր:

Այդ ժամանակ էր, որ երիտասարդը Սեւանից տեղափոխուեց Վառնա, բնակարան վարձեց ու մի քանի ամիս յետոյ Կարէնի ու Միրրելայի յարաբերութիւններն ստացան պաշտօնական բնոյթ, օծուեցին ծիսական կարգերով, օրհնանքներով ու բարեմաղթանքներով: Նրանք երջանիկ էին:

Միրրելան նոր էր ստացել տնտեսագէտի որակաւորում, սակայն յարմար աշխատանք չէր գտնում: Կարէնին թւում էր, որ կինը չի էլ փնտռում, որովհետեւ նրա ուշքն ու միտքը ամէն վայրկեան ու բոլոր հնարաւոր տեղերում ամուսնու կողքին լինելն էր:

- Կարէ՛ն, մեր անցեալի բաց դարակներն ամէն վայրկեան լցնել է պէտք: Գիտե՞ս՝ կ'ուզէի մեզ իրար կապէին, որ ամէն տեղ միասին լինէինք:

Կարէնը նման պահերին անձայն ժպտում ու համբուրում էր կնոջ դունչը:

- Երդւում եմ, որ շատ էք ձգձգում, տղե՛րք: Կարէ՛ն, գնացինք, Անտոնենք հիմա յետ կը գան,- իրար վրայ դրուած երկու արկղ վերցնելով՝ ասաց Բորիսը:

- Ըհը՛, գալիս ենք, առա՛ջ ընկիր:

- Իսկ ե՞ս, գայլո՛ւկս:

Միրրելան մեղաւոր կատուի հայեացքով նայում էր ամուսնուն:

- Դու էլ արի: Բայց զգոյշ, քեզ չվնասես:

Կայծոռիկները նորից լցրին սենեակն իրենց չարաճճի լոյսով: Չորսով վերելակ նստեցին: Ինը յարկը ժամանակային մի քանի վայրկեան դարձնելուց յետոյ նրանք մօտենում էին նկուղին: Տղաների

կապակներին վերջ չկար, իսկ Միրրելան անյագ քրքջում էր:

Անտոնն ու Դանիէլը դեռ նկուղում էին: Նրանք մի անկիւնում յարմար տեղ էին գտել ու շարել արկղերը: Վերջնական դասաւորութեանն էին նայում, երբ Կարէնենք մօտեցան: Դեռ չէին հասել անկիւնին, երբ... տարածութիւնն յանկարծ յարաբերական դարձաւ, հոսքագծի վրայ գլորուողների պէս երիտասարդները աջուձախ էին հրւում՝ կորցրած յենման կէտը:

Քառսր բացել էր դռներն ու ամէն ինչ ձուլում էր իրեն:

...

Ականջներում աղմուկի, հարա-հրոցի պարկեր էին կուտակուել: Գլխում ահաւոր բզզոց էր, բայց ամէն կերպ ձգտում էր բացել աչքերը:

«Վա՛յ, մամա՛ ջան, այս ինչ է եղել, մարմինս ինձ չի ենթարկւում»:

Միրրելան հազիւ իրարից պոկեց մագնիսի պէս ձգտող կոպերը:

«Այս ինչ յիմար երազ է: Էլի երազից երազ եմ ընկել»:

Ծանրացած մտքերն ու կոպերը ճահճի պէս քաշում էին նրան: Չզգաց՝ ինչպէս անջատուեց:

...

Ծանր բեռկիրները փլուել էին, յենուել երկաթեայ դրանը, դուռը ճկուել, ծռմռուել էր: Նկուղի օդը խեղդող էր. փոշու բարձիկները թիկնել էին սիւներին, իրերին, բերանքս ի վայր րնկած մարդկանց մարմիններին:

Աւազի ու կրի հոսած վտակների վրայ ուշագնաց րնկել էին երեք երիտասարդներ, մի քիչ ձախ՝ կրակոյտի խառը զանգուածից զոյգ ոտքեր էին դուրս ցցուել, մարմինը չէր երեւում, մի փոքր այն կողմ՝ անկիւնում, անկանոն շպրտուած արկղերի վրայ երեւում էին եւս երկու երիտասարդների՝ կողքի րնկած մարմիններ:

Թէ նկուղում դեռ ինչքան լռութիւնը թագակրի իր դերի մէջ կը լինէր, դժուար է ասել, եթէ այդ պահին դրան յետեւից ահաւոր դղրդիւնի ձայնը չցնցէր գետնին ուշագնաց րնկած երիտասարդներին: Առաջին բանը, որ զգացին, ծանրացած մարմինների անկառավարելիութեան փաստն էր:

- Կարէ՛ն, գայլո՛ւկս, ո՞ւր ես, - Միրրելայի ձայնը խեղդուած էր:

Արկղերի մօտ թփթփոց լսուեց:

- Երդւում եմ, չեմ հասկանում՝ ինչ եղաւ,- փնթփնթում էր Բորիսը:

- Միրկա՛, ո՞նց ես, հոյ չե՞ս վնասուել, ասա՛, ո՞նց ես,- Կարէնը յենուել էր արկղերին ու փորձում էր դէպի կինը շարժուել:

- Գայլո՛ւկս, չգիտեմ, թէ ոնց եմ, դու քեզնից ասա, դու ո՞նց ես, հոյ վիրաւոր չե՞ս:

- Չէ՛, նորմալ եմ:

Կարէնը մօտեցաւ Միրրելային, ով արդէն նստել էր՝ յենուելով փոշեկոյտին:

Նրանք գրկել էին իրար ու լուռ արտասւում էին:

Բորիսը Անտոնին ու Դանիէլին օգնեց ոտքի կանգնելու: Անտոնի ձախ քունքը բացուել էր, արիւնը նեղ վտակով հոսում էր: Դանիէլի աջ ձեռքի մկաններն էին կծկուել, ձախով անրնդմէջ շփում էր:

- Տղե՛րք, բա Կոնսպանտն ո՞ւր է, երդւում եմ՝ ինքը հասցրել է նկուղից դուրս թռնել,- ասաց Բորիսը:

Բորիսի խօսքերին ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց. ամէն մէկն իր գործով էր զբաղուած:

- Տղե՛րք, ոնց հասկացայ, երկրաշարժի միջով անցանք,- ժպտալով ասաց Դանիէլը:

- Լաւ է՝ մի քանի քերծուածքով պրծանք, լուրջ բան չեղաւ: Կարէ՛ն, դուք էլ լաւ էք, չէ՞:

- Հա՛, Դանիէլ ջան, նորմալ ենք, խնդիր չկայ: Տե՛ս՝ այդտեղ ջուր, հիւթ, նման բան



«Սեւ Վարդը», Անապոլի Աւետեան -պղինձ, դրուագում

չկա՛յ, բերես՝ խմենք, ուշքի գանք:

- Աչքիս վրայ, հիմա նայեմ, շէ՛ֆ,- կապակի փուեց Դանիէլը:

Անփոնն զբաղուած էր վէրքը դարմանելով: Բորիսն օգնում էր րնկերոջը:

Մի ժամ յետոյ նրանք բաւարար չափով ուշքի էին եկել, զրուցում էին՝ ուտելով Դանիէլի գրած հացի եւ պանրի բրդուճներն ու խմելով գոյնզգոյն փաթեթներով լիմոնապտները:

....

Տիկ-փակային ընթացքը սղոցելով անցնում էր նկուղում փակուած մարդկանց նեարդերի վրայով:

- Ժամանակն է մեր դրութիւնն ուսումնասիրելու, փղե՛րք, վե՛ր կացէք, առաջ րնկէք, տեսնենք՝ ոնց բացենք դուռը:

- Հա՛, դէ, ձեզ տեսնեմ, թա՛փ փուէք ձեզ, արջե՛ր,- հռհռաց Անփոնը:

Փոշու քուլաներ, դէս ու դէն րնկած առարկաներ, փլուած բեկորների կոյտեր, խուլ աղմուկ ուղեղում ու ականջներում եւ... երկաթեայ ճկուած դուռ, որն անհնար է բացել:

Տղաների նեարդերը փեղի էին տուել:

- Տղե՛րք, եկէ՛ք մի հաստ բան գտնենք, փորձենք էս նեղ պատը խփելով՝ ջարդել,- առաջարկեց Դանիէլը՝ պրորելով ձեռքը.

յիշել էր ցաւր, չէր ուզի մկանները գործի դնել, բայց առաջարկելու մէջ իմաստ էր տեսնում. թող ուրիշներն անեն:

- Երդւում եմ, դու յետեւովդ ես մտածում, Դանիէլ, թէ չէ ուղեղդ չի՞ յուշում՝ կարող է էդ պապի էն կողմում աւելի վտանգաւոր է, քան՝ էս:

- Ի՞նչ ես առաջարկում, գոմշակաշի՛:

- Նստենք ու սպասենք դրսի օգնութեանը,- հանգիստ ասաց Կարէնը:

- Դէ՛, գնա՛, դու էլ, դի՛նջ, կնկադ գրկիր ու սպասիր, ես դուրս եմ գալու, կեանքո՞ւմս եմ էսքան փակ տեղում մնացել: Արա՛, դուք չէ՞ք հասկանում՝ ես խեղդւում եմ:

- Դու խեղդւում ես, մենք էլ *սառնապում* հանգստանում ենք, էլի՛,- ձեռքը զայրոյթով թափ տուեց Անտոնը:

Դանիէլը կպաղած յարձակուեց երկուսի վրայ: Հրմշտկոց սկսուեց: Կարէնը խառնուեց, Միրրելան նրան միացաւ:

- Միրկա՛, հանգիստ տե՛ղդ նստիր:

Կարէնը մի կողմից փորձում էր կռուողներին բաժանել, միւս կողմից՝ հեռու պահել կնոջը:

Միրրելան, միեւնոյն է, առաջ էր խցկւում: Հարա հրոցից նրան էլ բաժին հասաւ: Աղջիկը յետ-յետ գնաց, կորցրեց հաւասարակշռութիւնը եւ ընկաւ փոշեկոյտի վրայ:

....

Ոտքերր, մազերր, ոտքերի մազերր, ոտքերի մաշկր, սառնութիւնը, օձային սառնութիւնր, մեռելային սառնութիւնր, մեռելայի՞ն...իսկ ինքր երբեւէ զգացե՞լ էր դա, տեսե՞լ էր...

Ձեռքերր թրթռում էին սրտի զարկերին համաչափ:

- Աաաաա՛:

Թէ ճիչը ոնց թռաւ կոկորդից, ու մի քանի վայրկեան բոլորր քարացան, չէր յիշում:

Ջոյգ ոտքեր էին յայտնուել իր ձեռքերի մէջ, դաղում էին իրենց սառնութեամբ, բայց ոնց որ սոսինձոտ լինէին:

Կարէ՛նր, գայլո՛ւկր, գրկել էր, քաշում էր, փակում էր աչքերր, սեղմում էր ուսին:

Չէ՛, ինչ սեղմել, տեսլիքի պէս մագնիսացած աչքերով նայում էր փոշեկոյտից դուրս երեւացող զոյգ ոտքերին, ամուսնու ընկերներին, որ բռնել, քաշում էին այդ ոտքերր, քիչ-քիչ կերպաւորուող մարմնին, դէմքին, մազերին, չռուած աչքերին՝ Կոնսպանտին...

...

Արեւի բարի լոյսն անցնում էր նկուղի գերիների կողքով, նրանց ոչինչ չէր յուշում ժամանակի ու նկուղից դուրս գոյութեան որեւէ կերպի մասին:

«Հիմա պիտի փրկարարները արդէն եկած լինէին, ախր, ո՞ւր են, մի ձայնն ինչ է, դրսից չի լսւում»,- վրդովւում էր Կարէնը:

«Երդւում եմ, աշխարհի վերջն է եղել: Մենք մարդկութեան վերջին հիւլէնե՛րն ենք (Բորիսր կեղծ վերամբարձ ոճով երկարացնում էր բառր), ձեզ պինդ պահէք, տղե՛րք»:

Ասում էր, հետն էլ ձեռքով խփում պատերն, նեղւում մութուլոյսի մէջ անտեղեակ ու փակուած լինելուց:

Հացի ու ջրի պաշարներր շատ էին նուազել, սկսել էին տնտեսելով վերաբերուել իրենց գոյութեան միջոցներին:

Հանւում, գումարւում, էլի գումարւում ու բազմապատկւում էին սիրտ սեղմող հանգամանքներր: Երիտասարդներր ամէն մի անկարեւոր բանից բորբոքւում ու վիճում էին: Լաւագոյն պարբերակր քնելն էր, շա՛տ քնելր, մինչեւ աչքերր բացէին ու լոյսր տեսնէին ոչ թէ պատերի մի քանի փոքր ճեղքերից, այլ ամբողջութեամբ:

Միրրելան իրեն հանգիստ էր պահում, չնայած անցանկալի դրութեանր՝ Կարէնն իր հետ էր, իրեն կապուած. էլ ի՞նչ էր

պէտք: Կարող էին ժամերով իրար լուռ գրկել ու զգալ երջանիկ:

- Արա՛ Կարէն, հերիք չեղա՞ւ՝ անկիւններում լկստուէք:

- Թէ՛ դուք մարդ էք, մենք այստեղ՝ հէչ, էլի:

- Տղե՛րք, ի՞նչ էք ասում, ձեզ չեմ հասկանում, խելքներդ հացի հե՛տ էք կերել:

Կարէնը վրդովուած ոտքի կանգնեց ու մօտեցաւ միւս տղաներին:

- Եա՛, էս ոնց էգիդ մենակ թողեցիր, վազի՛ր, գրկի՛ր, որ չուտենք, չտանենք որջը:

Տղաները ջղաձգուած ձայնով հռհռում էին:

- Լսէք, գժուե՞լ էք, ուզո՛ւմ էք րոլորիդ մորթեմ, ի՞նչ էք ասում:

- Արա՛ Կարէն, այստեղ ինչ կայ, հաւասար կիսում ենք: Մի էգ, չորս՝ որձ: Հերթով, կարգով...

Փորին հասցուած բութ հարուածը սպիպեց Անտոնին ծունկի գալ: Միւսները շնագայլերի նման վրայ փուեցին: Ծնկի եկած Անտոնն էլ սկսեց ոտքերից քաշել: Բռունցքներին փոխարինեցին դանակների հարուածները: Լսուեց Միրրելայի գոռոցը: Նա մօտեցել էր: Պէտք էր մի կերպ նրան հեռու պահել:

Յանկարծ իրականութիւնը երկփեղկուեց: Երկու զուգահեռ աշխարհներ էին, սակայն երկու աշխարհներում էլ նոյն կռիւն էր՝ տարբերութեամբ, որ առաջինում մարդիկ էին, երկրորդում՝ կենդանիներ:

Գիշեր էր: Նժոյգն ընթանում էր ճանապարհով: Հեռում երկու բորենի կային: Մի քանի քայլ: Երեւաց երրորդը: Նա մօտեցաւ: Հեռացաւ: Աւելի մօտեցաւ: Առաջին երկուսն էլ մօտեցան: Մօտեցան թիկունքից: Երեւաց չորրորդը, հինգը, վեցը, եօթը... Նժոյգը շարժուեց դէպի աջ: Նրանք դիմացն էին: Յետ գնաց: Մաշկով զգաց իրեն դիպչող քաղցած շնչառութիւնը: Սահմռկեց: Խփեց սմբակով: Բորենիները կէս քայլ յետ գնացին ու աւելի թափով յարձակուեցին: Ամուր բռնել էին, ժանիքները խրել փափուկ մսերի մէջ: Արիւնը չոռում էր: Բորենիների կարմրած աչքերն աւելի լայն էին բացում: Փերթ-փերթ արնախառն մսակտորները առանձնանում էին նժոյգի մարմնից: Պառկեց մէջքի վրայ: Մի քանի լաւ հարուածներ յետ շպրտեցին գիշատիչներից երեքին: Միւսները շարունակում էին վայելել ուժալքուող կենդանու կողերը: Երիվարը ճիգ արեց բարձրանալու: Կողքի ընկաւ: Մշուշուած աչքերը նկատեցին մօտեցող ձագին: Թփռտաց, սմբակով ջարդեց բորենիներից մէկի դունչը: Թաւալգլոր փուեց: Կանգնում էր, երբ կողքը խրուող ատամներն ու դրանց կրողների ծանրութիւնն սպիպեց վայր ընկնել: Տեսնում էր, բայց այլեւս չէր զգում: Այլեւս չէր տեսնում: Չէր շնչում:

Կարէնի արիւնակոլոլ մարմինն ընկած էր գետնին: Միրրելայի գոռոցները վերածուել էին խուլ ճիչերի: Գրկում էր, դէմքը քսում արիւնոտ վէրքերին ու ոռնում, հառաչում, մի քանի վայրկեան անշարժանում, վերանում իրականութիւնից, ու նորից տեսարանը կրկնւում էր:

Տղաներն հեռու էին քաշուել: Ջղաձգութեան նոպան արդէն անցել էր. սառել, մնացել էին:

Նկուղում ժամանակը սահմանումներ, չափ ու ձեւ չունէր:

Կինը սիրելիին փաթաթուած ուշաթափուել էր:

Սկզբում չէին համարձակւում մօտենալ, բայց երկար թողնելն էլ իր հետեւանքները կ'ունենար:

Ուշքը կորցրած կնոջը տարան մի անկիւն, իսկ ամուսնու դին դրեցին երկաթէ մեծ տակառի մէջ՝ Կոնսպանտինի տակառի հարեւանութեամբ:

...

Կիսամութը, կիսասովը, բթացած ուղեղը, բթացած զգայարանները, երեք փղամարդիկ...

Աշխատասենեակում, փանը, նիսպերի ու սեմինարների ժամանակ, ամբոխի կամ միայնութեան մէջ Միրրելան չէր դադրում մոռանալ նկուղում անցկացրած կեանքը:

....

Սառը օդը շոյում էր փասնեակ ասփիճանների վերելքն յաղթահարող մի քանի այցելուների դէմքերը: Երեւում էր՝ զբօսաշրջիկներ էին: Սեւանայ կղզու վանքը սովոր էր օրուայ փարբեր ժամերին աշխարհի փարբեր ծայրերի հիւրերին շլացընելու, բայց այս անգամ զարմացած ու մռայլ էր փեսքը: Հէնց այդպէս էր նրան բնորոշում պուլղարուհին, ով դեռ շարունակում էր բարձրանալ ասփիճաններով՝ թեւանցուկ արած Տոմային:

- Երեւի դեռ կիսաքուն է,- ցածրաձայն ասաց փղան:

- Չէ՛, դժուար թէ, Կարէնս ասում էր՝ ինքը միշտ արթուն է, հսկում է մեր քունը:

- Ո՞վ էր ասում:

- Ըը, Կարէնը, չես ճանաչի, մոռացիր:

Կրծքավանդակում մի բան ոլորուեց, կոպերը փակեց՝ թաքցնելու ակնագունդը ողողող հոսքը:

- Իմ սէր,- հայերէն շշնջաց պուլղարուհին,- կեանքս, արեւ՛ս, գա՛նձս:

Հայկական սառը օդը սպունգի նման ծծում էր օփարուհու շշուկները:

«Գայլո՛ւկս, քո բառերը խափուփիկի սերմիկների պէս պփպւում են գլխումս, մէկ-մէկ էլ այնքան հարուածում նեարդերիսսսս... ուզում եմ կփրել ու դէն շպրփել ջղերս»:

- Միրելկա՛, ո՞նց ես, ամէն բան կարգի՞ն է:

- Հա՛, ի հարկէ, կարգին է ամէն բան, կարգին, ինչպէս արդէն քսան փարի է:

- Լա՛ւ է: Թէ չէ գոյնդ գցել ես, վախեցայ, թէ բան է պապահել:

- Դու հանգիսպ մնայ, ոնց որ արդէն հասանք: Մփի՛ր վանքը, մի քանի մոմ գնիր, ես հիմա կը գամ:

Տոման մի քանի վայրկեան վարանեց, բայց նայելով Միրրելայի դէմքին, գլուխը կախեց ու գնաց դէպի եկեղեցին:

Լիճը կապոյտ պասպառով շարժանկար էր յիշեցնում: Նայողին գամում էր իր պասպառին՝ դարձնելով մշփական դիպորդ:

Թեթեւ քամին Միրրելային յուշեց առաքելութիւնը: Ծոցից քաշեց հանեց վզնոցը, մեփալէոնին հայկական զարդանախշեր էին: Դողացող ձեռքերով բացեց այն, մէջը գործ զանգուած էր երեւում: Զգուշօրէն լցրեց ափի մէջ:

- Մեր հողը քեզ մայր չդարձաւ: Խառնուիր քո հողին:

- Մեր ջուրը քեզ չյագեցրեց, խառնուիր քո ջրին:

Փակեց աչքերը: Անշարժ կանգնել էր՝ վերացած իրականութիւնից:

Սեւանայ լճի ալիքների ձայնն ու ճողփիւնները խառնուել էին Գեղամայ լեռների թարմ, սառը օդին ու սուլելով խփւում էին կնոջ մարմնին:

Քամին նոր ձայներ էր բերում ասփիճանների վրայով նոր-նոր բարձրացող մարդկանց խօսակցութիւններից, այդ ասփիճանների մշփական բնակիչների՝ մուրացող նուագողների երգերից:

Միրրելան սփաթուեց, խորը շնչեց ու դանդաղ քայլերն ուղղեց դէպի եկեղեցին:

Կոյր ձեռնադաշնակահարը շարունակում էր երգել.

Պփփուի՛ր, պփփուի՛ր, կարուսել,
Ես քո երգը վաղուց եմ լսել:

Երեւան

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՋԵԱՆ

ՏԻՐԱՆ ԵՒ ԻՆՏՐԱ. ԱՆՈՒՆԻ ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆԸ

Տիրան Չրաքեան-Ինտրան հայ գրականութեան ամբողջ պատմութեան մէջ ամենաառեղծուածային դէմքերից է: Ըստ էութեան, այսօր՝ Ինտրայի եղերական մահից շուրջ մէկ դար անց, դարձեալ մեր առջեւ է գրեթէ միփական մի կերպար, որի կեանքի ու գործի հեքիաթը (Յ. Օշական) ոչ միայն չի մարում, այլեւ շարունակում է բորբոքուել նոր ուժով: Գնահատութեան բեւեռացումների հարցում Ինտրան, ի հարկէ, բացառիկ երեւոյթ չէ: Նրանից առաջ մեզանում կայ Եղիա Տեմիրճիպաշեանի նոյնքան ցայտուն օրինակը: Համաշխարհային գրականութիւնից զուգահեռներ են ծնւում յատկապէս Էդկար Փոյի, Արթըր Ռեմպոյի, Շարլ Պոտլէրի հետ: Ա. Ջուերեւը Էդկար Փոյի մասին գրում է՝ «Ճակատագիրը հոգ էր տարել, որ լեգենդներն (առասպելներ) ուղեկցէին թէ՛ նրա յաղթանակներին եւ թէ՛ աղէտներին՝ շարունակելով ապրել փասնամեակներ, երբ Էդկար Փոն վաղուց արդէն գոյութիւն չունէր աշխարհի վրայ»: Պոտլէրի կեանքի եւ սպեղծագործութեան հետազօտողներից մէկը՝ Ն. Պալաշովը, նկատում է, թէ՝ «Պոտլէրի մասին լեգենդը դժուարացրել է նրա սպեղծագործութեան եւ անհատականութեան ընկալումը»:

Նման գնահատականները կարելի է տարածել նաեւ Ինտրա-երեւոյթի ըմբռն-

ման վրայ: Այսպեղ, սակայն, կր փորձենք անդրադառնալ ինքնապիպ գրողի կեանքի եւ սպեղծագործութեան շուրջ պարբեր քննարկումների ու պեսակէպների առիթ պուած հարցերից մէկին՝ անունի երկուութեանր:

«Ներաշխարհ»ի սկզբում զեպեղուած «Առ պայծառ իմացականութիւնր Ռեթէոս Հ. Պէրպէրեան» ձօնի եւ բուն երկի Ինպրա սպորագրութիւնների միջեւ կայ մի փոքրիկ գրութիւն /«Ծանօթութիւն»/, որր պապկանում է Տ. Չ. /Տիրան Չրաքեան-Պ.Դ./-ի գրչին: Ժամանակի իմապով, այդ գրութիւնները շուրջ 6 պարուայ հեռաւորութիւն ունեն («Ներաշխարհ»ն աւարպուել է 1900 թ. հոկպեմբերի 16-ին, Ծանօթութիւնր գրուել 1905 թ. սեպպեմբերին, Ձօնր՝ հաւանաբար, գրքի պպագրումից առաջ՝ 1906 թ. մայիսին/: Այսինքն՝ Ձօնի հեղինակր աւելի մօպ է 6 պարի առաջ գրուած «Ներաշխարհ»ի Ինպրային, քան իրեն ժամանակակից Ծանօթութեան Տիրան Չրաքեանին: Արդ, եթէ գործր, գրութիւնր հեղինակի ներաշխարհի ինքնադրսեւորումն է, ապա ինչո՞ւ անունի այս երկուութիւնր:

Խնդիրր ծագել է այլ հեպազօպողների առջեւ եւս, սակայն պեսականօրէն առաւել հիմնաւոր քննարկուել Գրիգոր Պրլպեանի «պրամ» շահեկան աշխապութեան մէջ: Այսպեղ հեպազօպող առաջին անգամ դիպարկում է րնթերցուող գրութիւնների «Այլափարրութեան» եպեւում «զանոնք ծրագրող ենթակայութեան»՝ հեղինակի, երկապուածութեան իրողութիւնր:

Նախ՝ նկապենք, որ անունի երկուութեան հարցր Տիրան Չրաքեանի կեանքում նորութիւն չէր: Մինչեւ Ինպրան այն ունէր իր մի մասնաւոր նախադէպր՝ Տիրան թէ Չրաքեան, պարբերակով: Կեանքի վերջին պարիներին եւս Տիրանր կանգնեց ոչ միայն իր անունի երկուութեան, այլեւ անուանափոխման փասպի առաջ՝ Տիրան Չրաքեանի փոխարէն կոչուելով Խաչապուր /կամ ինչպէս արպասանում էին շապերր՝ Աչապուր/ եղբայր:

Ո՞րն էր այս ամէնի պապճառր, ինչո՞ւ անունների այս խայպաբղէպութիւնր մի անհապի շուրջ: Թերեւս, պապասխանր մէկն է՝ իր անհապականութեան անսովոր էութիւնր, ներքին բարդութիւնր, հոգու լայնածաւալութիւնր, իր բառով՝ «թռչունութիւնր», որր ոչ մի կերպ չէր փեղաւորում մարմնական մէկ անօթի անձուկ շրջանակների մէջ:

1896 թուականի աշնանր գրած նամակներից մէկում Տիրանր ողջունում է Միքայէլի՝ «մպերիմի մր գրող Տիրան» եւ «խօսակցող Չրաքեան» անունների պարբեր նշանակութիւնր զգալր: «Այս պարբերութիւնն էր, որ ինձի րսել կու պայ շապերուն, թէ կ՛ուզեմ, որ զիս կամ պարզապէս «Տիրան» կոչեն՝ կամ, եթէ կ՛ուզեն յարգական մակդիրով մր պալ անունս՝ «միւսիւ Չրաքեան», գրում է նաեւ հիացած աւելացնում. «գրագէպի, վարպեպ գրագէպի խօսք մրն էր այդ զանազանութիւնր insinuer րնող խօսքդ, որովհեպեւ ամէնուն գործր չէ նախ մարդու անունր բաժնել իր գործերուն մէջ»: Այնուհեպեւ բացապրում է, թէ խօսակցութիւնն աւելի պապշաճում է անձին, աւելի բնորոշում է րնկերային մարդուն՝ «րնպանիքին անունն է աւելի՝ քան անհապինր: «Չրաքեան» ուրեմն»: Մինչդեռ մպերմութիւնր գործ ունի «մարդուն հեպ», ոչ թէ անձի, եւ «մարդուն անունր «Տիրան» է օրինակի համար»: Բնորոշ է նաեւ «Ներաշխարհ»-ում եւ այլ գրութիւններում /«Տորոսէն անցք», նամակներ/ Իռենա-Վերժին անունների պարբերակումր՝ նոյն սկզբունքով:

Հասկացութիւնների, իրերի ու երեւոյթների, նրանց միջեւ շարժուն փոխյարաբերութիւնների խորքային դիպարկումները սփռուած են Տիրան Չրաքեանի ամբողջ գրականութեան մէջ եւ նրա

ստեղծագործական մտածողութեան մէկ իւրայատկութիւնն են ներկայացնում: Կարծում ենք, երեւոյթը նոյն բացատրութիւնն ունի նաեւ Տիրան Չրաքեան - Ինտրա անունների գործածման վերաբերեալ: Այսինքն՝ նոյն հեղինակի այդ երկու անունները ներկայացնում են ստեղծագործող անհատականութեան էութեան, ներաշխարհի տարբեր մակարդակներն ու դրանց միջեւ գոյութիւն ունեցող փոխներթափանցումները: Ահա թէ ինչու, իր զտուած, սաստիկ զգացուած ու ապրուած ներէական վիճակները ներկայացնող գրութիւնները /«Ներաշխարհ», «Նոճաստան»/ ստորագրում է Ինտրան, իսկ խանդավառ, պայծառացեալ պահերից բնական տեղատուութեամբ համեմատաբար հանդարտ վիճակների վերադարձած հեղինակի գրութիւնները՝ Տիրան Չրաքեանը: Ինչ վերաբերում է վերը յիշատակուած «Զօն»-ին, ապա Ինտրա ստորագրութիւնն արդարացւում է հէնց նրանով, որ դա գրողի հոգու վեհագոյն լարերի թրթռացումներն ամփոփող գրութեան սրտագին նուիրումն էր այդ հոգին առաջինը ճանաչած ու գնահատած Ռեթէոս Պէրպէրեանին՝ «առ մեծապայծառ իմացականութիւնը»: Այսինքն՝ երկխօսութիւն մեծ ու խորունկ հոգիների, «շատոնց վարպետ մը» դարձած աշակերտի եւ Ուսուցչապետի միջեւ:

Բայց ինչո՞ւ **Ինտրա**. ըստ էութեան ի՞նչ է բովանդակում այս անունը: Յայտնի է, որ **Ինտրան**, ըստ Չրաքեանի, «կայծակող մեծ հնդիկ աստուածին անունն է»: Միաժամանակ, նաեւ **Տիրան** անուան բառաշրջմամբ կազմուած ձեւը: Այդ պատճառով էլ որոշ հեղինակներ /Կ. Զարեան, Ստ. Կուրտիկեան, Հր. Թամրազեան/ Ինտրայի փոխարէն գործածում են **Ինդրայ** ձեւը: Թերեւս, հնդիկ աստծոյ անունը Տ. Չրաքեանին գրաւել է Արեւելքի՝ նրա հոգու ու մտքի, զօրութիւնների նկատմամբ ունեցած ներքին սեւեռումների, հոգեհարազատութեան պատճառով:

Բայց, թւում է, այս դէպքում առաւել կարեւորը Չրաքեանի մեկնաբանութեան երկրորդ մասն է՝ «զոր իմ անունս կը թոյլատրէ կատարեալ ներողամտութեամբ՝ կազմել anagramme-ով» /ընդգծումը մերն է - Պ. Դ./:Նշանակում է, **Ինտրայի** /հնդիկ աստծոյ/ անուան ծնունդի մէջ, այնուամենայնիւ, գլխաւոր դերը, փիրոջ դիրքը Տիրանինն է, որը «կը թոյլատրէ»: Հետեւաբար, հնդիկ աստծոյ անունը յանկարծական «միթական խուժում» չէ Տիրան «անունէն ներս», ինչպէս կարծում է Գր. Պըլտեանը, այլ վերջինիս «կատարեալ ներողամտութեամբ» թոյլատրուած անուն՝ Տիրանի զօրութիւնը, առաւել ներքին, խոր տեսակը, նրա էութեան որակապէս մէկ այլ ու աւելի բարձր մակարդակը խորհրդանշող: Այսինքն՝ էապէս կարեւորը հնդիկ կայծակող աստուածը չէ /նրա փոխարէն կարող էր եւ մէկ ուրիշը լինել/, այլ **Ինտրայի** անունի մէջ «աստուածային» զօրութեան փաստումն ու նշումը, ինչը նոյնիսկ մի փոքր յաւակնոտ ու չափազանց էր թւում Տիրանին /«թէեւ շատ մարդկային չըլլայ»/: 1903 թ. փրոֆ. Հ. Ճեճիզեանին գրած նամակում, անդրադառնալով այդ հարցին, Տ. Չրաքեանը գրում է. «Մեծափառ Հնդիկ վասուին անունը իբր կեղծանուն գործածած ըլլալուս ներողամիտ եղէք. անունիս մէկ anagramme-ն է»:

Այս տեսակէտը դուռ է բացում ոչ պակաս կարեւոր մէկ այլ հարցի պարզաբանման համար եւս: Ի՞նչ է **Ինտրան**՝ կեղծանո՞ւն, ծածկանո՞ւն, թէ այլեւս առանձին ու լիարժէք հեղինակ՝ իր անունով մեզ հասած գրական կոթողների: Ըստ էութեան, սրանք լիարժէքօրէն նոյն իմաստը չունեն: Այսպէս. գրական կեղծանունը անունն է, որը կեղծում է հեղինակի բուն անունը՝ ինչ-ինչ հանգամանքներից /քաղաքական,

ընկերային եւ այլն/ ելնելով, այն ուրիշներից թաքցնելու համար: Օրինակ, «Մարտիկ աղա» յայտնի վէպի հրապարակումից տարիներ յետոյ միայն յայտնի դարձաւ, որ Պետրոս Ագաթանը Միքայէլ Կիւրճեանն է: Կայ նաեւ կեղծանունի /արեւմտահայ իրականութեան մէջ գործածուել է նաեւ սրանուն ձեւը/ աւելի տարածուած տարբերակը, որը չի թաքցնում հեղինակի բուն անունը, այլ հանդէս է գալիս որպէս նրա գրական անուն՝ հէնց այդ կողմը շեշտադրելու համար: Ծածկանունը իր մէջ ներառում է նշուած տեսակները, սակայն, առաւել բնորոշ իմաստով, նշանակում է հեղինակի բուն անունի ծածկում, այսինքն՝ ոչ միայն կեղծում, թաքցնում, այլեւ ամբողջովին ընդգրկում է այն, դառնում այն, փոխարինում կամ բռնում հեղինակի տեղը: Գրիգոր Պըլտեանը գրում է՝ «Ինտրան ծածկանուն կամ կեղծանուն չէ, այլ անուն, որը մեկնում է երկի տարրերից: Այն չի ծածկում Չրաքեանը: Եւ դա նոյնիսկ հակառակ է Չրաքեանի բացատրութիւնների»: Այս ամէնը ճիշդ է, բայց, մեր կարծիքով, ամբողջ ճշմարտութիւնը չէ: Նախ՝ որովհետեւ, ինչպէս արդէն ասել ենք, Տիրան Չրաքեանն իրեն չհաւատալու ոչ մի հնարաւորութիւն չի ընձեռում մեզ, եւ ապա այն պատճառով, որ այստեղ գործ ունենք ոչ թէ պարզ փոխանցման, այլ առաւել կամ նուազ փոխներթափանցումների այն երեւոյթի հետ, որի մասին խօսք եղաւ քիչ վերեւում: Բանն այն է, որ **Տիրան Չրաքեանն** ու **Ինտրան** ոչ մի գրութեան մէջ ամբողջովին չեն ծածկում-ընդգրկում-փոխարինում իրար, այլ տարբեր գրութիւններում հանդէս են գալիս տարբեր զօրութենական ներկայութեամբ ու համամասնութեամբ՝ դրանով իսկ ընդգծելով եւ ընթերցողին յուշելով, թէ տուեալ դէպքում անհատականութեան ինչ խորքերի հետ է նա պատրաստում առնչուել: Այս տեսակէտից, իրօք, «Ներաշխարհում» ու «Նոճաստան»ում հեղինակն **Ինտրան** է, բայց նրա մէջ նրա Եսը ծնող, աճեցնողը՝ Տ. Չրաքեանը, այնուամենայնիւ, ներկայ է որպէս համահեղինակ /թէկուզ եւ այն նոյն սկզբունքով, որ «թռիչքի մէջ նախկին սողը ներկայ է»/: Բայց ներկայ է փոքր ինչ շրջուած /Տիրան - Ինտրա/՝ որում Ինտրան երկի /իմա՛ անհատի ներաշխարհի/ ամենախոր շերտերը պեղող եւ ապրող ակնյայտ հեղինակն է, իսկ Տիրան Չրաքեանը ոգեղինացման այդ արարքը գործնականացնող, գրի մէջ դնող անտեսանելի համահեղինակը: Եւ ճիշդ նոյն կերպ, **Տիրան Չրաքեան** սպորագրութեամբ գրութիւններում անընդհատ ներկայ է **Ինտրան** /այս դէպքում արդէն հաստատապէս կարող ենք ասել՝ «խուժում է»/ եւ սրատես աչքը նրան կարող է նկատել ուղեգրութիւնների, նամակների, յօդուածների եւ այլ գործերի առանձին դրուագներում կամ ամբողջական մասերում՝ յանկարծ կոթողացած: Այստեղից էլ՝ Ինտրայի գրութիւնների սակաւութիւնն ու Տիրան Չրաքեանի հեղինակած գործերի անհամեմատ առատութիւնը, քանզի Չրաքեանը շատ յաճախ չէ, որ ի զօրու է լինում արթնացնելու կամ յղանալու **Ինտրային**՝ գրութեան, խօսքի եւ Լեզուի մէջ արձանագրելու համար նրա գերագոյն ապրումների պահերն ու վիճակները:

Այս ամէնը, անշուշտ, իր որոշակի հիմնաւորումն ունի նաեւ աւելի խոր՝ իմացաբանական հարթութեան վրայ:

*«Բազին». Տիրան Չրաքեան, **Ինտրա,** 1875, սեպտեմբերի 11, Կ. Պոլիս - 1921, յունիս 6, Սլիվան (Աղձնիք նահանգ)), արեւմտահայ բանաստեղծ, քննադատ, փիլիսոփայ:*

ՎԱՉԱԳԱՆ ԱՒԱԳԵԱՆ

ՅԱԻԻ ՅԱՒԵՐԺ ԿԱՆՉԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Յայտնի է, որ ցաւր հասարակական չի լինում, ցաւր միշտ էլ անհատական զգացողութիւն է, որր փնտռում է կարեկցողներ ու մի կարճ րնթացք իր պառապանքով վարակում նաեւ նրանց:

Ցաւր, ինչպէս թերեւս եւ ամէն բան, նաեւ յաւերժական չի լինում: Միշտ էլ ժամանակր պահանջում է իրենր, իսկ կեանքր, բնաւորութիւնր, պարիքր անում են իրենցր: Ամենաջերմ խոսքումն էլ մոռացւում է, եթէ այդ խոսքումին ջերմութիւն պտող դրդապատճառր վերանում է: Այդ է պատճառր, որ միշտ պտւժողր ցաւին կամ մահուանր ենթարկուողն է եւ ոչ թէ կեանքի ու կենդանութեան զաւակր: Սակայն լինում են դէպքեր, երբ մարդկային ցաւի ու ողբերգութեան ուժի առաջ նահանջում են ամէն սովորոյթ ու բան, ամէն սահման ու օրէնք, ու կարծէք, շեղւում է աշխարհի սարքած կարգր: Լինում են դէպքեր, երբ ցաւի մշտական զգացողութիւնն է դառնում կենսունակութեան եւ յաւերժութեան խորհրդանիշ: Լինում են դէպքեր, երբ ցաւր չի ունենում եւ սպանում հնութիւն, այն դառնում է մշտական եւ չսպիացող: Իսկ դա այն ժամանակ, երբ այն որեւէ պեղի կամ ժամանակի հետ կապուած չէ, կամ որեւէ մէկի: Դա լինում է այն ժամանակ, երբ ցաւն իր մէջ է առնում մի ամբողջ ժողովուրդ, որ ուր գնում, ինչքան ապրում, ինչպէս իր հաւատր, իր ցաւն էլ պանում է իր հետ:

Այդպիսին է մեզ համար Մեծ Եղեռնր, այդպիսին է մեզ համար մեր Մեծ ցաւր. այն մխրճուած է ամէն մի հայի, մի ամբողջ ազգի գիտակցութեան եւ հոգեբանութեան մէջ:

Յիշում եմ՝ շատ փոքր էի, երբ առաջին անգամ, հօրս ձեռքր բռնած, բարձրացայ Եղեռնի յուշարձան՝ Ծիծեռնակաբերդ: Առաջին անգամր չէր, որ շուրջս տեսնում էի բազմաթիւ մարդկանց. մերոնք ինձ շատ էին հետները առել շքերթների, ինչոր հանդէսների: Գլուխս վեր ձգած՝ հետեւում էի կողքովս քայլող մեծահասակներին, մանկական հետաքրքրութեամբ ուսումնասիրում շատերի կրծքին փակցուած շքանշանները: Առաջ էլ շատ անգամ տեսել էի նոյնր, բայց այս անգամ շքանշաններից բացի տեսայ խամրած դէմքերով փակցուած լուսանկարներ, իսկ շատերի թեւին՝ նաեւ սեւ կտորից թեւկապեր: Սեւ գոյնր միշտ էլ ազդում է, ինչ-որ ճնշում գործում, բայց քանի որ շուրջս շատ մարդ կար, հայրս էլ կողքիս էր, չվախեցայ: Հայրս ինչ-որ բան պատմեց, բացատրեց: Պատմածներից ես ինձ համար, յիշում են, այն ենթադրութիւնր արեցի, թէ մենք եկել ենք մի մեծ գերեզմանոց, որտեղ թաղուած են սպանուած շատ մար-

դիկ, եւ նրանց թաղուած դիակներից է, որ գոյացել է Ծիծեռնակաբերդի բլուրը: Երեխայական ասեմ, թէ մանկական մի զայրոյթով ծառս եղայ եւ մտքումս սպանողներին ուղղեցի իմացածս ամենավատ խօսքը:

Ցեղոյ յիշում եմ, որ երկնքում շարունակ ծիծեռնակներ էի փնտռում, որոնց այդպէս էլ չտեսայ...

Մի օր էլ մի զաւեշտական դիպուածով մեր տանից ծնողներիցս թաքուն մի ոսկի մատանի թռցրի ու հեռս փարայ մանկապարտէզ: Ցեղոյ պէտք է իմանայի այդ ոսկու գինն ու արժէքը եւ միամիտ արարքիս չարութեան չափը: Յամենայն դէպս այդ օրր տղաներից մէկի հետ իմ համոզմամբ յաջող փոխանակում արեցի եւ ոսկու դիմաց սպացայ տեսածս յուշարձանի պատկերով մի կրծքանշան. մուգ կապոյտ ֆոնի վրայ պատկերուած էր Եղեռնի յուշահամալիրը: Ցեղոյ, ի հարկէ, յանցանքս բացայայտուեց, մայրս մատանին յետ բերեց, ինձ պատժեցին. միակ մխիթարանքս եղաւ այն, որ կրծքանշանը մնաց ինձ... եւ առ այսօր:

Տարիներ անցան, փարիների հետ մեծացայ ու հասկացայ, որ միլիոնը փասր կամ հարիւր չէ, մէկուկէս միլիոնը հազար ու փասր հազար չէ: Յիշում էք, մեր երդման կամ սիրոյ հաւաստման համար որպէս բարձրագոյն չափանիշ շատ յաճախ վկայում էինք միլիոնը. միլիոնի չափ սիրում եմ, միլիոն անգամ երդւում: Ու մի օր միլիոնը ինձ համար դարձաւ ողբ ու ցաւի չափ, ամէն մի միաւորը՝ մի մահ, ամէն զրոն՝ ոճիրների ծանր շղթայի մի օղակ: Եւ այդ օրր մանկական իմ միամիտ վախ խօսքը փոխուեց ամենաթունդ ու պինդ անէծքի ու հայհոյանքի: Ափեցի թուրքին...

Մտովի փորձեցի պատկերացնել մեր զոհերի հոծ բանակը, գրնել ու փարբերել դէմքեր: Բայց երեւակայութեանս մէջ պեսայ միայն Սիամանթոյին, Վարուժանին, Զօհրապին, Կոմիտասին, Ռուբէն Սեւակին, Թլկատինցուն... Նրանց էի ճանաչում ու նրանց տեսայ: Ու նրանց հալածանքի ու մահուան մէջ տեսայ մնացած բոլորին՝ ահաբեկիչ անտարբերութեան մէջ սրի ու սովի մատնուող հայութեանը: Հայութեան ողբր զգացի հոգուս մէջ եւ լսեցի ցաւից բարձրացող նրա մռնչոցը: Ցնցուեցի ու ցաւեցի... Ու չգիտեմ ինչու յանկարծ մտածեցի, թէ որքան աւելի տանջուեմ այդ ցաւով, այնքան աւելի հայ եմ:

Երբ անգամ մատդ մի փուշ է ծակում, ցաւից մատդ բնազդաբար տանում ես բերանդ, դարման ու կարեկից փնտռում: Իսկ երբ վիրաւորուած է քո ազգր, քո ժողովրդի պատմութիւնը, նրա անցեալն ու ներկան, նաեւ ապագան, ո՞ւմ կարեկից անես ու փնտռես: Թերեւս միայն մի ուժ կայ, որ կարող է թիկունք դառնալ, մի ուժ, որ փոքրին էլ կարող է դարձնել մեծ, փակրին՝ հզօր եւ յաղթական: Դա ժողովրդի՝ մեր միասնութիւնն է, մեր ոգեւորութիւնը:

Առանց ցաւի սուր զգացողութեան, առանց իւրայինների ցաւի ապրման չի կարող լինել մեծագործութիւն: Միշտ էլ ընդհանուր ողբերգութիւնը մարդկանց միացնում է մի ընդհանուր կապով: Նման դէպքերում զարթնում եւ աճում է ազգային ինքնագիտակցութիւնը, իսկ ժողովրդի դառնաղէտ վիճակից ծնուած համազգային հայրենասիրութեան գաղափարն ու զգացումը հետզհետէ ընդհանրանում են, դառնում ազգային միութեան օղակներից:

Տասնամեակներ շարունակ Հայ դատը լսելի լայն արձագանգ չէր սրանում աշխարհում, ասենք, մեզանում էլ մինչեւ յեղափոխութիւնը՝ խորհրդային փարիներին, պեսականօրէն այնքան էլ խրախուսելի չէր բարձրաձայն խօսել Եղեռնի թեմայից: Իսկ այսօր, երբ աշխարհի մի զգալի մասր հայանպասր դիրք է բռնում Հայ-

կական հարցի նկատմամբ, թուրքերը չեն դադարում համոզել, թէ իբրեւ իրենք ի բնէ եղել են բարի ժողովուրդ, թէ հայերի անխոհեմութիւնն է եղել նրանց ողբերգութեան պատճառը: Թուրքիան չի փոխել իր քաղաքականութիւնը: Նա առ այսօր անզիջում կեցուածք է ընդունել մեր հարցի նկատմամբ եւ նմանւում է մի մաշուած անիւի, որ պտրտւում է ու պտրտւում եւ իր ընթացքի մէջ միայն իր ճռնչիւնի եղանակը փոխում: Դարեր են պէտք, որ թուրքը քաղաքակրթուի, եւրոպականանայ, մարդանայ: Բայց որքան էլ թուրքը փորձի աշխարհի առաջ արդարանալ, միեւնոյնն է, չի կարող. հեշտ բան չէ աշխարհին խաբելը: Սակայն ինչ էլ լինի, աշխարհի ու մեր առջեւ մենք ենք մեր ժողովրդի դատական գործի վարողը, մենք ենք մեր ազգի խղճի եւ յիշողութեան թարգմանը: Առաջինը մենք պէտք է մեր ուսերի վրայ առնենք Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Թերեւս չափազանցրած չեմ լինի, եթէ ասեմ, որ ինչպէս փարիներ առաջ՝ մօտ անցեալում, այնպէս էլ հիմա յաճախ մի տեսակ ինչ-որ օտարացում է զգացւում. մեր հայրենիքը շատ անգամ մեզնից, մեր անձից զգում ենք խիստ հեռացած: Քաղաքական-տնտեսական կեանքի լարուածութիւնը, ժողովրդի բարեկեցութեան անկումը, նրա հայրենաթափ լինելն ու ցրուելը շատ-շատերի մօտ առաջ է բերել մի տեսակ հիասթափութիւն: Ցայտնուել են անգամ այնքան «շրջահայեաց ու խոհեմ» մարդիկ, որոնք գտնում են, թէ ի սէր այնքան կենսական ակնկալուող քաղաքական յարաբերութիւնների կարելի է նոյնիսկ Հայկական ցեղասպանութեան յիշատակն ու կարեւորութիւնը նսեմացրնել: Քիչ չեն նրանք, ովքեր մտածել են պալիս, թէ Ցեղասպանութեան յիշատակը մատաղ սերունդներին փանում է հոգեբանական խեղումների: Բայց արդեօ՞ք կարելի է ցաւը փոխանակել որեւէ նկատման հետ, որքան էլ այն լինի օգտակար արտաքին յարաբերութիւն կամ շահաւէտ առեւտրի հնարաւորութիւն: Ցաւը որեւէ գնով չի վաճառւում կամ սակարկւում: Կասկածից վեր է, որ եթէ մենք գնանք նոյնիսկ ամենափոքր որեւէ զիջողութեան, ապա վարձատրութիւնը կը լինի շատ կարճ, եւ մենք, բացի արհամարհանքից ու յարգանքի կորստից, ոչինչ ձեռք չենք բերի:

Այսօր՝ հայ ժողովրդի դէմ գործած մեծ ոճիրի 100-րդ տարելիցին, մեր վէրքերը դեռ բաց են: Եւ նրանք այդպէս կը մնան, մինչեւ որ ճշմարտութիւնը յաղթանակի, եւ արդար փոխհատուցումը կատարուի: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ մենք միշտ յիշենք մեր Մեծ ցաւը, յիշենք ու յիշելով երազենք մի բան, որ մի օր մեր դատը պիտի գտնի իր արդար լուծումը: Իսկ եթէ չյիշենք, մենք չենք կարող մեր հոգու մէջ արթուն պահել մեր դատի զգացումը: Մեր գործողութիւնները պիտի լինեն նպատակաուղղուած: Մենք անցեալի ու պատմութեան հետ անաւարտ դատ ունենք, ուրեմն պիտի երազենք ու նպատակ ունենանք՝ այդ դատը շահելու: Այլապէս անպտուղ կը լինի մեր յիշողութիւնը, մեր ցաւը, անիմաստ կը լինի մեր կեանքը: Եւ լաւ է, որ մենք արդէն հասկանում ենք, ուշքի գալիս, որ լոկ ողբը բաւական չէ: Նաեւ հասկանում ենք, որ պէտք է մեր բոլորի սրտերը հաւաքել, մի կրծքի տակ դնել. այդ ժամանակ միայն մենք կը զգանք մեր միասնութիւնը:

Նահապետները մշտապէս ձայն են տալու, անհանգստացնելու ու զգաստութեան են կոչելու մեզ - ապրողներիս, ծնուածներիս ու դեռ չծնուածներիս, ու միշտ էլ աւելի են պահանջելու, քան մենք ընդունակ կը լինենք տալու: Ու եթէ սխալուենք, մենք ենք տուժելու:

Երեւան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ

Լ՚ԵՌ ԿԱՄՍԱՐԷՆ ԱՆՏԻՊ ԷՋ ՄԸ

Ո՞Վ ՃԱԿԱՏԱԳԻՐ, ՄԻ՞ԹԷ ԴՈՒՆ ԿՐՆԱՅԻՐ ԱՅԴՔԱՆ ԴԱՌՆ ԾԻԾԱՂԵԼ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՎՐԱՅ

Երկրորդ աշխարհամարտից յետոյ յաղթանակած հզօր երկրները մկրատն առած աշխարհն սկսեցին վերաձեւել իրենց վրայ:

Հայ դատն նորից նետուեց շրջանառութեան մէջ: Այս անգամ շահարկողը Սովետ Միութիւնն էր:

Այլեւս րացուել էր Խորհրդային Միութեան կայսերապետական ախորժակը: Սթալինը, ոգեւորուած իր յաղթանակով, չուզեց րաւարարուել միայն եւրոպական մասի նուաճումներով, փորձեց ձգուել նաեւ դէպի Արեւելք՝ դէպի ռուսական անկափար երազանքների նեղուցները...

Եւ 1945թ.-ին խորհրդային կառավարութիւնը պահանջեց հայերին եւ վրացիներին վերադարձնել այն երեք նահանգները, որոնք Ռուսաստանն էր նուիրել Թուրքիային 1921թ. Մարտի 16-ին, Մոսկուայում սպորագրուած «Լենին-Աթաթուրք» պայմանագրով: Ըստ այդ պայմանագրի, Պաթումի մարզը Թուրքիայից անցնում էր Վրաստանին, Հայաստանի Կարս եւ Սուրմալու գաւառները՝ Արարատ լեռով, անցան Թուրքիային, իսկ Ազրպէյճանին յանձնուեց Նախիջեւանը:

Մոսկուան կաշառելով Ազրպէյճանին եւ Վրաստանին խորհրդայնացրեց այդ երկրները, իսկ Աթաթուրքին սիրաշահելով, փորձում էր ձեռք բերել «կարմիր թուրքի» բարեկամութիւնը: Այդ ժամանակուայ, համարեա մահամերձ Հայաստանի իրաւունքները հաշուից դուրս էին:

Սակայն, յաղթելով պատերազմը, Սթալինը նորից տենչաց Տարտանելը, եւ 1945թ.-ին չեղեալ յայտարարուեց այդ պայմանագիրը, եւ Թուրքիային վերջնագիր ներկայացուեց հետ քաշել իր զօրքն ու բնակչութիւնը մինչեւ 1914 թ. սահմանները, որպէսզի խորհրդային բանակը, որն այդ ժամանակ Արաքսի ափին էր, անարգել մտնի այդ տարածքը:

Հայ ժողովուրդը ցնծութեան մէջ էր: Նոյնիսկ Անտոն Քոչինեանն արդէն նշանակուած էր Կարսի նահանգապետ: Ջինուորական գործողութիւնները ղեկավարելու էին մարշալներ Ռոքոսովսքին եւ Թոլպուխինը:

Բայց աւա՛ղ: Աշխարհի տէրերն իրենց շահերն ունէին, որոնք ոչ մի կերպ համահունչ չէին ցեղասպանուած հայ ժողովրդի շահերին: Եւ Անգլիան,

Ամերիկան ու Ֆրանսան՝ «համաշխարհային սա քիսէճիները»՝ ինչպէս որակել է Լեռ Կամսարը, «քիսէներն[1] ու սապոնները[2] ձեռքերնին», իրենց ծառայութիւնը մատուցեցին Թուրքիային: Խորհրդային զօրքին արգելուեց մտնել Արեւմտեան Հայաստան:

Պատմութեան մէջ եթէներ չեն լինում, բայց այնուհանդերձ, եթէ Ստալինին յաջողուէր իրագործել այդ պահանջների վերադարձը, արդեօ՞ք Հայաստանին կը միացնէր, այն Հայաստանին, որը խորհրդայնացման հէնց առաջին տարիներից ծուատուեց պոլշեւիկների կողմից, եւ ժողովուրդի մեծ մասն էլ տեղահանուեց դէպի Սիպիր կամ զոհ գնաց «կարմիր տեռորին»: Դժուար է ասել:

Չգիտեմ այդ օրերի պաշտօնական մամուլն ի՞նչ է գրել, ինչպէ՞ս են հրապարակախօսները մեկնաբանել կապարուածը...

Բայց գիտեմ ահաւասիկ ինչ կերպ է ներկայացրել Լեռ Կամսարը (չնայած նրան արգելուած էր գրելը) այդ դէպքերն իր անտիպ օրագրութեան մէջ՝ ի փոխանցում սերունդներին:

ՎԱՆՈՒՀԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Երեւան

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ՝ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ «ՁԱՊՐԱԾ ՕՐԵՐ» ԱՆՏԻՊ ՕՐԱԳՐԻՑ

Ուրբաթ 6.- Հայաստանի հարցը իր ամբողջ ծաւալով հրապարակ է ելեր: Առջի օր ամերիկահայ ներկայացուցիչները դեկլարացիա[3] մը ներկայացուցին Սան Ֆրանսիսքոյի կոնֆերանսին պահանջելով, որ Թուրքահայաստանը Սովետական Հայաստանին կցուի ու իրենք ալ երթան սովետական կարգերում երջանիկ ապրեն, ինչպէս հոն ապրող իրենց եղբայրները:

Այս դեկլարացիային ձայնը, թէեւ հայկական էր, բայց մարմինը պոլշեւիկեան: Պոլշեւիկներն արտասահմանի հայութեան բերանով դէպի արեւելք կ'ուզեն երկարել:

Բոլոր կարդացողներն ըսին, որ սա սովետական թելադրանք էր, ինչու որ մանկական անհամբերութեամբ մը, ամէն նախադասութեան վերջը, խորհրդային հողին կցուելը կը պահանջէր: Աւելին. ամբողջ դեկլարացիան «կցուել» էր: Մնացեալ արգումենտացիաներն[4] անոր համար մէջ կը բերուէր, որ «կցումները» փարածական երեւային:

Դեկլարացիային հեղինակները ճաշկերոյթ ալ կազմակերպեցին սովետական դելեգացիային[5] համար...

Ասոր համար ալ ժողովուրդը խօսեց, թէ սովետական դելեգացիան փող տուեր է հայերուն, թէ մեզի ճաշ տուէք: Ինչո՞ւ, որ դիւանագիտական օրինականութիւնը պահպանուի:

... Բայց կեղծիքը այպանելի է, անգամ եթէ ատով Հայկական հարցը պիտի լուծուի: Ոչ մէկ ամերիկահայ ճիշդ կր զրուցէ, երբ իղձ կը յայտնէ՝ սովետական կարգերում ապրել:

Եթէ «ապրելուն» տեղ մեռնել ըսէր՝ ատոր խօսք չունեմ. մեռնելու համար միայն ստեղծուած են մեր կարգերը:

Բայց ես «կցել» բառէն չկռահեցի, որ ամերիկահայ դելեգացիան մեր կառավարութեան կողմէ էր թելադրուած: Ես աւելի հասպատուն եւ աւելի ընդհանուր կանոն

ունեմ գուշակելու:

Այն բոլոր շարադրութեանց մէջ, ուր սովետական կարգերր «երջանկութեամբ» կ'որակուեն, գիտցիր որ՝ պոլշեւիկեան ծագում ունի:

Չորեքշաբթի 15.- Հայկական հարցր կր շարունակուի օրօրուել մարդկանց մտքին մէջ: Ռուսաստան կ'ուզէ Տաճկահայաստանր Կովկասի Հայաստանին միացնել եւ այդպիսով գրաւել տաճկական հողերէն որոշ մասր մր: Անգլիա՝ ըստ երեւոյթին կր հակառակի Թուրքիայի թուլացմանն ու փոքրացմանր: Անիկա ուժեղ Տաճկաստան կր ցանկայ, օր մր Սովետական Ռուսիոյ դէմ գործածելու համար: Հայերն ալ, կարծելով, թէ այս հզօր հակամարտութեանց մէջ իրենց ձայնր հաշուի կ'առնեն՝ այսպէս կամ այնպէս կր ցանկայ:

Բայց փաստօրէն Հայկական հարցր միշտ ծառայած է որպէս խայծ զանազան պետութեանց ձեռին, իրարմէ ձուկ բռնելու համար:

Ներկայիս հայ ազգր երկու մասի է բաժանուած: Կէսր Ռուսաստանր զարկեր է իր կարթին ու գցեր տաճկական ջուրեր, ցանկալով հայկական վիլայէթներր[6] բռնել, հայութեան միւս կէսն ալ Ամերիկա է իր կարթին խրել, որ Ռուսահայաստանր բռնէ ու իր հսկողութեան տակ ազատ Հայաստան շինէ:

Նայենք որո՛ւ կարթր ձուկ կր բռնէ:

Ամ, փոքր ենք, փոքր. իբրեւ խայծ անգամ փոքր ենք ու ոչ մէկ ձուկ մեզ վրայ ուշադրութիւն չի դարձուներ:

Առօրեայ կեանքում փոքր արարածներու չի զլացուեր բոլոր զգայարանները աշխարհի տեսնելու, ճանչնալու ու ինքնօրէն ապրելու, բայց փոքր ազգին կր զրկեն իր քիթն, աչքն ու ականջն ունենալու եւ ինքնուրոյն ապրելու իրաւունքէն:

Մեզ համար շատ ուրախալի էր հարկաւ երկու Հայաստաններու միացումր թէկուզ ռուսական հողին վրայ, բայց ի՞նչ օգուտ, որ պոլշեւիկեան ռեժիմր[7] բանի մր չի նմանուեր: Ափիկա պարզապէս մահուան ռեժիմ է՝ գերեզմաննոց:

Երկու Հայաստաններու միացումր մեր դարաւոր ազգային բաղձանքն է, այդ ճշմարիտ է: Բայց մենք կ'ուզենք միանալ՝ միասին ապրելու եւ ոչ մեռնելու համար...

Ռուսաստան, որու տակր Անգլիան ու Ամերիկան պատերազմի ժամանակ մէյ մէկ բարձր ու կակուղ բարձ դրին, այժմ այդ բարձերր սկսեր են իջնել ու իջնել: Հաւանաբար, մէջր օդ է լեցուած, տեղ մր ծակուեր է, ու Ռուսաստանր չի կրնար գտնել՝ կալնելու համար: Այժմ իր ուշադրութիւնր Տաճկաստանին վրայ է, ակնդէտ կր սպասէ Անգլիայի ուրիշ կողմ նայելուն՝ հարուած մր հասցնելու, բայց վերջինիս աչքր միշտ այս կողմն է ու Տաճկաստանր անվնաս կր մնայ դժբախտաբար, մնալով Անգլիոյ ուշադրութեան կեդրոնում:

1945թ.

Խորհրդային Ռուսաստանի քաղաքականութեան մէջ Սթալինր ոչ թէ այրի կին, այլ այրի մարդ է, որ իր հարազատ Վրաստանն առած Ռուսաստանի տուն տրն-փեսայ է գացեր այս րոպէիս: Խորհրդային Միութիւնր բացի Սթալինի հարազատ Վրաստանից, ունի գասնիինգ այլ խորթ հանրապետութիւններ, որոցմէ մէկն է մեր Հայաստանր:

Տաճկահայաստանի հետ վարած իր քաղաքականութեանր մէջ սկիզբներր ցոյց տուաւ, թէ իր միակ նպատակն է տաճկահայկական վիլայէթները մեր երկրին կցելով մեծ Հայաստան սրեղծել: Յետոյ, մէկէն, ամէն տեսակ ընդանեկան նկատումները մէկդի թողնելով, այդ վիլայէթներր Վրաստանին բերանր կր խոթէ...

Որպէս թէ բաւական չէր ծածուկ պեղ ողջ Աջարեստանը, Կարաչայը, Հիւսիսային Կովկասը ամայացուց իր բնիկներէ ու Վրաստանին տուաւ, հիմա ալ տաճկական վիլայէթները:

Ռուսաստանը աչքի պոչով կը դիտէ հարկաւ, այս աչառութիւնը, բայց ձայն չի կրնար հանել, որովհետեւ... կնիկ է:

Իսկ Արեւելքում կինը իրաւազուրկ է ընտանիքում:

Անգլիա, Ամերիկա եւ Ռուսաստան, որ առաջուընէ մեծ էին արդէն, Երկրորդ համաշխարհային պատերազմէն վերջը պէր դառնալով ողջ աշխարհին՝ աւելի մեծցան, ըսել է՝ զառամեցան ու սկսեցին խաղալ աշխարհի մնացեալ 54 մանր ազգերու հետ չարաճճի ծերուկներու նման:

Աշխարհի մանր ազգեր Սան Ֆրանսիսքօ կանչեցին եւ աշխարհի սանձը այդ մանրիկ պետութեան ձեռքը տուին: Ճիշդ է 50-ը փոքր էին, բայց կային եւ Անգլիայի, Ամերիկայի ու Ռուսաստանի նման ամեհի ազգեր, որք եթէ խրտչէին, այդ «միաւորուած ազգերու» քարտուղարութիւնը աշխարհի մէկ պատէն միւսը կու տային:

Այսպիսով, երեք մեծ ազգեր իրենց սանձը «միաւորուած ազգերու» քարտուղարութեանը յանձնելով, պատուիրեցին ղեկավարել իրենց. եթէ սխալ ճամբայ բռնեն կամ անիրաւութիւն մը գործեն՝ անմիջապէս սանձը պիտի քաշէին ու մտրակէին: Այդ առթիւ, եթէ ուժի պէտք ունենայ քարտուղարը, կրնայ իրենցմէ զօրք հանել ու յարձակուել իրենց վրայ: Օրինակ, կրնայ Անգլիոյ մէջ զօրահաւաք յայտարարել եւ այդ զօրքով յարձակուել Անգլիոյ վրայ, համաձայն կանոնադրութեան:

Այսպիսի հեպաքրքիր խաղ դեռ դիւանագիտութիւնը չէր տեսեր: Եթէ կենդանական օրինակով բացատրելու լինենք, պիտի պատկերացունենք այսպէս:

Առիւծը, վագրն ու բորենին իրենց ղեկավարութիւնը նապաստակներու կը յանձնեն: Երբ առիւծը օրէնքէն շեղի՝ իր մէկ թաթը նապաստակին պիտի յանձնէ, որ անով իրեն ապտակէ: Աւելի զուարճալի խա՞ղ:

Եւ այն ո՞ր տխմար պզտիկ ազգն է, որ Ամերիկայի խաթրին[8] պիտի դպնայ: Այն Ամերիկային, դէպի որը ուղղուած է աշխարհի բոլոր պետութիւններու աչքը, տոխառութեան ակնկալութեամբ: Չէ՞ որ ողջ աշխարհը այսօր Ամերիկայի սեղանի փշրանքներովը կ'ապրի եւ այնքան պարտք ունի, որ ամօթէն այդ մեծ պետութեան երեսը չի նայեր:

Այս բոլորէս ղեկավար Քարտուղարութիւնը Լոնտոն կը նստի ու սկսեր է իր գործառնութիւնը: Ամէն օր գանգատներ կ'ընդունէ: Իրանը կը դիմէ ու կը գանգատի Ռուսաստանի վրայ, որ եկեր իր երկիր հիւր՝ ու հիմա չի ուզեր դուրս ելլել: Կը խնդրէ վռնտել: Ռուսաստան նամակով մը Քարտուղարին կը խնդրէ, որ անգլիական զօրքը Յունաստանէն դուրս հանէ, քանի որ պատերազմն աւարտեր է արդէն: Ուքրանիան, այդ Ռուսաստանի խաթէր համար ստեղծուած չակերտաւոր անկախ պետութիւնը, կը խնդրէ Քարտուղարին բռնել Անգլիոյ ձեռները, որ Ինտոնեզիայի վրայ յարձակի ու թոյլ տայ անոնց անկախ ըլլալ: Միացեալ ազգերու քարտուղարը կը կարդայ դիմումները ու կը ժպտի անմեղ երեխայի ժպիտով: Յետոյ այս դիմումները փռաններ շինելով, զբօսանքին բակը կ'ելլէ ու բաց կը թողու քամու ուղղութեամբ:

Ի՛նչ զուարճութիւն:

Բայց ես չեմ բարկանար ու բնական կը գտնեմ այս խաղը: Վեց տարի մարդկութիւնը ծանր մարտերով անցուց, պէտք չէ՞ր, որ քիչ մըն ալ զուարճանայ...

1946թ.

Հինգշաբթի 15.- «Համաշխարհային հայկական քոնկրես» Նիւ Եորքում:

Օրր նոր, լուրր նոր:

Այն ժամանակ, երբ Անգլիան ու Ամերիկան աշխարհի այդ զոյգ պէրերը, անոնց հետ նաեւ աշխարհի ողջ պետութիւնները միացած կ'ուզեն Սովետական Միութեան պէրիփորիան[9] կրճատել, ոչ մի ռեպարացիա[10] չվաճառել, րսպ ամենայնի խեղճացընել ու ջնջել աշխարհի երեսէն: Այն ժամանակ, երբ Ամերիկա 400 միլիոն վարկ կու տայ Տաճկաստանին Սովետական Միութեան վրայ յարձակելու, կը զինէ Իրանը, Չինաստանը, Յունաստանը միեւնոյն նպատակով, ճիշդ նոյն ժամանակ մեր «դեմոկրատ» հայեր Ամերիկայում «համաշխարհային» քոնկրես կը գումարեն ու կը պահանջեն Տաճկահայաստանը միացնել Սովետական Հայաստանին:

Անգամ այդ այն ժամանակ, երբ սովետական հայերը խելակորոյս, մահն աչքն առնելով Տաճկաստան կը փախչեն ու դահիճներու գթասրտութեանը կապաւինեն:

Սա ոչ թէ «համաշխարհային քոնկրես» է, այլ սա համաշխարհային փխմարութիւն է, որն կը գրգռէ Թուրքիոյ մօտալուտ պատերազմի ժամանակ մտնել Սովետական Հայաստան՝ եղած-չեղած հայութիւնը կոտորել ու դարձնել մեր երկիրը «համաշխարհային հայկական ամայութիւն»...

Սա պոլշեւիկեան գիծ է: Կրիայի վրայ նստել՝ ձիու երիշով քայլել:

«Համաշխարհային հայկական քոնկրես», այդ դու չէ, որ հաւաքուեր ես Նիւ Եորք, այլ Ստալինն է քեզ հաւաքեր, այդ քո լեզուդ չէ, որով կը խօսես, այլ Ստալինի լեզուն, այն Ստալինի, որ վերջերս իր բոլոր յոյսերը կորսնցուցած՝ փրփուրներու կ'ապաւինէ եւ յարդի շիւղերու ձեռք կը մեկնէ խեղդուելու իր փազնապին մէջ: «Քոնկրե՛ս» ո՛ւր կը մտնես այն նաւը, որն 16 տեղով ծակեր է: «Դեմոկրատ հայերու համաշխարհային կոնգրե՛ս», դու գիտե՞ս ինչի ես նման. դու նման ես այն ողորմելի մրջիւնին, որն նստած է ձիու երկար պոչին, եւ կը կարծես, թէ այդ պոչն Աստուած ստեղծեր է քեզ համար, որ վրան հանգրստանաս:

Ո՛չ, ո՛վ «քոնկրես», պոչն կենդանուն տրուած է իր սեփական կարիքներու համար: Նայէ՛, երբ ճանճ մը թառի իր գլխուն, ինչպէ՛ս կ'ոլորէ քեզի իր պոչին հետ եւ իր ճանճը կը քշէ, քեզի օդը հանելով:

«Քոնկրե՛ս, Աստծու սիրուն, խեղճ ենք, մեղք ենք: Երկու հայ է մնացեր, ան ալ դուն մի կոտորել տայ. պահպանիր «համաշխարհային» լռութիւն, նայենք սա սպասուելիք պատերազմին կռուող փիղերը ինչպէս պիտի շարժեն: Ու պատահմամբ, եթէ ոտր մեր գլխուն չդնեն ու չճզմեն, փառք տուր Աստուծոյ ու ապրիր աշխարհի ինչ անկիւն ալ ըլլայ:

1947թ.

1.- Քիսէ - շփոց:
2.- Սարոն - օճառ:
3.- Դեկլերացիա - կառավարական կամ պաշտօնական յայտարարութիւն:
4.- Արգումենտացիա - փաստարկում:
5.- Դելեգացիա - պատուիրակութիւն:
6.- Վիլայէթ - նահանգ:
7.- Ռեժիմ - վարչակարգ:
8.- Խաթէր - քու սիրոյդ:
9.- Տէրիտորիա - հողամաս:
10.- Ռեպերացիա - հատուցում:

ՆՇԱՆ ՈՐԲԵՐԵԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԳՈՐԾԻ ԱՌԵՂԾՈՒՄԸ

Նուիրում եմ մայրենիի՝ լեզուի ու իսկքի Մաքրութեան հաղորդաշարերի հեղինակներ Արտեմ Մարգսեանին եւ Վենիկ Յովհաննիսեանին

Մաշտոցի յոբելեանները միշտ նշուել են համազգային հանդիսաւորութեամբ, փորձելով (սակայն երբեք չկարողանալով) նրա վաստակի արժանին լրիւ հատուցել, որովհետեւ դժուար է Նրա մեծութիւնը ամբողջութեամբ ընդգրկել: Մաշտոցեան յոբելեանների առիթով, կրկին անդրադառնում ենք, որ Մաշտոցը միշտ մեզ հետ է՝ գրելու թէ կարդալու պահին, մեր մշակոյթի հետ առնչուելու պահին թէ մեր լեզուի յարապեւման ամենօրեայ պայքարի պահին: Երբ խորհում ենք աշխարհի ժողովուրդների պատմութեան մէջ մեր տեսակի ներկայութիւնը պահպանելու մասին, մեր խոհերը մեզ տանում են դէպի Նա, դէպի մեր լինելութեան ոսկեդարի ակունքները:

Այս նիւթը վերնագրելիս եւ գրութիւնում շեշտել եմ առաւելապէս Մաշտոց անունը, հետեւելով նրա կենսագիր Կորիւն պատմիչի եւ հին աղբիւրների օրինակին, ովքեր (ըստ ակադ. Յ. Մանանդեանի), վիճելի եւ կասկածելի են համարել Մեսրոպ անունը, ինչը սկսել են գործածել աւելի ուշ ժամանակներում: Անցնող տարուայ՝ Մաշտոցի ծննդեան 1650-ամեակի առիթով, կրկին մեր խոկումներն ու մտորումները մեզ մղում են խոնարհումի, ի գնահատումն նրա կատարած այն մեծ գործի, ինչը բնորոշում է Մաշտոցին՝ որպէս հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը արթնացնող սերմնացանի եւ ինքնութեան հետագայ պահպանման պայքարը ուղղորդողի: Յիշել Մաշտոցին՝ նշանակում է յիշել նրա գործը: Իսկ այդ գործը նրա գրասփեղծումն է, ինչը մեր ժողովրդի դէպքում նոյնացաւ ազգակերտում կոչուող երեւոյթի հետ: Հետեւաբար, նրա ծննդեան յոբելեանը նշելու առիթով պարտաւորուած ենք զգում կրկին ու կրկին անդրադառնալ ինքնազոհողութեամբ ապրած իր Աստուածահաճոյ գործունէութեանը՝ հայոց գրերի գիւտին, մէկ անգամ եւս շեշտելու համար երկու բառով պարզապէս գրերի գիւտ կամ յայտնագործութիւն համարուածի փարողութիւնն ու հետեւանքները: Կանխամտածուած, չեմ յիշատակում

գրասպեղծման թուականը, որովհետեւ այդ փարեթիւը մինչեւ օրս համարուել է 405 թուականը: Մինչդեռ, Մաշտոցի աշակերտ եւ կենսագիր Կորիւնի «Վարք Մաշտոցի» գրքի վերջում գրուած նախնական (հին) ժամանակագրութեան (ինչն աղաւաղուել է հետագայում) վերականգնուած ճիշդ տարբերակի, պատմիչներ Մովսէս Խորենացու, Փաւստոս Բիւզանդի, Ասողիկի վկայութիւնների, Մատենադարանի երեք ձեռագրերի բնագրերի եւ ականաւոր հայագէտներ Մ. Չամչեանի, Լէոյի. Ն. Ադոնցի, ու մանաւանդ Յ. Մանանդեանի կողմից պատմական անցքերի ու փաստերի համադրմամբ կատարուած հաշուարկումների հիման վրայ գիտականօրէն ապացուցուած է, որ մաշտոցեան հայոց գրերը ստեղծուել են ոչ թէ 5-րդ դարի սկզբին՝ 405-ին, այլ 4-րդ դարի վերջերին՝ 391-392 թ.թ: Սխալ հաշուարկումը (405-6թ. հաշուարկը) արել էին ֆրանսիացի գիտնական Տիւլորիէն եւ գերմանացի լեզուաբան, հայերէնի մեծ բարեկամ Յ. Մաքուարթը: Նրանց այդ «անմեղ» սխալը ցայսօր շարունակւում է մնալ գիտական եւ մեր կեանքի ամէնօրեայ շրջանառութեան մէջ: Աւելին, Գ. Տէր Մկրտչեանը, այդ սխալը «ճշդում է»՝ Մաշտոցի գիւտի համար սահմանելով 405-416 թուականները (սա դեռ մինչ օրս գործող օպարամոլութեանը մեր տուրք տալու լաւագոյն օրինակներից մէկն է): Ակնկալում ենք, որ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիան աշխարհին պաշտօնապէս կը ներկայացնի պատմական ճշմարտութիւնը՝ շուրջ մէկեւկէս տասնամեակով առաջ տանելով մաշտոցեան գիւտի ստեղծման թուականը:

Արդեօք մի՞շտ ենք գիտակցում, թէ ինչու աւելի քան 1600 տարիների ընթացքում այս հայորդին շարունակ յիշուել ու փառաբանուել է, իր գործը քննուել ու գնահատուել է՝ սրբացուելով ժողովրդի ու եկեղեցու կողմից: Ի՞նչն էր գաղտնիքը, որ մեր մեծագոյն զաւակի վաստակի ազգովին մեծարումը դարձաւ իր՝ այլեւս յաւիտենացուած փառքը, բացառելով այդ փառքը մէկ այլ ուրիշի հետ կիսելը: Փորձենք համառօտակի պատասխանել այս կարեւոր հարցադրումներին:

Նախ, նկատի առնենք, որ 5-րդ դարի պատմական, նաեւ մեր եկեղեցուն առաւել հետաքրքրող զուտ կրօնա-քրիստոնէական հանգամանքներից ելնելով, Մաշտոցին (եւ իր արած աշխատանքը) կտրում են մեր ժողովրդի պատմութեան փաստացի իրական հիմքերից, դարձնելով նրան զուտ երեւակայական ու եթերային մի իտէալ. որպիսին մատուցել է Կորիւնը՝ գրելով, թէ Մաշտոցը գիրը ստեղծեց միայն «արտասուալից աղերսանքներով, հեծեծանքներով ու աղօթքներով»: Բայց կայ նաեւ հակառակը, երբ փորձում են նրան թերագնահատել՝ ներկայացնելով որպէս սովորական «մուրացեալ» գրեր գծագրողի, ով, իբրեւ թէ, ձեւափոխելով օտար՝ յունական, ասորական, արամէական եւ այլ այբուբենների տառերը, ստեղծել է հայոց այբուբենը: Եւ փոխարէնը աւելի բարձր են գնահատել ասորի Դանիէլ եպիսկոպոսին, յղում կատարելով նրա մօտ պահուող եւ իբր իր հեղինակած տառերի հետ կապուած մեզ յայտնի պատմութեանը: Մինչդեռ, իրականութիւնը աւելի ճիշդ է ներկայացրել պատմահայր Մովսէս Խորենացին, գրելով, թէ՝ Մեսրոպը փափաքում էր գտնել հայոց հին գիրը (այդ մասին աւելի մանրամասն՝ ստորեւ), վերծանել դրանց հնչիւնները: Եւ դէպի Ամիդ, Եդեսիա, այնուհետեւ Փիւնիկի վրայով Սամոս դեգերումներից, հեթանոս մատեաններ գտնելու համար

փնտռտուքներից՝ «բայց շահ չգտնելուց» յեփոյ գրասփեղծման պահը Մաշփոցին շնորհւում է Աստուածային փեսիլքով եւ Աստծոյ թաթի երեւոյթով. «Եւ փեսնում է ոչ երազ քնի մէջ, ոչ փեսիլք արթնութեան մէջ, այլ սրփի գործարանում նրա հոգու աչքերին երեւում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրայ գրելիս...: Եւ ոչ միայն երեւաց, այլեւ բոլոր հանգամանքները (այսինքն՝ գրերը) նրա մփքում հաւաքուեցին՝ ինչպէս մի ամանում: Եւ աղօթքից վեր կենալով սփեղծեց մեր նշանագրերը»:

Բնական էր, որ մաշփոցեան «առեղծուածով» զբաղուեցին աշխարհի՝ փասնեակների հասնող լեզուագէփ-պապմաբան գիփնականներ՝ սկսած հին դարերից մինչեւ մեր օրերը, Մաշփոցի աշակերփներ՝ կենսագիր Կորիւնից ու պապմիչներից մինչեւ հին աշխարհի դրացի ազգերի ներկայացուցիչներ, 19-20-րդ դարերի հնդեւրոպական լեզուների օփարազգի եւ հայ լեզուաբաններից, մինչեւ այսօր ապրող մեր սերունդի գիփնականներ,- բոլորն էլ հիմնաւորելով Սուրբի արժանի լինելը իր փառքին: Ուրեմն ո՞րն է պարզաբանման ենթակայ խնդիրը:

Այո՛, 6-7 հազար փարուայ հնութեամբ մշակոյթ ու արհեսփներ, մեփաղագործական, շինարարական եւ այլ հմփութիւններ ունեցող ժողովուրդը պէփք է որ իր փորձն ու իմասփութիւնը սերունդներին փոխանցելու միջոցն ունենար: Գիփնականները փաստում են, որ Ք.ա. 1-ին հազարամեակի եւ յեփոյ՝ նախաքրիսփոնէական շրջանի օփար հեղինակներն են վկայել, թէ անհնար է, որ նման զարգացած փնփեսութիւն եւ մշակոյթ ունեցող ժողովուրդը, սեփական գիր ու գրականութիւն չունենար: Մեր օրերում, ակադեմիկոս Պ. Հերունին փաստելով Քարահունջի ասփղադիփարանի 7500 փարուայ հնութեամբ ասփղագիփական չափումների համապապասխանութիւնը այսօրուայ փուեալներին, նոյնպէս կարծում է, որ առանց գիր ունենալու հնարաւոր չէր այդպիսի մակարդակ ունենալ: Գիր ունենալու լաւագոյն ապացոյցներից է նաեւ այն, որ նախամաշփոցեան շրջանի գրաբարեան կանոնարկուած եւ կապարելութեամբ աչքի ընկնող զարգացած լեզուն չէր կարող գրերի սփեղծումից յեփոյ կարճ ժամանակամիջոցում այն մակարդակը ունենալ, որ անմիջապէս սփեղծուէր Սուրբ Գրքի՝ աշխարհին զարմացրած յայփնի հայերէն թարգմանութիւնը (նոյնիսկ հայոց հին անգիր բանահիւսութիւնը ունեցել է նման մակարդակ): Բացի այդ, հին հայ հեթանոսական պաշփամունքի շրջանում արդէն ունէինք գրի եւ դպրութեան Տիր չասփուածը, ով գրում եւ պահում էր նաեւ մահուան դափապարփուածների ցուցակը: Յիշենք հայերիս մօփ փարածուած առօրեայ անէծք՝ «Գրողի փարած», «Գրողի ծոցը գնա՛», կամ՝ «Գրո՛ղը քեզ փանի» արփայայփութիւնները: Այդ «գրողը» Տիրն էր: Հեփեւաբար, գիր ունեցե՛լ ենք, որ գրի ասփուած է պաշփպուել: Աւելին, ըսփ պապմաբան եւ սեպագրագէփ Արփակ Մովսիսեանի, մեր ժողովուրդը իր անցեալում ունեցել եւ օգփագործել է 12 գրահամակարգ՝ սկսած ժայռափոր գծապափկերներից ու գաղափարագրերից մինչեւ ուրիշների (Մերձաւոր Արեւելքի երկրների) ունեցած վանկային սեպագրերից խիսփ փարբերուող սեփական փառային սեպագրերը, եւ մինչեւ մեր ժողովրդի մէջ իսկապէս գրագէփ խաւ համարուող քուրմերի գրած մապեաններում գործածած գրերը (որոնք, ցաւօք, հիմնականում դեռ անվերծանելի են): Դրանցից մնացած են համարւում նաեւ, այսպէս

կոչուած դանիէլեան գրերը, թէեւ իրականում դրանք երբեք էլ ասորի Դանիէլի հեղինակածը չէին: Նա միայն այլազգի դպրութիւնների դիւանների մէջ գտել էր հին հայկական գրերից մնացած 22-24 համր գրեր, որոնց հնչիւնային արժէքները արդէն կորսուած եւ մոռացուած էին: Դանիէլեան եւ մաշտոցեան գրերի առնչութիւնները լաւագոյնս ուսումնասիրել է գրականագէտ Ալբերտ Մուշեղեանը: Ըստ նրա՝ Դանիէլը այդ պակասաւոր տառերով փորձել էր իր իմացած 4-րդ դարի հայերէնին յարմարեցուած այբուբեն ստեղծել՝ իրենց ասորական այբուբենի օրինակով, որը չունէր հայերէնին յատուկ ձայնաւորներ, վանկափման հնարաւորութիւն եւ լեզուա-քերականական հոլովումների, խոնարհումների, ու կցական բառաստեղծումների այլ լուծումներ: Պատմիչների տեղեկութիւնները կան, որ Մաշտոցը նոյնիսկ երկու տարի փորձել է աշակերտներ ուսուցել դանիէլեան գրերով եւ համոզուելով, որ դանիէլեան գրերով անհնար է արտայայտել հայոց լեզուի հնչական ճոխ համակարգը, ստիպուած էր լրացուցիչ ստեղծել եւս 12-14 գրանշաններ, միաժամանակ որոշելով լրամշակուած նոր, ամբողջական այբուբենի գրանշանների հնչական արտասանութիւնը: Սխալ էին նրանք, ովքեր կարծում էին, թէ նախամաշտոցեան շրջանում հայերէնի հնչիւնները աւելի քիչ են եղել: Մինչդեռ, ըստ գերմանացի լեզուաբան Մաքուարթրի, «...Այն ժամանակուայ օտարալեզու յայտնի (նախամաշտոցեան) այբուբեններից ոչ մէկը ի վիճակի չէր արտայայտելու հայերէնի բազմաթիւ ու դժուարին հնչիւնները», աւելացնենք՝ այժմեան գործող լատինական, յունական եւ այլ հիմքերով այբուբենները նոյնպէս ի վիճակի չեն եւ այդ հանգամանքը, ակներե-



ւաբար, խոչընդոտում է հայերի գրական արժէքների լայն տարածմանը: Ալբերտ Մուշեղեանը հերքելով Մաշտոցի գործը թերագնահատողներին, ապացուցում է, որ Մաշտոցի սպեղծած այբուբենում տառերի ձեւը, ձայնաւորները եւ աջընթաց գրելաձեւը չեն վերցուած յունարէնից: Նա փաստում է, որ հայերը արդէն Քրիստոսից չորս հարիւր տարի առաջ, քրմերի մեհենական մատեաններում գործածուած հին հայոց գրերում ունեցել են դրանք, թէեւ լրիւ չեն հասել մեզ: Ըստ նրա, Հայոց այդ հին գրերը, որ գործածուել են Հայաստանում, ազգակից էին նախաքրիստոնէական հին ժամանակներում գործածուած հնդկա-արիական կամ kharaposta-խարափոշտա (թարգմանաբար՝ էշի կաշւի մագաղաթ խարա-էշ-, տես խարազան-էշի մտրակ, եւ փոշթա-կաշի, փոստ) գրերին: Ալբերտ Մուշեղեանի հետազօտած այդ գրերը ժամանակին դուրս էին մնացել հնագրագէտների տեսադաշտից, մինչդեռ դրանք եղել են սեմական գրերից տարբեր եւ աւելի կատարեալ: Դանիէլեան գրերը, ըստ երեւոյթին, այդ գրերի մնացորդներն են: Տեղին է նկատել, որ մեր լեզուաբանները կարծես թէ դեռ չեն բացայայտել եթովպական գրերի՝ առաջին հայեացքից ընդհանուր նմանութիւնը մեր գրանշաններին, թէեւ նրանց մօտ կան նաեւ ճիշդ մեր նոյն գրանշաններից: Եթովպահայ ազգականներս ասում են, որ, օրինակ, մեր Վ եւ Ս տառերի պատկերով տառեր իրենք էլ ունեն, բայց տարբեր հնչումով: Պատմագէտ Արտակ Մովսիսեանը վկայում է, որ եթովպացիները ունեն «գաղթական գրեր» արտայայտութիւնը, դա համարելով որպէս հնարաւոր տարբերակ կամ հետեւանք՝ կապելով Հայաստանից գնացածների միջոցով այնտեղ քրիստոնէութեան տարածման փաստի հետ: Այս ամէնից յետոյ մեզ իրաւունք ենք վերապահում եզրայանգելու հետեւեալը: Քանի որ.

Ա) Հնդկաստանից մինչեւ Եւրոպա տարածուած հնդեւրոպացի ժողովուրդների (ովքեր դրացի սեմական ժողովուրդներից տարբերուելու համար իրենց անուանել են արիացիներ), հնդեւրոպական նախահայրենիքը գտնուել է ոչ թէ Ռուսաստանի հարաւում կամ Գերմանիայում եւ կամ՝ Պալքաններում (սրանք մերժուել են գիտնականների կողմից 1938 թ. Վիեննայի համագումարում), այլ, այսօր ընդունուած տեսութեամբ՝ Հայկական Լեռնաշխարհում,

Բ) Այդ արիական ցեղը 6-7 հազար տարիներ առաջ հնդեւրոպական նախահայրենիք Հայկական լեռնաշխարհից գաղթել ու տարածուել է մինչեւ Եւրոպա ու Հնդկաստան (յայտնի է ժողովուրդների մեծ գաղթ անունով), եւ այդ ժամանակ հնդեւրոպական նախալեզուն տրոհուել-բաժանուել է տարբեր լեզուների,

Գ) Գրի գոյութեան տարիքը նոյնպէս երկարում է մինչեւ 6-7 հազար տարիների խորքը,

Դ) Եւ հաշուի առնելով տարբեր ժողովուրդների այբուբենների փաստարկուած որոշ գրանշանների նոյնը կամ նման լինելը միմեանց եւ հայոց այբուբենի որոշ տառերին,

Ե) Հետեւաբար, վերը նշուած Հնդկաարիական «Խառափոշթա» (kharaposta) այբուբենը (եւ նրա մնացորդ դանիէլեան գրերը) սպեղծուել են Հայկական Լեռնաշխարհում եւ ունեցել են նոյն դերը, ինչպէս, ասենք լատիներէնը՝ այսօրուայ եւրոպական այբուբենների համար:

Կարեւոր է շեշտել, որ մինչեւ մաշտոցեան գրերի սպեղծումը, հայոց հին գրե-

րի հետ կապուած՝ վերը նշուած նախապատմութիւնը երբեք չէր կարող դոյզն իսկ նուազեցնել Մաշտոցի գործի արժէքը: Որովհետեւ նրան փառք բերած գործունէութիւնը հետեւեալում էր.

Մաշտոցը գիտութեան մարդ լինելով, հետաքրքրուած էր ոչ թէ ամէն գնով հեղինակային փառքի տիրանալու պատուախնդրական սին մղումներով, այլ (Խորենացու ձեւակերպումով) հայոց հին գիրը փնտռել-գտնելու իր իսկ փափաքով: Նա լաւ գիտակցում էր, որ գտնուած գիրը իր ժողովուրդի մշակոյթի կարեւորագոյն կռուանն է: Այլապէս անհետ կը կորչէին հին հայերէնի հեպքերը, կը խզուէր սերունդների կապը: Չենք կասկածում, որ եթէ չլինէր հայոց հին գրերի գոյութիւնը վկայող դանիէլեան գրերի հարցը, Մաշտոցը կը սպեղծէր ի՛ր գրերը, ինչպէս դա արեց դրացի Վրաց երկրի ու Աղուանքի ժողովուրդների համար: Կարծում ենք, որ Մաշտոցը, ըստ երեւոյթին, աւելի կարեւորել է՝

ա) Իր ժողովուրդի նախասկզբնական մշակոյթի հիմքը համարուող գրաստեղծութեան գոյութեան բուն փաստի հիմնաւորումը,

բ) Հայոց հին գործածական այդ գրի յարատեւութեան, վերագործածման եւ պահպանման գործօնը,

գ) Մեր հնադարեան այդ գրահամակարգին տէր կանգնելու եւ ժառանգելու իրաւունքի իրականացումը,

դ) Այդ ժառանգած ազգային գրի շահրունակականութեան ապահովումը:

ե) Այս բոլորը՝ յանուն հայոց ունեցած գրային համակարգ(եր)ի միասնականութիւնը վերականգնելու իր տեսլականի իրագործումի:

Հետեւաբար, ժողովրդի համար չէր կարող լինել աւելի մեծ գործ, քան այս նկատառումների ապացուցումը կամ դրանց իրականացումը, ինչին ի վերջոյ հասաւ մեծ գիտնականը: Միայն այս նպատակի համար նրա տքնանքը բաւական էր, որ նրան ազգ կերտող հանճարի փառքով պսակէին:

Մինչդեռ, նա արեց էլ աւելին.

Մաշտոցը իր փնտռտուքների արդիւնքում գտած հին հեթանոսական հայոց գրերի մնացորդ համարուող դանիէլեան գրերի պակասը լրացրեց, դրանց անհետացած հնչոյթները որոշեց (հնարաւոր է՝ քուրմերի մօտ պահուած մեհենագիր գրքերի հետ համեմատելու շնորհիւ), տառերին անուններ ու թային արժէքներ շնորհեց եւ որոշակի կարգով դասաւորեց, դրանք կապեց ու վանկեր (սիղոբաներ) կազմեց, սահմանելով դրանց հնչիւնակապակցութիւնների եւ ուղղագրական մի քանի ելակէտային կանոնները: Ահա, այս ամէնի արդիւնքում նա արդէն կարողացաւ սպեղծել հայոց լիակատար նոր այբուբենը: Այդ այբուբենը, շնորհիւ իր կատարելութեան ու կատարեալ ինքնատիպութեան, հին մատենագրութեան մէջ համարուել է աշխարհի առաջին ա՛յն վեց նախասպեղծ այբուբեններից մէկը, որոնք եղել են լրիւ ինքնուրոյն եւ վերցուած չեն ուրիշներից: Այդպիսին են համարուել՝ Աքքադի (բաբելա-ասորականը, փիւնիկեանը), Եգիպտականը, եբրայականը, յունականը, լատինականը եւ մաշտոցեան հայկական այբուբենը (միւսները, օրինակ՝ ռոմանական լեզուներից ֆրասիականի, սպանականի, իտալականի այբուբենները կազմուած են միեւնոյն հիմքի՝ լատինեերէնից վերցրածով, սլաւոնական ժողովուրդների ընդհանրական գիրը կազմուած է գլխաւորապէս յունական հիմքով, իսկ արաբական աւելի քան մէկեւկէս տասնեակ երկրներինը՝ միեւնոյն սեմական հիմքից են): Հետաքրքրական է, որ

հնադարեան մատենագիրների համոզմամբ աշխարհի այբուբեններից աստուածային ծագում ունեն միայն երկուսը՝ հրէականը (Մովսէսի բերած աստուածային պատուիրանների տախտակը) եւ Մաշտոցի սպեղծածը՝ «Աստծոյ թաթի» տեսիլքային միջնորդութեամբ: Տարբերութիւնն այն էր, որ հրեաները թշնամաբար դիմաւորեցին եւ կոտրեցին Մովսէսի տախտակը, իսկ հայերը՝ թագաւորից ու կաթողիկոսից մինչեւ ռամիկ ժողովուրդ, ցնծութեամբ դիմաւորեցին Մաշտոցին:

Մաշտոցի ստեղծած գրաբանական համակարգը (այբուբենը, ուղղագրական կարեւոր կանոնների սահմանումը եւ լեզուա-քերականական դրուածքը), այնքան կատարեալ էր, որ դարերի ընթացքում փոփոխման ենթարկելու կարիք չզգացուեց եւ անթերի ծառայեց տարբեր դարաշրջաններում մեր լեզուական բանաւոր խօսքի բոլոր գրական ճիւղերին: Այդ գրահամակարգը կարողացաւ գրաւոր արտայայտել նոյնիսկ մեր բազմաբարբառ խօսուածքները:

Մաշտոցեան գրահամակարգը նաեւ այնքան կենսունակ էր, որ ո՛չ միայն ապահովեց հետագայ դարերում հայ գրականութեան ու գիտութեան զարգացումը, այլեւ այդ գրահամակարգով հնարաւոր էր լիարժէք հաղորդակցուել արտաքին աշխարհի հետ, ապահովելով նաեւ գիտական տարբեր ճիւղերի ամենաբարձր մակարդակին համարժէք հայերէնով տեղեկատուութիւնը:

Մաշտոցը այն լուսաւոր հանճարն էր, ով հանդիսացաւ քրիստոնէական դարաշրջանի հայոց ազգի նոր գրի ու դպրութան սպեղծողը, առաջին այբբենարանի հեղինակը, առաջին ուսուցիչը եւ առաջին թարգմանիչը:

Մաշտոցը, մինչեւ գրասպեղծմանն անցնելը, նաեւ առաջինն էր, ով միայնակ կարողացաւ ամբողջապէս ուսումնասիրել լեզուների մէջ իր բարդ իւրայատկութեամբ յայտնի հայերէնի հնչիւնաբանութիւնը (լեզուագիտական առանձին ճիւղ) եւ հիմնովին համակարգել մեր լեզուի բաղաձայն եւ ձայնաւոր հնչական կազմը, մի գործ, ինչն այսօր մի ամբողջ գիտական մասնագիտական խմբի աշխատանք է համարւում: Փրոֆ. Էդ. Աղայեանի իրաւացի բնորոշմամբ, Մաշտոցը՝ իր ժամանակի ականաւոր գիտնականը, ոչ միայն լեզուագէտ էր, այլեւ հնչիւնաբան, ով փիրապետում էր հայերէնում տարբեր խօսուածքների եւ ընդհանուր հնչական համակարգին, մեր լեզուի քերականական կառոյցին, դրանց հիման վրայ սահմանելով իր եզակի ուղղագրութիւնը:

Մաշտոցը իր գրաբանական գործունէութեանը զուգահեռ, երկրի տարբեր գաւառներում շրջելու եւ ուսուցչական գործունէութիւն ծաւալելու ընթացքում նաեւ քարոզում էր քրիստոնէութիւնը եւ յընթացս պատրաստում հոգեւորականներ, ինչը, մեր կարծիքով, ուղղուած էր ոչ միայն կամ՝ ոչ այնքան եկեղեցական սպասաւորներ պատրաստելուն, որքան ապագայ դպրոցների համար ուսուցիչներ ապահովելուն:

Մաշտոցի գործունէութեան գնահատման մէջ պիտի ուզէինք շեշտել եւս մի հանգամանք: Յայտնի է, որ քրիստոնէութիւն ընդունելը երկրում ուղեկցուեց նաեւ հեթանոսական որոշ արժէքների ոչնչացումով (թերեւս եկեղեցին չհամաձայնի մեզ հետ), ինչպէս օրինակ, պաշտամունքային կոթողները ոչնչացնելով եւ այդ տեղերում եկեղեցիներ կառուցելը, քրմերին հալածելը, նրանց մօտ եղած հնագիր մատեանները անհետացնելը եւ այլն: Մինչդեռ Մաշտոցը իր փնտռած

դանիէլեան գրերը գտնելուց յետոյ, Գողթն գաւառում յատուկ հանդիպելով քրմերին, փորձել եւ յաջողել է գտած դանիէլեան գրերը համեմատել քրմերի ունեցած մատեանների մէջ եղած հայոց հին՝ մեհենական անուանուած գրերի հետ: Եւ ահա, Մաշտոցը մեր հնագոյն ու նոր (իր ժամանակի) մշակութային ժառանգութեան շարունակականութիւնը կեանքի կոչելու փաստով, որոշ չափով չէգոքացրեց նախաքրիստոնէական արժէքների կորուստի մասին եկեղեցուն ուղղուած ամբաստանութիւնները:

Մաշտոցի շրջագայութիւնների առաջին հանգրուանը գուսանական արուեստով փայլող Գողթն գաւառում, թերեւս նպաստեցին Մաշտոցին՝ խորամուխ լինելու հայ փոհմիկ երգարուեստի նրբին ծալքերին, ինչը զգացուեց նրա սրտեղծած հոգեւոր շարականներում: Նա սկզբնաւորեց 5-րդ դարի մեր միջնադարեան հոգեւոր երաժշտութիւնը: Եկեղեցու պատարագներում հնչուած մաշտոցաստեղծ շարականներից, սաղմոսներից շատերը գնահատւում են որպէս ժողովրդական երգի ակունքներից սերուած երգարուեստ, Եւ այսօր տեղի է ունենում նաեւ հակառակ գործընթացը՝ հոգեւո՛ր երգի ազդեցութիւնը մերօրեայ երաժշտական գործերի եւ երգարուեստի վրայ:

Սակայն Մաշտոցը նախ եւ առաջ քաղաքագէտ գործիչ էր: Երկրի պատմութեան խառնակ ժամանակներում, երբ Հայաստանի հպատակաբաժանման ու պետականութեան կորստի, նաեւ սեփական բանակի բացակայութեան պայմաններում Բիւգանդիոնի ու Պարսկաստանի փիրապետութեան տակ ծագել էր ազգաձուլման իրական վտանգը, երբ նոր քրիստոնէացած երկրի համար եկեղեցու ասորերէն եւ յունարէն պատարագների իմաստը անհասանելի էր ժողովրդին (ինչը, անշուշտ, խոչնդոտում էր քրիստոնէական հաւատքի տարածմանը), երբ արքունիքի գրագրութեան գիրը յունատառ էր, մէջտեղ էր դրուած երկրի ու եկեղեցու ինքնութեան պահպանման գերխնդիրը: Մաշտոցի լուսաւոր միտքը գտաւ այդ պայմաններում դրութիւնից դուրս գալու, ազգակործանումը կասեցնելու միակ իրական ու ամենաարդիւնաւէտ տարբերակը, այն է՝ պահպանել լեզուն՝ նրան ազգային գիր շնորհելու (կամ այն վերականգնելու միջոցով: Նրա հեռատեսութիւնը յուշում էր, որ թագաւորագուրկ եւ անգէն հայրենիքի փրկութեան միակ յոյսը ազգային արժէքների յարատեւման մէջ է: Յիրաւի, ծրագրուած նոր սրտեղծուելիք լեզուապահպան գիր ու գրականութեան միջոցով միա՛յն կարելի է ապահովել ունեցած սեփական մշակոյթի եւ աւանդութիւնների հետագայ պահպանումը, գարգացումը եւ փոխանցումը յաջորդ սերունդներին, իբրեւ գոյապահպանման հնարաւոր եւ մատչելի լուծում (ինչպէս միշտ, լեզուապահպանումը այսօր էլ համարւում է ազգային անվտանգութեան հիմնարար գործօն): Մաշտոցը գիտակցում էր, որ գիր չունեցող բանաւոր լեզուները աւելի շուտ են ենթակայ ձուլման կամ վերացման եւ ի գուր չէ պատմաբան Մանանդեանի պնդումը, թէ՝ լեզուի, կրօնի ու մշակոյթի պահպանման համար հայ ժողովուրդը պարտական է ոչ միայն ապստամբած ժողովրդի (Վարդանանց) արիութեանը, այլեւ աւելի շատ՝ հայ գրի ու լուսաւորութեան այդ մեծ տարածողին: Ճիշդ են ասում, թէ Մաշտոցի 36 գինուորները հային հասցրեցին մինչեւ այսօրը:

Իրաւացի է այն կարծիքը, թէ քաղաքագէտ-գիտնական Մաշտոցը պարսիկների դէմ պայքարում իր երկրի հիւսիսային կողմի ապահովութիւնը աւելի իրա-

կան եւ ամուր դարձնելու համար սփեղծեց նաեւ Աղուանքի ու վրացիների գիրը, նրանց մէջ եւս քրիստոնէութիւնը մայրենիով արագ տարածելու, կղզիացած չմնալու, մեր դրացիական կապերը ամրապնդելու եւ դրանով նրանց մեզ հետ համադաշնակից դարձնելու համար: Կորիւնը վկայում է, թէ՝ Մաշտոցը վրացիների գիրը սփեղծելով, «առանձին եւ անջատ-անջատ լեզուներով խօսող այդ վրացիներին համախմբեց, վերածեց մէկ ազգի»: Այդպիսով Մաշտոցը անդրկովկասեան երեք ժողովուրդների դպրութեան ու մշակոյթի զարգացմանը նպաստելու իր նախաձեռնութեամբ սփեղծեց լայն ճակատ՝ ընդհանուր թշնամու դէմ: Հետագայում արաբների, պարսիկների եւ քոչուոր այլ ցեղերի դէմ այդ տարածքի երեք երկրների միասնական համատեղ պայքարի բազում օրինակներ ունեցանք:

Մաշտոցը իր այբուբենի ուսուցումը սկսեց՝ նախ «մարաց կողմերն» անցնելով: Դա Նախիջեւանի, Գողթնի, Արցախի կողմերն էր: Նպատակը սոսկ այն չէր, որ այդ կողմերում հեթանոսութիւնը եւ քրմերի ունեցած ազդեցութիւնը աւելի ուժեղ էր եւ պէտք էր քրիստոնէութիւնը տարածել: Նպատակը քաղաքական էր, այն է՝ սահմանային մերձակայ հայկական գօտին ուժեղացնել՝ պարսկական ազդեցութեան եւ ոտնձգութիւնների դէմն առնելու համար: Յաջորդ քայլով Մաշտոցը անցաւ արդէն գրեթէ հռոմէական մարզի միաւոր դարձած Բիւզանդական Հայաստանի ապահովագրմանը՝ ընդդէմ յունարէն դպրոցի կողմից առաւել արագ ձուլող քաղաքականութեան: Մաշտոցը գիտէր, որ Բիւզանդիան դէմ էր իր գօտիի մէջ հայկական լեզուի ու դպրութեան ուժեղացմանը, սակայն չէր կասկածում, որ կայսրը կը թոյլատրի իրեն հայկական դպրոցներ բանալու, պարզապէս վախենալով պարսից կողմի հետ հայերի հնարաւոր մերձեցումներից:

Այսպիսով, Մաշտոցի խորաթափանց քաղաքականութեան շնորհիւ պարսիկներին ու յոյներին չյաջողուեց պետականութիւնից զուրկ հայերին ձուլել: Եւ ինչպէս ամէն անգամ, այսօր նոյնպէս, երբ մեր ազգային ինքնութեան կորուսփի վփանգի առաջ ենք յայտնուում, մենք ազգովին պէտք է դիմենք փորձութեան պահին մեր պապմութեամբ արդարացուած, ազգափրկիչ Մաշտոցեան դասին:

Ահա սրանցում է կայանում գիտնական եւ քաղաքագէտ Մաշտոցի սրբացման փառքի յարափեւման գաղտնիքը: «Խաւարն անիծելու փոխարէն մի մոմ վառիր» (սպարապետ Վազգէն Սարգսեանի ասոյթը): Մաշտոցը ջահ վառեց՝ իր ժողովրդին խաւարից դէպի լոյս առաջնորդելու համար: Սա էր Մաշտոցի գործը. իսկ դա պահպանելն ու սերունդներին ժառանգելը, մանաւանդ համաշխարհայնացման այս օրերում՝ մե՛ր գործն է: Ահա թէ ինչու, պարփաւոր ենք միշփ յիշել Մաշտոցի յիշափակի հանդէպ Պ. Սեւակի (եւ մեր) յանձնառութիւնը՝

Ու մենք փոքրերս ու Մեծդ մի օր
Հաւասարւում ենք, դառնում աջակից,
Դու գործն ես արել, մենք յանձն ենք առել:
Տէր լինենք այդ յանձնառութեանը:

Մարփ 2013
Ռոփ-Այլընփ, (Միացեալ Նահանգներ)

ԱՆՈՒՇ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԵՌԻ ԵՒ ԱՐԵԱՆ ԵՆԹԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՌՔԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ Յ. ՕՇԱԿԱՆԻ «ԾԱԿ ՊՏՈՒԿ» ՎԷՊՈՒՄ

Չունինք գրող մը, որուն ամէն մէկ գրողէն մեզի գային այն լայնքով, պարզողութեամբ մտածումներ, յոյզեր, քաղցրութիւններ ու պրպտմութիւն, որքան ասոնք իրաւ են Օշականի մօտ:
ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Գրականութիւնն աշխարհի գեղարուեստական կերպաւորումն է, ուսփի եւ՝ ժամանակի ու պատմութեան քննութեանը դիմանում են միայն այն արուեստագէտները, ովքեր բերում են նոր ու ինքնատիպ մտածողութիւն, կերպարի հոգեբանական դիտարկման բազմահամակարգ մօտեցումներ: Այս առումով յատկանշական է Յակոբ Օշականի ստեղծագործութիւնը, որ «պատկերակերտներու կամ ժանեակի, զեփիւռի, սոխակի եւ լուսինի ցուցահանդէս սարքողներու մենաշնորհը չէ, այլ «ժողովուրդին մեղքերուն ու արժանիքներուն տրտում կամ շքեղ հանդիսարանը»:

Հակադրման փորձով հանդէս գալով ազգային գրականութեան նահապետական աւանդոյթների դէմ՝ Օշականը կայուն նախապատուութիւն տուեց հերոսների վարքագծի սեռային դրդապատճառների գեղարուեստական քննութեանը, որն առաւելապէս արտացոլուել է «Ծակ պտուկ»ում:

Վէպում իբրեւ բնաշխարհիկ հայ գրող դրսեւորուած հեղինակի պատկերած գիւղաշխարհին ամբողջանում է այնտեղ ապրող մարդկանց «զարտուղի»



վարքագծով, նորովի բացայայտում գգայութիւններով ապրող մարդուն, ով ներշնչւում է զօրեղ ապրումներով: Այդ ապրումները, մարդկային գիտակցութիւնից անկախ, արդէն փորձարկուած են պապմութեան վիթխարի պեւողութիւնների մէջ: «Օշականի արուեսպին երկու հիմնանիւթերն» են՝ «զգայնութիւն եւ միտք» (մտածում), որոնցից, ի վերջոյ, սկիզբ է առնում գործողութիւնը: Կեանքն իր բնական իրադրութիւններով շերտաւորւում է գիտակցական եւ ենթագիտակցական ոլորտներում: Հերոսների հոգեբանական ապրումները, ենթագիտակցական շերտերում ծաւալուող խռովքները մարմնաւորւում են բարքերի եւ օրէնքի ուժ ստացած աւանդոյթների ձեւով. «Կեանքը բարքերու հանգոյց մըն է»:

Մարդկային գոյակերպի մէջ գիտակցօրէն սպառուած ժամանակը դիտւում է առանց կրքի, ապրումի: Բայց «կը մոռնանք մեր չգիտակցուած ժամանակը, որուն բոլոր հիւլէները թրթռուն են անով (կրքով): Կիրքին կիկլոնը (*պտրտամրրիկ-«Բ.»*) կ'անցնի մեր ներսի անդունդներէն ու մեզ կը սարսէ, ընդերկրեայ բախումներուն ամբողջ ողբերգական արհաւիրքովը» Այսպէս, կենսական զօրեղ ձգտումները փոխարինում են հոգեւոր ապրումներին: Կապարելութեան ձգտումը մշտարթուն ուղեկիցն է Օշականի կերպարների: Սրանից է ահա սկիզբ առնում հոգեխոյզ գրողի գեղագիտութիւնը՝ պատկերային արժէքաւոր համակարգով, ինքնատիպութեամբ եւ հոգեբանական համապարփակ վերլուծութիւններով: Վերջինների հիմքում, անշուշտ, ընկած է Ֆրոյդեան հոգեվերլուծութեան սկզբունքը մարդու սեռական կեանքի մասին:

«Ծակ պտուկ» վէպը սեռախտաբանական-սեռաճարակ զգացողութիւնների

հանդիսութիւն է, «կեանքէն գողցուած, փրկուած, պահուած պատկեր մը»: Այդ պատկերի մէջ ընդգծում է վէպի գլխաւոր հերոսուհին՝ Նազիկը, որի կեանքը՝ ծննդից մինչեւ մահ, «անշրջագիծ» զգայութիւնների, արեան եւ սեռի, ոճիրների ու կրքերի կծիկ է: Չէ՞ որ «կիրքերուն կիրքն է սեռը», առանց որի կեանքը կը լինէր անարիւն ու «անապրելի»: «Կիրքը Օշականի վէպին արարչանիւթն է»: Յիրաւի, Օշականի «Ծակ պտուկ» վէպը մթին յոյզերի հանդէս է, որտեղ կրքերն անգամ մարմաջով վերամշակուած են ներկայանում: Այդ կրքի սերմերը լող են տալիս մարդու արեան եւ հոգու «ծովերուն մէջ», եւ շատ յաճախ անգիտակցաբար, հակառակ մեր բոլոր ջանքերին՝ դուրս են խուժում ափերից, կլանում մեզ իրենց յորձանքի մէջ (գիտակցութեան հոսք):

«Իրականութեան մէջ ամէն ինչ ենթակայ է պատճառահետեւանքային կապի փիրական ազդեցութեանը, որի կարեւոր գործօններն են՝ բնաշխարհը, սովորոյթը, կենդանի կեանքը, մարդը, սեռը, բնազդը, ժառանգորդական շղթան»: Այս ամէնի ծնունդն ու հետեւանքն է ծակպտուկ Նազիկը, որն իր գիտակցական կեանքն ապրում է «ջիղերով, քիչ անգամ ուղեղով»: Այսպէս, մարդու ներքին կեանքը հնարաւորութիւն է տալիս նաեւ վերհանելու 19-րդ դարավերջի հայ գիւղաշխարհի ներքին շերտերը՝ հաւատարիմ արեան կանչին ու նրա «վարդապետութեանը»: Բայց գիւղը «կը զարնուի քաղաքէն արեան, հոգեղէն plasma-ի բաղադրութեամբ մը», իր ժողովրդով, որոնց՝ դարերով սրբագործուած բարքերն ու աւանդոյթներն ամբողջացնում են հայ ժողովրդի համընդհանուր կենսափիլիսոփայութիւնը: Այդ կենսափիլիսոփայութեան մէջ վեր են յառնում հոգեղէն միութիւններ, ինչպիսիք են՝ կիրքը, զգացումը, երազը, փառապանքը, հեշտանքը եւ զգայական շատ այլ ձգտումներ, որոնք կրում են ազգային խառնուածքի, ժառանգականութեան հաւատակնիքը. «Օշականի գիւղը, իբրեւ բարք, գրած է իւրայատուկ բիւրեղացում: ...Կեա՛նքը: Որ երբ կ'ապրուի՝ փրամա է, երբ սուզուի փեւողութեան մշուշներուն ծոցը՝ բարք անունը կ'առնէ»: Հեղինակը բարքերն ու աւանդոյթները ինքնատիպ միջոց է դարձնում ժամանակաընթացքի վերլուծման եւ կեանքի արտացոլման համար. վէպի էջերում պատկերուած շուրջ քսան հիմնական վիճակները հոգեբանական այն վայրկեաններ են, որոնք ներկայացնելու համար հեղինակը դրանց հիմքում դրել է «կտոր մը բարք»:

«Ծակ պտուկ» վէպում Օշականը նախ կարեւորում է սեռական հակումի ժառանգորդական փոխանցման պահը, ինչը ի սկզբանէ դրսեւորւում է մայր եւ աղջիկ Նազիկների վարքագծում՝ դառնալով ճակատի գիր: Ժառանգականութիւնն այլընտրանք չունի: Դուստր Նազիկը ժառանգում է մօր անունը եւ «ըստ օրինի նաեւ անոր մեղքերը»: Մի հին աւանդութեան համաձայն՝ նրա անուան հետ քայլում են արիւնը, ոճիրը, խենթութիւնը: Եւ «միջին էն իր գոյնովը, մարմնովը, աչքերուն յանդգնութեամբը եւ կուրծքին շքեղ խռովքովը» առանձնացող աղջիկը ենթակայ է դառնում իրական-հաւանական բոլոր փորձութիւններին: Բառերն անզօր են՝ բացատրելու այն «եղերական երեւոյթը, որ աղուոր աղջիկն է գեղերուն մէջ:...Անոնց ճակատագի՛րը: Աստուած թշնամուն չտայ: Ու Հայրապենց Նազիկը մէկն էր անոնցմէ»:

Գրողը թափանցում է հերոսների ներաշխարհը, բացում ապրումների, կրքերի կծիկը, սեռի, սիրոյ եւ մահուան խորհուրդը: Իր գործադրած սպեղծագործական մեթոդը հեղինակին հնարաւորութիւն է տալիս վեր հանելու կեանքի դրաման օրէնքի ուժ սպացած բարքերի փիրոյթում: Վէպի գործողութիւնները զարգանում են հերոսների ենթագիտակցական շերտերի վերլուծման ու բացայայտման տրամաբանութեամբ: Իսկ դիպաշարային ծաւալումներն, ի վերջոյ, յանգեցնում են նրան, որ սեռի եւ արեան պահանջը եւ կեանքի անկազմակերպ «կարգաւորման» բնական ընթացքն անէացնում են իրական կեանքին բարքերով պարտադրուած բարոյական քողը: Օշականը մանրամասն նկարագրութեամբ վեր է հանում Նազիկի՝ ծնողներից ժառանգած արեան շերտերը՝ ընդգծելով նրանցում եղած կապտաղի հոսքերը: Այդ հոսքերը ներհիւսուած են սեռի եւ արեան անյագ զգացումին: Այս ամէնից վեր է յառնում մեղքի գաղափարը, որ վէպում ժառանգականօրէն փոխանցւում է ծնողից զաւակին: «Անոր մօրը մեղքը իր ճակտին թառած չարագուշակ լոյսի մը պէս պտըտուեցաւ անոր հետ: Անոր հօրը մեղքը աղտի պապմուճանի մը պէս կը փաթթէր զինքը», - գրում է Օշականը՝ կարեւորելով նաեւ Նազիկի գեղեցկութիւնը՝ որպէս նրա ողբերգական ճակատագրի ուղենիշներից մէկը: Որբ մնացած Նազիկին հոգեպէս պանջում էր նաեւ մօր մահուան առեղծուածը, ինչն աղջկայ միտքը բորբոքում էր անպատմելի զգացումներով: Նա իր երեւակայութեան մէջ կերտում է մօր կենդանագիրը՝ նկատելով, որ «մօրը վրայ խորհելէ եղք անպատճառ կը խաղար իր մարմինին հետ»:

Բռնկուած կրքի իւրաքանչիւր յորդումի մէջ հեղինակը նկատելիօրէն ընդգծում է հերոսուհու հարուստ ժառանգութիւնները: Տասներկու տարեկանում աղջիկը կին էր արդէն եւ մայրանալու ճանապարհին ահա հօր եւ պապի կամքով պիտի ամուսնանար Զաքարենց Զաքարի հետ: Մինչ Նազիկն իր մէջ կրում էր արդէն երեք ամիս առաջ կեանքից հեռացած Թումասիկի ժառանգին, հակասական զգացողութիւնները բզկտում էին աղջկայ սիրտն ու միտքը: Ինքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ շարքային մի ծակ պտուկ, ում հետագայ ճակատագիրն արիւնով է գրուած: Աղջիկը կրկնում էր մօր «...ահաւոր փորձը, ամօթը, դառնութիւնը՝ ապրելուն եւ դարձել էր երկու հզօր զգացումների խաղալիք՝ «ան սէրը կուզէր: Ան մահը կուզէր»: Մնում էր հնազանդօրէն հաշտուել մահուան գաղափարի հետ: Բայց «ամիսէն հարսանիքն էր...»: Վէպում այս նախադասութեանը յաջորդում է մեծ մօր եւ թոռան նոյնաբովանդակ երազների նկարագրութիւնը, որը հարուստ հիմք է հանդիսանում հերոսուհու՝ հետզհետէ ուրուագծուող ողբերգութեան զարգացման համար: Ճակատագրական, թէ նախազգուշացնող առաքելութեամբ՝ նոյն գիշերը փափ եւ թոռան երազներում երեւում է մայր Նազիկը: Յանդուգն, անվախ Հայրապենց Խաթունը երազի տրամաբանութեամբ գուշակում է իրականութիւնը: Եւ չի սխալւում մեծ մայրը. տառապանքը փորձարկուած է դառը ժամանակով, հարս Նազիկի ճակատագրական մեղքով: Նախախնամութեամբ սահմանուած մի վճռով՝ Նազիկը առագաստի գիշերը դուրս շպրտուեց փողոց:

Նազիկն այլեւս ծակ պտուկ է գիւղի բերանում, իսկ նմանների ներկայու-

թիւնը չի կարելի նոյնիսկ մինչեւ առաւօտ հանդուրժել: «Ծակ պտուկները չէին ապրեր: Եթէ անոնք չսպաննէին իրենք զիրենք, գեղը իր արիամարհանքին, դանդաղ ու անզգամ ծաղրանքին տակ կը չորցնէր զանոնք». սա էր գիւղի օրէնքը: Սակայն Զաքարը, ի վերջոյ, պիտի պարզէր, թէ ում հետ է նախկինում կենակցել իրեն մէկ գիշեր պատկանած Նազիկը: Այդ ընթացքում, Զաքարի հետ մենակ մնալով, Նազիկը կարծես վերստուգում-վերահաստատում եւ ինքնարդարացնում է իր արեան փենչը, սեռի պահանջը. «Անիկա փեսաւ, ու շատ յստակ, թէ ինչ որ կինն էր իր մէջ, տղաւին չէր առնուած, չէր նուաճուած: Թէ՝ էրիկ մարդը, այր տարրը դեռ դուրս էր իրմէ: ...Ու ահա կը դառնար ան իր իգութան, մէկէն ի մէկ, այն անորակելի բանին, զոր մշակէր էր այնքան կանուխ, անպատում ճամբաներէ, հաւաքեր էր ցեխին ու արիւնին ու մեղքին մէջէն ու փուած անոր՝ ձեւը իր զմայլելի մարմինին...»: Օշականը հանգամանօրէն բացում է մեղապարտ կնոջ հոգու գաղտնիքները: Մահն ու սէրը հաւասարապէս փիրական են դառնում գիւղացի աղջկայ մտածումների եւ զգացումների մէջ: Հեղինակը հերոսուհու վարքագծի դրսեւորման ինքնափիպութիւնը բխեցնում է կենսաբանական գործօնի (սեռի եւ արեան), բնական գրգիռների առաջնայնութեան գաղափարից: Կինն էապէս կենսաբանական էակ է եւ, որպէս այդպիսին՝ առեղծուածային, անքննելի: Գեղեցկութիւնը հպարտութիւն է կնոջ համար, բայց շատ յաճախ կործանարար է դառնում, երբ բախւում է հասարակութեան մէջ արմատաւորուած կարծրատիպերին:

Գիւղացին ըմբռնումով, ներողաբար է վերաբերւում մահուանը, հիւանդութեանը, նիւթական զրկանքներին, բայց անասելի անողոք է կնոջ մեծ ու փոքր մեղքերի հանդէպ, որի դափն սկսում է հեգնելով, ապա նրա ճակատագիրը պահ տալիս երգերին՝ մեղապարտի անուանը դաջուած դատավճիռը սերնդէ սերունդ փոխանցելու միտումով: Կարճ ժամանակամիջոցում բախտավճիռ սայթաքումը լեզու է դնում գիւղի բերանում եւ վերհիւսւում է Նազիկի ձօներգը՝ շարունակելով շահարկել զոհի գեղեցկութիւնը, մօր անցեալը, հօր դժոխային վարք ու բարքը եւ, առհասարակ, Հայրապենց տան բոլոր թաքուն եւ անանուն մեղքերը: Ժողովրդի արդար դատով՝ «մարն ու աղջիկը դրուեցան նոյն գիծին վրայ: Ու խօսեցուցին ժառանգութիւնը, ամբարշտութիւնը: Ողբերգական գիշերուանից օր չանցած՝ գիւղացու շուրթերին էր հին ու հզօր երգը՝

Սիրեմ, Նազիկ, ընքուընիդ,

Օսկի գրիչէն քաշած...

Յիրաւի, եղերական երեւոյթ է գեղեցիկ աղջիկը «գեղերուն մէջ»: Ողբերգութիւնն առաւել քան սոսկալի է, երբ նոյն գեղեցիկը մերժւում է հասարակութեան կողմից, սեփական ընտանիքից, աւելին՝ սիրելիից, իսկ յիշեալ վէպի հերոսուհու պարագայում՝ կնքւում «ծակ պտուկ» անունով: Արգելուած պտուղը քաղցր է լինում. առերեւոյթ անպատասխան թուացող սիրոյ զգացումը աղջկայ մէջ աւելի է սրում սիրելիի կողքին լինելու, նրա առնականութիւնը վայելելու ցանկութիւնը: Անպատիւ եղած հերոսուհին՝ հոգեպէս եւ ֆիզիքապէս ջլապտող Նազիկը, հաւատարիմ իր սեռային «յաճախանքին», անկարող էր միտքն ազատել

Զաքարենց Զաքարի մասին մտածումներից, որոնք պտտւում էին անկողնային տեսարանների, մերկութիւնների եւ գայթակղութիւնների շուրջ:

Չբաւարարուած ցանկութիւնները ծնում են տառապանք: Ֆրոյդը նկատել է, որ մարդկային քաղաքակրթութեան կատարելագործման համար անհրաժեշտ է եղել (եւ է) ճնշել մարդու սանձարձակ բնազդներն ու կրքերը եւ դրանք ենթարկել հասարակութեան կողմից սահմանուած օրէնքներին, եւ որ ամենակարեւորն է, բարոյական սկզբունքներին: Բայց միեւնոյն ժամանակ մարդու ճնշուած ու ենթագիտակցութիւն մղուած բնազդները չեն ոչնչանում, այլ շարունակում են էական դեր խաղալ մարդու հոգեկան աշխարհի ձեւաւորման գործում՝ ուղղութիւն տալով եւ վերաիմաստաւորելով մարդկային վարքի ամենատարբեր դրսեւորումները:

Նազիկի եւ Զաքարենց Զաքարի փոխադարձ սեռային հակումները, արեան խլրտուքը իմաստաւորում են մարմնական ցանկութիւնների վերերկրային, լուսեղէն բնոյթը: Օշականն անհատի հոգեկանը դարձնում է իրականութեան արտացոլման յատուկ ոլորտ, իւրատիպ ոսպնեակ, որի մէջ տրոհւում-անդրադարձւում է մարդ-միջավայր բազմաշերտ ու բազմաբարդ համակարգը: Այս երկու հերոսներն իրենց կեանքի ընթացքով, սիրոյ եւ սեռի ենթագիտակցական խռովքով հակադրւում են փիրող միջավայրի սպանիչ ափելութեանը՝ հաւատարիմ մնալով ի վերուստ սահմանուած ճակատագրին: Գ. Յակոբեանը* նկատում է՝ «նորավէպն էր, որ ստեղծաբանօրէն առկայացրեց հոգեբանութեան եւ հոգեվերլուծութեան գեղարուեստական անդրադարձումը»:

Մեծ մօր՝ Հաճի Խաթունի մահուամբ սրւում է Նազիկի ողբերգութիւնը. աղջիկը բոլորովին մենակ է մնում սեփական գերդաստանի եւ գիւղի ափելութեան առջեւ: «Գեղը կ'ափէր, բայց կը հեգնէր ու կ'երգէր Նազիկը».

Սիրեմ, Նազիկ, ընքուընիդ
Օսկի գըրիչէն քաշած...

Թւում էր՝ մահը միայն հոգեկան անդորր պիտի բերէր Նազիկի խռովայոյզ հոգուն, բայց համակերպուելը յարիր չէր հերոսուհու բնութեանը: Ծակ պտուկների մէջ էլ զարթուղի Հայրապենց Նազիկը կրաւորականութիւն չի դրսեւորում իր վարքագծում եւ չի համակերպւում իր ճակատագրի տրուածքին. իրար են խառնւում սէրն ու կսկիծը, պատրանքն ու իրականութիւնը՝ հնչեցնելով սիրոյ տառապանքի յաւերժական դրաման երջանկութեան փնտռտուքի ճանապարհին: Անշեղ ընթանալով երջանկութեան հեպքերով՝ կործանւում է սեռի եւ արեան խլիրտներին հաւատարիմ հերոսուհին, սակայն վերջինիս գեղեցկութիւնն ու փարաբախտ ճակատագիրը յաւերժում են երգերի ու յանգերի մէջ.

Սիրեմ, Նազիկ, ընքուընիդ,
Արուն գըրիչէն քաշած...

**Գրականագէտ, մեջբերում՝ Յակոբեան Գ., «Արեւմտահայ նորավէպը», Երեւան, 1996, էջ 66-67:*

Սրբուհի Ալեքսանյան

ՓԱԹՐԻՔ ՄՈՆՏԻԱՆՕ
2014-Ի ՆՈՊԷԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ

Այսօր ունիմ այն պատասխանատուութիւնը, որ յիշողութիւնը նուազ ինքնավստահ է եւ պարբերաբար պայքարիլ յիշողութեան կորուստի (amnésie) ու մոռացման դէմ: Մոռացման այս իւաւին, մոռացման այս զանգուածին պարտճաւով, որ ամէն բան կը ծածկէ, կը յաջողինք միայն բռնել անցեալի պատառիկներ, կորսուած հեպքեր, մարդկային խուսափուկ ճակատագիրներ:

ՓԱԹՐԻՔ ՄՈՏԻԱՆՕ
Վարուած Սթոքհոլմի իր ճառէն

2014-ի Գրականութեան Նոպէլեան մրցանակը սպացած էր Փաթրիք Մոդիանօ՝ ծնած 1945-ին: Շուէդի ակադեմիոյ մէջ իր արտասանած խօսքը նպաստ է գրողը եւ գրականութիւնը հասկըննալու, կը լուսաբանէ գրողը եւ ընթերցողը, որոնք այս կամ այն ձեւով լրացուցիչ են: Ուշագրաւ վկայութիւն մը՝ գրողին եւ գրասէրին համար: Սկզբեւ թարգմանաբար ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք իր խօսքը, զայն կարելի հարազատութեամբ հայացնելով:

Խմբ.



DISCOURS A L'ACADEMIE SUEDOISE
PATRICK MONDIANO
(Gallimard, 2014, 34 pp.)

Նոպէլի գրականութեան դափնեկիր
Փաթրիք Մոդիանոյի իսօքը
Շուէդի Ակադեմիոյ մէջ մրցանակի սրսցման օրը

Պիտի ուզէի ձեզի պարզապէս րսել, որ երջանիկ եմ ձեր մէջ գտնուելով եւ որքան զգացուած եմ այն պատիւին համար, զոր ինծի րնծայեցիք՝ շնորհելով Նոպէլեան Գրականութեան մրցանակը:

Առաջին անգամն է, որ ճառ պիտի արտասանեմ այսքան բազմամարդ ժողովի մր առջեւ եւ որոշ վախ մր կր զգամ: Կր փորձուինք խորհիլ, որ գրողի մր համար բնական է այս փորձր: Բայց գրող մր ... գէթ վիպասան մր ... յաճախ դժուար յարաբերութեան մէջ է խօսքին հետ: Եւ եթէ յիշենք ուսումնական տարբերութիւնր գրաւորի եւ բերանացիի միջեւ, վիպասանր աւելի ապակ է գրաւորի, քան բերանացիի: Ան սովոր է լռելու, եթէ կ'ուզէ թափանցուիլ մթնոլորտով մր, պէտք է, որ հալի ամբոխին մէջ: Կր լսէ խօսակցութիւնները առանց այդ երեւոյթր ունենալու, եթէ միջամտէ խօսքի մէջ, այդ կ'րնէ միշտ քանի մր զգոյշ հարցումներ ուղղելու համար, որպէսզի աւելի լաւ հասկնայ իր շուրջի կիներն ու այրերր: Իր խօսքր տափամսոփ է, իր գրութիւնները փեւաբար ջնջելու սովորութեամբ: Վստահաբար՝ բազմաթիւ սրբագրութիւններէ եփք, իր ոճր կրնայ ջինջ րլլալ: Բայց երբ խօսք կ'առնէ, ալ կարելիութիւնր չունի իր վրանումները ուղղելու:

Կայ նաեւ այն, որ ես կր պատկանիմ սերունդի մր, երբ մանուկներուն թոյլ չէին տար խօսելու, բացի քանի մր հազուադէպ առիթներէ եւ եթէ արտօնութիւն խնդրէին: Բայց զիրենք չէին լսեր եւ շատ յաճախ իրենց խօսքր կ'րնդհատէին: Այս կր բացատրէ մեզմէ ոմանց արտայայտուելու դժուարութիւնր, երբեմն վարանոտ, երբեմն արագ, կարծէք ամէն վայրկեան վախնային միջամտութենէ: Հոնկէ է անկասկած այս ցանկութիւնր, որ զիս գրաւեց, երբ մանկութենէս դուրս կու գայի: Կր յուսաք, որ չափահասներր ձեզ պիտի կարդան: Ուստի պիտի սրիպուին ձեզ լսել առանց միջամտելու եւ գէթ մէկ անգամ պիտի գիտնան ինչ կայ ձեր սրտին վրայ:

Այս մրցանակի ծանուցումր ինծի անիրական թուեցաւ, եւ անհամբեր էի գիտնալու, թէ ինչու զիս րնտրած էիք: Այդ օրր, կր խորհիմ, որ այդքան ուժգնօրէն զգացի, թէ վիպասանր որքան կոյր է իր իսկ գիրքերուն նկատմամբ, եւ որքան րնթերցողներր աւելի գիտեն, թէ ինչ կր գրէ ինք: Վիպասան մր երբեք չի կրնար իր րնթերցողր րլլալ, բացի իր ձեռագիրի շարահիւսական սխալներր սրբագրելէ, կրկնութիւններր վերցնելէ կամ ջնջելէ աւելորդ պարբերութիւն մր: Իր գիրքերէն սոսկ շփոթ կամ մասնակի պատկերացում մր ունի ան, ինչպէս նկարիչր, որ զբաղած կ'րլլայ առաստաղին վրայ որմանկար մր գծելով, պառկած լաստակներու վրայ, շատ մօտէն զբաղելով մանրամասնութիւններով, առանց ունենալու ամբողջի պատկերացումր:

Մենակեացի հետաքրքրական աշխատանք է գրել: Վհատութեան պահեր կ'ունենաք, երբ կր խմբագրէք վէպի մր առաջին էջերր: Ամէն օր սխալ ուղիով րնթանալու պատրաստութիւնր կ'ունենաք: Ուստի

փորձութիւնը մեծ է եփ գալու եւ հեփեւելու այլ ուղիի մը: Այդ փորձութեան առջեւ պէտք չէ կքիլ եւ հեփեւիլ նոյն ուղիին: Ափիկա քիչ մը կը նմանի ձմրան գիշեր մը ինքնաշարժի մը ղեկին եփին գփնուելուն եւ յառաջանալ սառած ճամբու վրայ, առանց փեսողութեան: Ընփրանք չունիք, եփ դարձ չէք կրնար ընել, սփիպուած էք շարունակել՝ ըսելով, որ ճամբան պիփի աւարփի, վերջապէս պիփի ըլլայ աւելի կայուն, եւ մառախուղը պիփի չքանայ:

Գիրք մը աւարփելու պահուն, ձեզի կը թուի, որ ան ձեզմէ կ'անջափուի եւ արդէն կը շնչէ ազափութեան օդը, ինչպէս մանուկները, դասարանին մէջ, ամրան արձակուրդի նախօրեակին: Անոնք ցրուած եւ աղմկարար կ'ըլլան եւ բնաւ չեն լսեր ուսուցիչը: Նոյնիսկ երբ կը գրէք վերջին պարբերութիւնները, գիրքը ձեզի հանդէպ կը ցուցաբերէ թշնամանք՝ ձեզմէ ազափելու իր աճապարանքին մէջ: Եւ ձեզ կը լքէ հազիւ թէ գրած կ'ըլլաք վերջին բառը: Վերջացած է, ձեզի պէտք չունի այլեւս, արդէն ձեզ մոռցած է: Այնուհեփեւ ընթերցողներն են, որ զինք պիփի յայփնաբերեն իրեն: Այդ պահուն կը զգաք մեծ պարապ մը եւ լքուած ըլլալու զգացում: Նաեւ փեսակ մը անբաւարարութիւն գիրքին եւ ձեր միջեւ եղած կապին, որ շափ արագ խզուած է: Այս անբաւարարուածութիւնը եւ անկափարի զգացումը ձեզ կը մղեն գրելու յաջորդ գիրքը, հաւասարակշռութիւնը հասփափելու համար, առանց երբեք անոր կարենալ հասնելու: Տարիներու անցքին հեփ, գիրքերը կը իրարու կը յաջորդեն եւ ընթերցողները պիփի խօսին «երկ»ի մը մասին: Բայց դուք պիփի ունենաք զգացումը դէպի առաջ երկար փախուսփի մը:

Այո՛, ընթերցողը աւելին գիփէ գիրքի մը մասին, քան գրողը ինք: Վէպին եւ ընթերցողին միջեւ կը պափահի երեւոյթ մը, յար եւ նման լուսանկարի մը պափրասփութեան, այնպէս ինչպէս այդ կ'ընէին թուայնացման ժամանակէն առաջ: Մութ սենեակին մէջ, անոր փպագրութենէն առաջ, լուսանկարը քիչ-քիչ փեսանելի կ'ըլլար: Քանի կը յառաջանանք վէպի մը ընթերցման մէջ, նոյն քիմիական ընթացքը փեղի կ'ունենայ: Բայց որպէսզի նման համաձայնութիւն գոյութիւն ունենայ հեղինակին եւ ընթերցողին միջեւ, անհրաժեշփ է, որ վիպագիրը երբեք չմղէ իր ընթերցողը - այն իմասփով, որ կ'ըսուի երգիչին համար, որ ուժ կու փայ ձայնին - այլ զայն անզգալաբար փանի եւ անոր ձգէ բաւարար կարելիութիւն, որպէսզի գիրքը կամաց կամաց զինք դրոշմէ, եւ այդ արուեսփով մը, որ կը նմանի չինական ասեղներով դարմանումի (acupuncture), երբ կը բաւէ ասեղը մխել ճշգրիփ փեղ մը եւ հոսքը կը փարածուի ջղային դրութեան մէջ:

Այս մփերիմ եւ լրացուցիչ կապը վիպագիրին եւ իր ընթերցողին միջեւ, կը խորհիմ, որ կը գփնենք երաժշփութեան մէջ: Միշփ խորհած եմ, որ գրելը մօփ է երաժըշփութեան, բայց շափ աւելի նուազ անխառն, եւ միշփ նախանձած եմ երաժիշփներուն, որոնք ինծի կը թուէին վէպէն աւելի բարձր արուեսփ մը կիրարկել - նաեւ բանասփեղծները, որոնք աւելի մօփ են երաժիշփներուն, քան վիպագիրները:

Մանուկ՝ սկսած եմ բանասփեղծութիւն գրել եւ անկասկած անոր շնորհիւ է, որ աւելի լաւ հասկցած եմ մփածումը, զոր կարդացած եմ փեղ մը. «Գէշ բանասփեղծներով է, որ կ'ունենանք լաւ արձակագիրներ»: Եւ ապա, ինչ կը վերաբերի երաժշփութեան, վիպագիրի մը համար այդ յաճախ կը վերաբերի իր դիփած բոլոր անձերը, համայնապափկերները, փողոցները բերել երաժշփական հափուածի մը մէջ, որ իրեն անկափար պիփի թուի: Վիպագիրին մօփ միշփ կը մնայ ափսոսանքը անխառն երաժիշփ մը եղած չըլլալու եւ յօրինած չըլլալու Շոփէնի «Գիշերա-

յիններ»ը (Les Nocturnes):

Վիպագիրի մը յստակատեսութեան պակասը եւ քննական հեռաւորութիւնը իր գիրքերու ամբողջութեան կը կապակցուի երեւոյթի մը հետ, որ կախում ունի նաեւ երեւոյթէ մը, զոր ես նկատած եմ իմ եւ շաբերու պարագային. ամէն նոր գիրք, այն պահուն, երբ կը գրուի, կը ջնջէ նախորդը այն աստիճան, որ զայն մոռցած ըլլալու տպաւորութիւնը կ'ունենամ: Կը կարծէի զանոնք գրած ըլլալ մէկը միւսէն եղք՝ առանց շարունակականութեան, յաջորդական մոռացումներով, բայց յաճախ նոյն դէմքերը, նոյն անունները, նոյն վայրերը, նոյն խօսքերը կը յայտնուին մէկէն միւսը, ինչպէս զարդագիծերը գորգի մը, զորս հիւսած ըլլայինք կիսաքուն վիճակի մը մէջ: Կիսաքուն վիճակ մը կամ արթմնի երազ մը: Վիպագիր մը յաճախ գիշերաշրջիկ մըն է, այնքան թափանցուած իր գրելիքով, որ կարելի է վախնալ, թէ կրնայ ճզմուիլ փողոցէն անցած պահուն: Բայց կը մոռնանք գիշերաշրջիկներու ծայր աստիճան ճշգրտութիւնը, երբ կը քալեն տանիքներու վրայ, առանց երբեք իյնալու:

Նոպէլի մրցանակին հետեւած յայտարարութեան մէջ ուշադրութիւնս գրաւեց հետեւեալ խօսքը, որ կ'ակնարկէ վերջին Համաշխարհային պատերազմին. «Ան քողազերծեց Գրաւման աշխարհը»: Ես, բոլոր անոնց պէս, 1945-ին ծնածներ, պատերազմի զաւակ եմ, եւ աւելի ճշգրտութեամբ, քանի որ ծնած եմ Փարիզ, զաւակ մը՝ որ իր ծնունդը պարտական է Գրաւեալ Փարիզի: Անոնք, որոնք այդ Փարիզին մէջ ուզած են շուտով մոռնալ, կամ միայն յիշել առօրեայ մանրամասնութիւններ, անոնցմէ ոմանք խաբկանքը կ'ունենային, որ ի վերջոյ ամէն օրուան կեանքը այդքան ալ տարբեր չէ անկէ՝ զոր կը վարէին բնական ժամանակի մէջ: Գէշ երազ մը, նաեւ անորոշ զղջում մը, որ այս կամ այն ձեւով վերապրած ենք: Եւ աւելի ուշ, երբ զաւակները հարցումներ կ'ուղղէին անոնց այդ օրերու Փարիզի մասին, անոնց պատասխանները խուսափողական էին: Կամ լուռ կը մնային, կարծէք ուզելով ջնջել իրենց յիշողութենէն այդ խաւար օրերը եւ մեզմէ թաքցնել բան մը: Բայց մեր ծնողներու լռութիւններուն դիմաց, ամէն բան կռահեցինք, ինչպէս որ մենք կարծէք այդ ապրած ըլլայինք:

Տարօրինակ քաղաք՝ բռնագրաւման տակ գտնուող Փարիզը: Երեւութապէս կեանքը կը շարունակուէր «ինչպէս առաջ». թատրոնները, շարժանկարի սրահները, երգ-երաժշտութեան զբօսավայրերը, ճաշարանները բաց էին: Ձայնասփիւռէն կը լսուէին երգերը: Նոյնիսկ թատրոններու եւ շարժանկարի սրահներու մէջ աւելի մարդիկ կային, քան պատերազմէն առաջ, կարծէք այդ վայրերը ըլլային ապաստարաններ, ուր մարդիկ կը հաւաքուէին եւ կը սեղմուէին իրարու՝ ապահով զգալու համար: Բայց անսովոր մանրամասնութիւններ կը նշէին, որ Փարիզը նոյնը չէր ինչպէս անցեալին: Ինքնաշարժներու բացակայութեան պատճառով, ան լուռ քաղաք մըն էր - լռութիւն՝ ուր կը լսուէր ծառերու սօսափիւնը, ձիերու կճղակներուն թխկոցը, ամբոխին քայլերուն ձայնը պողոտաներու վրայ, եւ ձայներու խառնաշփոթ աղմուկը: Փողոցներու լռութեան մէջ եւ պարտադրուած մութին, որ ձմրան կ'իյնար ժամը հինգի շուրջ, եւ որուն ընթացքին պատուհաններէն նուազագոյն լոյսն անգամ արգիլուած էր, այդ քաղաքը կը թուէր բացակայ ըլլալ ինքնիրեն - քաղաք «առանց հայեացքի», ինչպէս կ'ըսէին բռնագրաւող նացիները: Չափահասները եւ մանուկները կրնային մէկ վայրկեանէն միւսը անհետ անյայտանալ, եւ նոյնիսկ բարեկամներու հետ անոնք կը խօսէին կէս բառերով եւ խօսակցութիւնները երբեք անկեղծ չէին՝ զգալով, որ օդին մէջ սպառնալիք մը կը

սաւառնէր:

Այս գէշ երագի Փարիզին մէջ, ուր կարելի էր զոհ ըլլալ մափնութեան մր եւ համախումբ ներբակալութեան մը՝ գեպնուղիէ մը ելքին, դիպուածային հանդիպումներ կ'ըլլային անձերու միջեւ, որոնք երբեք իրարու հանդիպած պիտի չըլլային խաղաղութեան ժամանակ, անսպոյգ սէրեր կը ծնէին կրակմարի շուքին, առանց երբեք վստահ ըլլալու զիրար պիտի վերագտնէին յաջորդ օրերուն: Եւ այդ՝ յաճախ անվաղորդայն հանդիպումներուն իբրեւ հեփեւանք, յաճախ վատ հանդիպումներ, որոնք հեփագային ծնած են մանուկներ: Ահա ինչո՞ւ բռնագրաւեալ Փարիզը ինծի համար միշտ եղած է ինչպէս սկզբնական գիշեր մը: Առանց անոր ես երբեք ծնած պիտի չըլլայի: Այդ Փարիզն է, որ չէ դադրած զիս յաճախելէ, եւ որուն քողածածկ լոյսը կը ծփայ երբեմն իմ գիրքերուս մէջ:

Ահաւասիկ նաեւ փաստը, որ գրող մը անթաքցնելի կերպով կը դրոշմուի իր ծննդեան թուականով եւ իր ժամանակով, նոյնիսկ եթէ ուղղակի մասնակցութիւն չէ ունեցած քաղաքական գործին, նոյնիսկ եթէ մենակեաց մը ըլլալու պպաւորութիւնը կը թողու, քաշուած հոն, որ կը կոչուի «փղոսկրեայ աշտարակ»: Եւ եթէ բանաստեղծութիւններ կը գրէ, անոնք պատկերովն են այն պահուան, երբ կ'ապրի, եւ որոնք պիտի չկրնային գրուիլ ուրիշ ժամանակ:

Այսպէս, Եէցի (Yeats) բանաստեղծութեան ընթերցումը, այս իրլանապացի մեծ գրողին, զիս միշտ յուզած է՝ **Վայրի կարապները Քուլի մէջ**: Այդ զբօսայգիին մէջ, Եէց կը դիպէ կարապները, որոնք կը սահին ջուրին վրայ.

Տասնիններորդ աշունը իմ վրաս իջաւ
Այն օրէն որ առաջին անգամ ես
սկսայ զանոնք հաշուել,
Զանոնք տեսայ, առանց աւարտած
ըլլալու հաշիւը
Յանկարծ կը բարձրանային
Եւ կը զուարթանային կորտարուած
մեծ շրջանակներ կազմելով
Իրենց աղմկալի թեւերուն տակ
Բայց արդ կը սահէին հանդարտ
ջուրերու վրայ
Վեհապանծ եւ գեղով աոլցուն:
Ո՞ր կնիւէ ցպիկներով իրենց
բոյները պիտի շինեն,
Ո՞ր լիճի ափին, ո՞ր ճահիճին,
Պիտի կախարդե՞ն այլ աչքեր, երբ
ես արթնանամ,
Եւ պիտի գտնեմ, օր մը, որ անոնք
թռած են:

Կարապները յաճախ կը յայտնուին ԺԹ. դարու բանաստեղծութեան մէջ - Պոտըլէրի կամ Մալլարմէի մօտ: Բայց Եէցի այս բանաստեղծութիւնը չէր կրնար գրուած ըլլալ ԺԹ. դարուն: Իր իւրայատուկ կշռոյթով եւ մելամաղձութեամբ, ան կը պատկանի Ի. դարուն եւ նոյնիսկ այն փարուան, երբ գրուած է:

Կը պատահի նաեւ, որ ԻԱ. դարու գրող մը երբեմն ինքզինք բանտարկուածը զգայ իր ժամանակին եւ ընթերցումը ԺԹ. դարու մեծ վիպագիրներուն - Պալզաք, Տիքենզ, Թոլսթոյ, Տոսթոյեւսքի - իրեն ներշնչէ կարօտախտ մը: Այդ օրերուն ժամանակը ձեւով մը աւելի դանդաղ կ'ընթանար, քան այսօր, եւ այդ դանդաղութիւնը կը պատշաճէր վիպագիրի աշխատանքին, քանի որ աւելի լաւ կրնար կեդրոնացնել իր ուժը եւ իր ուշադրութիւնը: Այդ ատենէն ի վեր ժամանակը արագացած է եւ ցնցումներով կը յառաջանայ, ինչ որ կը բացատրէ փարբերութիւնը անցեալի վիպական ծաւալներու, մայր եկեղեցիներու ճարտարապետութեան մերօրեայ ոչ-շարունական եւ կպրպտուած կառուցումներուն միջեւ: Այս դիպանկիւնէն, ես կը պպտկանիմ միջին սերունդի մը եւ հե-

պաքրքրուած եմ գիտնալու, թէ ինչպէս յաջորդ սերունդները, որոնք ծնած են համացանցէն, բջիջային, ել-նամակ, եւ այլ, գրականութեամբ պիտի արտայայտեն այն աշխարհը, ուր իւրաքանչիւրը մնայուն կերպով «կապուած» է, եւ ուր «րնկերային ցանցերը» մաս մը կ'առնեն մեր մտերմութենէն եւ գաղտնիքէն, որ ցարդ մեր սեփականութիւնն էր - գաղտնիութիւն, որ խորք կու տար մարդոց եւ կրնար րլլալ վիպական մեծ նիւթ: Բայց կ'ուզեմ լաւատես մնալ ինչ կը վերաբերի գրականութեան ապագային եւ համոզուած եմ, որ ապագայի գրողները պիտի ապահովեն ապագայի շարունակութիւնը, ինչպէս որ րրած է իւրաքանչիւր սերունդ Հոմերոսէն ի վեր...

Յամենայն դէպս, գրող մը, ինչպէս ոեւէ ուրիշ արուեստագէտ, որքան ալ սերտօրէն կապուած րլլայ իր ժամանակին, որմէ չի խուսափիր եւ միայն օդը, զոր կը շնչէ, ինչ որ կը կոչեն «ժամանակի օդը», իր գործերուն մէջ կ'արտայայտէ ոչ-ժամանակաւոր բան մը: Ռասինի եւ Շէքսփիրի բեմադրութիւններուն մէջ կարեւոր չէ, թէ հերոսները հագած րլլան հիներու պէս կամ բեմադրիչ մը ուզէ անոնց հագցնել «պլուճինզ» կամ կաշիէ բաճկոն: Ասոնք անկարեւոր մանրամասնութիւններ են: Կարդալով Թոլսթոյը, կը մոռնանք, որ Աննա Քարենինա 1870-ի շրջազգեստ հագած է, ան այնքան մօտիկ է մեզի մէկուկէս դար ետք: Եւ յետոյ, կարգ մը գրողներ, ինչպէս Էդկար Փօ, Մէլվիլ կամ Սթանտհալ, աւելի լաւ հասկցուած են իրենց մահէն երկու հարիւր տարի ետք, քան անոնց կողմէ, որոնք իրենց ժամանակակիցներն էին:

Ի վերջոյ, ի՞նչ հեռաւորութեան վրայ կը մնայ վիպագիր մը, կեանքի լուսանցքին վրայ, զայն նկարագրելու համար, քանի որ եթէ անոր մէջ մխրճուած էք - գործի մէջ - կ'ունենաք շփոթ պատկեր մը: Բայց այս թեթեւակի հեռաւորութիւնը արգելք չ'ըլլար անձնականացման կարողութեան, որ իրեն կը պատկանի րնդդէմ իր կերպարներուն եւ անոնց, որոնք զինք ներշնչած են իրական կեանքի մէջ: Ֆլոպէր րսած է. «Մատամ Պովարին ես ինքս եմ»: Եւ Թոլսթոյ անմիջապէս նոյնացած էր անոր հետ, որ գիշեր մը նետուած էր գնացքին տակ, Ռուսիոյ կայարաններէն մէկուն մէջ: Այս նոյնացման կարողութիւնը այնքան հեռու կ'երթար, որ Թոլսթոյ կը միախառնըուէր իր նկարագրած համայնապատկերին եւ կը ներծծէր ամէն բան, մինչեւ Աննա Քարենինայի թարթիչներուն բացխփումը: Այս երկրորդ հոգեվիճակը նարգիսականութեան հակառակն է, քանի որ կ'ենթադրէ միաժամանակ ինքնամոռացում եւ հզօր կեդրոնացում, կարենալ ընդունելու համար նուազագոյն մանրամասնութիւնը: Այդ կ'ենթադրէ որոշ առանձնութիւն: Ոչ ինքնամեկուսացում, բայց թոյլ կու տայ որոշ աստիճանի ուշադրութիւն եւ գեր-յստակատեսութիւն արտաքին աշխարհին նկատմամբ, զայն բերելու համար վէպին մէջ:

Միշտ խորհած եմ, որ բանաստեղծը եւ վիպագիրը խորհրդաւորութիւն կու տան արարածներուն, որոնք կը թուին րնկրղմած րլլալ ամէնօրեայ կեանքին մէջ, աըտպաքնապէս անշուք իրերուն,- եւ այդ կը սպիպէ զիրենք պրկուած ուշադրութեամբ եւ գրեթէ քնածութեան ձեւով (hypnotique) հետեւիլ: Իրենց նայուածքին տակ, րնթացիկ կեանքը կը պատուի խորհուրդով, առնելով տեսակ մը լուսաւորում, որոնք կը գտնուին իւրաքանչիւրին խորքը: Կը խորհիմ իմ հեռաւոր զարմիկիս մասին, նկարիչ Ամէդէօ Մոդիկլիանիի, որուն ամէնէն յուզիչ կտաւները անոնք են, ուր ան որպէս բնորդ րնտրած է անանուններ, փողոցի

մանչեր եւ աղջիկներ, սպասուհիներ, պարզ գիւղացիներ, երիտասարդ աշկերտներ: Ջանոնք նկարած է սուր գիծով մր, որ կը յիշեցնէ թոսքանական մեծ աւանդութիւնը, Պոդիչելիի եւ Քուաթրոչենդիի սիէնցի նկարիչները: Այս ձեւով ան անոնց փուած է - մանաւանդ քողազերծած է - ամբողջ շնորհի եւ ազնուականութիւնը, որոնք իրենց մէջ էին, իրենց համեստ կերպարանքին տակ: Վիպագիրին աշխատանքը այդ ուղղութեամբ պէտք է ընթանայ: Իր երեւակայութիւնը, հեռու իրականութիւնը ձեւափոխելէ, պէտք է թափանցէ անոր խորքը եւ յայտնաբերէ այդ իրականութիւնը ինքնիրեն, ենթակարմիրներով եւ անդրմանիշակագոյններով (infrarouges et ultraviolets) զննելու համար այն, ինչ որ կը գտնուի երեւոյթներու եփին: Եւ հեռու պիտի չըլլամ հաւատալէ, որ վիպագիրը տեսակ մր տեսանող է, աւելին՝ տեսլապաշտ մր: Նաեւ՝ շարժագիր մր (sismographe), պատրաստ արձանագրելու ամէնէն աննշան շարժումները:

Ես միշտ վարանած եմ կարդալու իմ հիացած այս կամ այն գրողին կենսագրութիւնը. Կենսագիրները յաճախ կը ծանրանան պզտիկ մանրամասնութիւններու վրայ, ոչ միշտ ճշգրիտ վկայութիւններու, նկարագիրի գիծերու, որոնք կը թուին յուսախաբութիւն եւ շփոթ պատճառել, եւ այդ բոլորը ինծի կը յիշեցնեն կարկտանը. ման ձայները, որոնք կը խանգարեն ձայնասփիւռի հաղորդումները եւ անլսելի կը դարձնեն երաժշտութիւնները կամ ձայները: Միայն իր գիրքերու ընթերցումը մեզ կ'առաջնորդէ գրողի մտերմութեան մէջ եւ հոն է, որ ան կը գտնուի իր լաւագոյն աը. պայայտութեամբ եւ մեզի կը խօսի մեղմ ձայնով, առանց իր ձայնը նուազագոյն չափով խանգարողի:

Բայց կարդալով գրողի մր կենսագրականը, երբեմն կը գտնենք իր մանկութիւնը դրոշմած իրադարձութիւն մր, որ եղած րլլայ արգանդի պէս իր ապագայի գործին, առանց որ ինք միշտ ունենայ այն յստակ գիտակցութիւնը. որ այդ որոշիչ իրադարձութիւնը վերադարձած րլլայ, փարբեր ձեւերով, յաճախելու համար իր գիրքերը: Այսօր կը մտածեմ Ալֆրէտ Հիչքոքի մասին, որ գրող չէր, բայց որուն ժապաւէնները ունին ուժը եւ շաղկապումը վիպային երկի մը: Երբ իր զաւակը հինգ տարեկան էր, հայր Հիչքոք իր զինք կը ղրկէ նամակ մր յանձնելու բարեկամ ոստիկանի մր: Տղան անոր յանձնած է նամակը. եւ ոստիկանը զայն բանտարկած է ոստիկանատան այն վանդակապատ բաժնին մէջ, որ կը ծառայէ որպէս խուց, ուր կը պահեն զանազան տեսակի չարագործները: Տղան, սարսափած, սպասած է ժամ մր, մինչեւ որ ոստիկանը զինք ազատ արձակէ եւ իրեն րսէ. «Եթէ վատ րնթացք ունենաս կեանքի մէջ, հիմա գիտես, թէ քեզ ինչ կը սպասէ»: Այս ոստիկանը, որ իրապէս մանկավարժական տարօրինակ սկզբունքներ ունէր, հաւանօրէն սկզբնական պատճառն է Ալֆրէտ Հիչքոքի բոլոր ժապաւէններու մէջ գտնուող սարսափի սպասողական (suspens) եւ մտահոգութեան մթնոլորտին:

Պիտի չուզէի ձեզ ձանձրացնել իմ անձնական պարագայովս, բայց կը խորհիմ, որ մանկութեանս կարգ մր դրուագները հեպագային ծառայած են որպէս ծննդոցի կաղապար իմ գիրքերուս: Յաճախ ծնողքէս հեռու կ'րլլայի, բարեկամներու մօտ, որոնց կը վստահէին զիս, եւ որոնց մասին ոչինչ գիտէի, տեղեր եւ տուներ, որոնք իրարու կը յաջորդէին: Այդ պահուն ոչինչ կը զարմացնէ մանուկ մր, նոյնիսկ երբ կը գտնուի անսովոր կացութիւններու մէջ, այդ իրեն կատարելապէս բնական կը թուի: Աւելի ուշ միայն մանկութիւնս ինծի առեղծուածային թուեցաւ եւ փորձեցի յաւելեալ տեղեկութիւններ ունենալ այն անձերուն մասին, որոնց ծնողքս զիս յանձ-

նած էին եւ տարբեր վայրերուն, որոնք տեւաբար կը փոխուէին: Բայց չյաջողեցայ ճշդել այդ անձերէն շատերը եւ ոչ ալ ճշդել տեղագրութիւնը անցեալի այդ վայրերուն եւ տուներուն: Այս առեղծուածներ լուծելու ցանկութիւնը, առանց յաջողելու, եւ խորհրդաւորութիւն մը թափանցելու, ինծի գրելու փափաք տուաւ, այնպէս որ կարծէք գիրը եւ երեւակայականը կրնային ինծի օգնել այդ առեղծուածները եւ գաղտնիքները լուծելու:

Քանի որ հարց են խորհրդաւորութիւնները, կը խորհիմ, մտածումներու զուգորդութեամբ, ԺԹ. դարու ֆրանսական վէպի մը մասին. **Փարիզի գաղտնիքները**: Մեծ քաղաքը, այս պարագային Փարիզը, ծննդավայր քաղաքս, կապուած է իմ առաջին մանկական տպաւորութիւններուս եւ այդ տպաւորութիւնները այնքան ուժգին էին, որ անկէ ի վեր երբեք չեմ դադրած «Փարիզի գաղտնիքները» հետախուզելէ: Կը պատահէր, երբ շուրջ ինը կամ տասը տարեկան էի, որ առանձին պտըտէի, եւ հակառակ կորսուելու վախիս, երթալ աւելի հեռու, թաղերու մէջ, զորս չէի գիտեր, Սէնի աջ ափին: Այդ կ'ըլլար ցերեկին եւ ապահովութիւն կը ներշնչէր ինծի: Պատանութեանս սկիզբը ճիգ կ'ընէի վախս յաղթահարելու եւ արկածախնդրութիւնս շարունակելու գիշերը, դէպի դեռ աւելի հեռու թաղեր, գետնուղիով: Այսպէս է, որ կը սորվին քաղաքը, եւ այդ ընելու համար հետեւեցայ իմ հիացած վիպագիրներէս շատերուն, որոնց համար, ԺԹ. դարէն սկսեալ, մեծ քաղաքը - այդ կոչուէր Փարիզ, Լոնտոն, Ս. Փեթերսպուրկ, Սթոքհոլմ - եղած է բեմը եւ գլխաւոր առարկաներէն մին իրենց գիրքերուն:

Էտկար Փօ իր «Ամբոխներու մարդը» նորավէպին մէջ առաջիններէն եղած է ոգեկոչելու այդ մարդկային բոլոր ալիքները, զորս կը դիտէ սրճարանի մը ապակիին ետեւէն, եւ որոնք անվերջ իրարու կը յաջորդեն մայթերու վրայ: Ան կը զտնէ ծերունի մը, տարօրինակ արտաքինով եւ գիշերուան ընթացքին անոր կը հետեւի Լոնտոնի տարբեր թաղերուն մէջ, անոր մասին աւելի բան գիտնալու համար: Բայց անծանօթը «ամբոխներու մարդն» է եւ անօգուտ է անոր հետեւիլ, ան միշտ պիտի մնայ անանուն, եւ անոր մասին երբեք բան պիտի չգիտնանք: Ան անհատական գոյութիւն չունի, պարզապէս մաս կը կազմէ զանգուածին այդ անցորդներուն, որոնք կը քալեն խիտ շարքերով կամ զիրար կը հրմշտկեն եւ կ'անհետանան փողոցներու մէջ:

Եւ կը մտածեմ նաեւ Թոմաս Տը Գէնսէյ բանաստեղծին երիտասարդութեան մէկ դրուագին մասին, որ զինք յաւերժ դրոշմած է: Լոնտոն, Օքսֆորտ փողոցի ամբոխին մէջ կապուած էր երիտասարդուհիի մը, մին դիպուածի արդիւնք հանդիպումներէն, որոնք կը պատահին մեծ քաղաքի մը մէջ: Անոր ընկերակցութեամբ անցուցած էր բազմաթիւ օրեր եւ ստիպուած եղած էր Լոնտոնէն հեռանալ ժամանակ մը: Համաձայնած էին, որ շաբաթ մը ետք ան զինք պիտի սպասէր ամէն երեկոյ նոյն ժամուն Թիշֆուլտ փողոցին անկիւնը: Բայց զիրար երբեք չէին վերագտած: «Վստահօրէն մենք բազմաթիւ անգամներ մէկս միւսը փնտռած ենք, նոյն պահուն, Լոնտոնի հսկայ լաբիւրինթոսին մէջ, թերեւս իրարմէ բաժնուած եղած ենք միայն քանի մը մեթրով - աւելիին կարիք չկայ յանգելու համար յաւերժական բաժանման մը»:

Անոնց համար, որոնք հոն ծնած եւ ապրած են, քանի տարիները կ'անցնին, իւրաքանչիւր թաղամաս, իւրաքանչիւր փողոց, կ'ոգեկոչէ յիշատակ մը, հանդիպում մը, վիշտ մը, երջանկութեան պահ մը: Եւ յաճախ նոյն փողոցը կապուած է ձեզի համար յաջորդական յիշատակներու, այնպէս որ կարծէք շնորհիւ քաղաքի մը տե-

ղագրութեան, ձեր ամբողջ կեանքն է, որ ձեր յիշողութեան կը վերադառնայ յաջորդական հապուածներով, այնպէս որ դուք կարենայիք վերծանել դիզուած գրութիւնները բազմաթիւ անգամներ գործածուած մագաղաթներու: Եւ նաեւ ուրիշներու կեանքը, հազար հազարաւոր անծանօթներու, որոնց կը հանդիպինք գետնուղիի միջանցքներուն մէջ կամ խճողումի պահերուն:

Եւ այսպէս, ինչպէս երիտասարդութեանս, օգնելու համար ինծի որ գրեմ, կը փորձէի գտնել Փարիզի հեռախօսի ցուցակները, մանաւանդ անոնք՝ ուր անունները ցանկագրուած են փողոցներով եւ շէնքերու թիւերով: Մէկ էջէն միւսը, ընկղմած քաղաքի մը փպաւորութիւնը ունէի, ինչպէս Ատլանթիտը, եւ շնչել ժամանակի հոտը: Տարիներու պատճառով, որոնք անցած էին, միակ հետքերը զորս ձգած էին այդ հազար հազարաւոր անծանօթները, իրենց անուններն էին, իրենց հասցէները եւ իրենց հեռախօսի համարները: Երբեմն անուն մը կ'անհետանար, մէկ տարիէն միւսը: Այդ հեռախօսի հին ցուցակները թերթատալու մէջ գլխապտոյտ պատճառող բան մը կար, մտածելով՝ որ այլեւս հեռախօսի համարները պիտի չպատասխանէին: Աւելի ուշ ես պիտի զարմանայի Օսիփ Մանտելսթամի մէկ բանաստեղծութեան տողերու ընթերցումով.

Ես վերադարձայ իմ ընտանի քաղաքս մինչեւ հեկեկանք

Մինչեւ մանկութեան ջղային կծիկներ, մինչեւ բնաջիղք մորթի տակ:

Փեթերսպո՛ւրկ (...)

Ի հեռախօսներուս, դուն ունիս համարները:

Փեթերսպո՛ւրկ: Ես ունիմ հին օրերու հասցէները

Ուր մեռեալները կը ճանչնամ իրենց ձայնէն:

Այո՛, ինծի կը թուի, որ դիմելով Փարիզի հեռախօսի այս հին ցուցակներուն, ցանկութիւն ունեցած եմ առաջին գիրքերս գրելու: Կը բաւէր անծանօթի անունը ընդգծել մատիտով մը եւ երեւակայել՝ թէ ինչ եղած էր իր կեանքը, հարիւրահազարաւոր անուններու մէջ:

Կրնանք կորսուիլ կամ անհետանալ մեծ քաղաքի մը մէջ: Նոյնիսկ ինքնութիւն փոխել եւ ապրիլ նոր կեանք մը: Կրնանք երկարաշունչ խոյզի մը դիմել, գտնելու համար մէկու մը հետքը, ունենալով միայն կորսուած թաղամասի մը մէջ մէկ կամ երկու հասցէներ: Կարճ նշումը, որ երբեմն կայ որոնման քարտերու վրայ միշտ արձագանգ մը գտած է մէջս: Յայտնի վերջին բնակարանը: Նշումներ անհետացման, ինքնութեան, ժամանակը որ կ'անցնի, սերտօրէն առընչուած են մեծ քաղաքներու տեղագրութեան: Ահաւասիկ թէ ինչու, ԺԹ. դարէն սկսեալ, անոնք յաճախ եղած են կալուածը վիպագիրներու, եւ անոնցմէ մեծերէն մի քանին նոյնացած են քաղաքի մը հետ. Պալզաք եւ Փարիզ, Տիքընզ եւ Լոնտոն, Տոսթոյովսկի եւ Ս. Փեթերսպուրկ, Թոքիօ եւ Նակայ Քաֆֆու, Սթոքհոլմ եւ Հիալմար Սոտէրպերկ:

Ես կը պատկանիմ սերունդի մը, որ կրած է ազդեցութիւնը այս վիպագիրներուն, եւ ուզած է, իր կարգին, հետախուզել այն, զոր Պոտըլէր կը կոչէր «օձապտոյտ ծալքերը մեծ քաղաքներու»: Ապահովաբար, յիսուն տարիէ ի վեր, այսինքն այն շրջանէն, երբ իմ պարիքիս պապանիները հզօր զգայնութիւններ կ'ունենային յայտնաբերելով իրենց քաղաքը, անոնք փոխուած են: Ոմանք, Ամերիկա կամ ինչ որ կը կոչէին Երրորդ Աշխարհ, դարձած են «մեծ ոստաններ» (mégapoles) մտահոգիչ ծաւալներով: Անոնց բնակիչները կը գտնուին պատերու ետին, յաճախ լքուած թաղամասերու մէջ, եւ ընկերային պատերազմական վիճակի մէջ: Հիւղաւանները հետզհետէ աւելի բազմաթիւ են եւ աւելի

ու աւելի շօշափուկներով: Մինչեւ Ի. դար, վիպագիրները կը պահէին քաղաքի ձեւով մը ռոմանդիկ պատկերացումը, ոչ այնքան տարբեր Տիքրնզի եւ Պոտրլէրի պատկերացումէն: Եւ ես պիտի ուզէի գիտնալ, թէ ինչպէս ապագայի վիպագիրները պիտի ոգեկոչեն այդ հսկայական կեդրոնացումները երեւակայածին երկերու մէջ:

Դուք բարեացակամութիւն ունեցած էք ակնարկելու ինչ կը վերաբերի իմ գիրքերուս «յիշողութեան արուեստին, որով ոգեկոչուած են մարդկային ամէնէն անբռնելի ճակատագիրները»: Բայց այս գնահատումը իմ անձէս անդին կ'երթայ: Այս իւրայատուկ յիշողութիւնը, որ կը փորձէ հաւաքել անցեալի քանի մը փշրանքներ եւ այն քիչ հեպքերը, զորս անանուններ եւ անծանօթներ ձգած են երկրի վրայ, ան նաեւ կապուած է իմ ծննդեան տարեթիւիս. 1945: Ծնած ըլլալ 1945-ին, քաղաքներու կործանումէն եւ ամբողջ բնակչութիւններու անհետացումէն ետք, զիս, ինչպէս իմ տարեկիցներս, անկասկած աւելի զգայուն դարձուցած է յիշողութեան եւ մոռացման նիւթին:

Ինծի կը թուի, դժբախտաբար, որ կորսուած ժամանակի որոնումը չի կրնար ըլլալ Մարսէլ Փրուսթի ուժգնութեամբ եւ անկեղծութեամբ: Իր նկարագրած րնկերութիւնը դեռ կայուն էր, ԺԹ. դարու րնկերութիւն մը: Մարսէլ Փրուսթի յիշողութիւնը կը յայտնաբերէ անցեալը իր յեփին մանրամասնութիւններով, ինչպէս ապրող պաստառ մը: Այն պայաորութիւնը ունիմ, որ այսօր յիշողութիւնը շատ աւելի նուազ ինքնավստահ է, որ պէտք է պայքարի յիշողութեան կորուստի եւ մոռացման դէմ: Մոռացման այս խաւին պատճառով, մոռացման այս զանգուածէն, որ ամէն բան կը ծածկէ, կը յաջողինք որսալ միայն անցեալի պատառիկներ, կտրատուած հեպքեր, փախչող մարդկային ճակատագիրներ՝ գրեթէ անբռնելի:

Բայց անկասկած, այդ կոչումն է վիպագիրին, մոռացման սպիտակ մեծ էջին առջեւ, յայտնաբերել կիսով չնչուած քանի մը բառեր, ինչպէս այդ կորսուած սառցակոյտերը, որոնք կը խոտորին ովկիանոսի մակերեսին վրայ:

2014, Սթոքհոլմ

Հայացուց՝ Յ.Պ.

Ամփոփ մատենագիտութիւն Փաթրիք Մոնպիանոյի երկերուն

La place de l'Etoile 1975, Une Jeunesse 1985, Dora Bruder 1999, Des inconnues 2000, Ephéméride 2002, La petite bijou 2002, Accident nocturne 2005, Un pedigree 2006, Dans le café de la jeunesse perdue 2007, L'Horizon 2010, L'herbe des nuits 2012, Romans 2013 Catherine Certitude 2014, Pour que tu ne te perdes pas dans le quartier 2014, Discours à l'Académie suédoise 2014.

ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԻԿԻ ԹՈՎԱՍԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏ

ՋԻԼՋԵՓՆԵՐԻ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ԾՆԾՂԱՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Հայաստան (Կոստանդնուպոլիս), Ռումինիա (Պուխարեսթ), Ամերիկայի Միացեալ Նահանգներ (Մասաչուսէց, Ուաշինկթըն), Անգլիա (Մանչեսթըր), Քանատա (Նիւ Փրանսուիք)... նման երկրների եւ քաղաքների ցանկը կարելի է շարունակել, որտեղ 400 տարի անդադար արտադրուել, կամ մատակարարում եւ արտադրում են աշխարհի բոլոր անկիւններում ամենայայտնի եւ տարածուած, ամենատարբեր չափերի, ձեւերի ու հնչողութեան, նմանը չունեցող եւ մինչեւ այսօր հայկական մէկ գերդաստանի պատկանող ZILDJIAN մակնիշի բարձրակարգ ու բարձրարժէք ԾՆԾՂԱՆԵՐԸ (Cymbal):

Հայկական ԾՆԾՂԱՆԵՐԻ արտադրութեան պատմութիւնն սկսուել է XVII դարում, երբ կոստանդնուպոլսաբնակ ալքիմիկոս Աւետիս Ի-ը, 1618 թ. Ոսկի ստանալու նպատակով քիմիական փորձեր կատարելիս,յայտնաբերել է պղնձի, արճիճի, արծաթի խառնուրդի միացութիւնից իրայատուկ մի համաձուլուածք: Եւ այդ համաձուլուածքի մեջտեղից պատրաստել է հնչեղ՝ ենթաձայններով հարուստ արտակարգ հնչողութեան ԾՆԾՂԱՆԵՐ, որոնք դուրսի, ականջալուր եւ երկարատեւ հնչողութիւն ունէին: Սուլթան Օսման Բ.ն էլ տեղեկանալով այդ մասին, հէնց Աւետիսին անուանեց «ծնծղագործ հայորդի» - Zildjian in ՙARMENIAN- (Zil՝ հնչեղ, Dji-ջի՝ պատրաստող, Ian՝- եան՝ հայկական ազգանուան վերջածանցը, հայորդի) ձուլածոյ 80 ոսկի տուեց, օսմանեան զինուորական նուագախմբերի համար այդ ծնծղաներից պատրաստելու համար:

1623 թուականին, 50-ամեայ Ջիլջիեան Աւետիս Ա.ը, սուլթանի հովանաւորութեամբ սպացաւ երաժշտական յատուկ գործիք պատրաստելու եւ պալատից դուրս ծնծղաներ կոփելու արտօնագիր եւ Կոնստանդնուպոլսի Սամաթիա արուարձանում դարբնոց հիմնեց ու սկսեց իր գործը ծնծղայաշինութեան ասպարէզում: 1929 թուականին Աւետիս Գ.ը Ամերիկա տեղափոխուելով Մասաչուսէցի նահանգի Քուինզի քաղաքում հիմնեց Zildjian ծնծղաների կոփման գործարանը, Նորուէլ տարածաշրջանում նշուեց Zildjian-ների 350-ամեայ յորելեանը: Արհեստն այնուհետեւ անցաւ Աւետիսի սերունդներին, 1977 թ՝ Արմանին, ապա նրա դստերը՝ Քրէյգիին, 1999-ին: Այդ ընթացքում եւ մինչեւ այժմ բոլոր Ջիլջիեանները, ինչպէս եւ Քրէյգին ու կրտսեր քոյրը՝ Դէբբին, ինչպէս նաեւ նրանց դուստրերը, շարունակում են ընտանեկան աւանդոյթը:

Աւետիս Ա. Զիլզեան

Աւետիս Բ. Զիլզեան

Քերոբ Զիլզեան



Արամ Զիլզեան

Աւետիս Գ. Զիլզեան

...Այսպէս սկսուած Zildjian մակնիշի արտադրանքը շարունակւում է դարեր շարունակ եւ իր մէջ կուտակել է արդէն Zildjian-ների 17 սերնդի կուտակած հարուստ փորձն ու անսպառ գիտելիքները: 1929 թուին ծնծղաների արտադրութիւնը փեղափոխում են Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Մասաչուսէցի Նահանգ, Քուինզի: Որոշ ժամանակ անց, այն ժամանակուայ մակնիշի սեփականատէր Աւետիս Գ. որոշում է արտադրութիւնը փեղափոխել նոյն Նահանգի Նորուէլ քաղաք: Այս իրադարձութիւնները համընկնում են վաճառատան հիմնադրման 350-ամեակին, եւ դրանից սկսած արտադրութեան վայրը չի փեղափոխուել: 1977 թուին մակնիշի ղեկավարութիւնը ժառանգաբար անցնում է որդուն՝ Արմանին, իսկ 1999-ին նա էլ իր հերթին ղեկավարութեան ղեկը յանձնել է իր դստերը՝ Քրէյգին: Իր քոյրիկի՝ Դեբբիի հետ նրանք շարունակում են մակնիշի ղեկավարութիւնը մինչեւ օրս: Այսօրուայ դրութեամբ Zildjian-ների վաճառատունը իրաւացիօրէն համարւում է ընտանեկան հնագոյն ձեռնարկութիւնը Ամերիկայում եւ Կանադայում:

Գերդաստանի Պատմական սխրանքները

1618 Ընտանիքի եւ առեւտրական վարկանիշի ստեղծումը

Կոստանդնուպոլսեցի Հայ ալքիմիկոս Աւետիս Ա., յայտնաբերել է մետաղների մշակման բացառիկ մետաղաձուլուածք: Ստացուած մետաղից նա ձեռնամուխ է եղել ծնծղաներ պատրաստելու, որոնք աչքի են ընկնում պայծառ երկարահունչ ձայնով: Այդ ծնծղաներն առանձնանում էին նոյնիսկ Փոքր Ասիայի յայտնի վարպետների պատրաստած զարդերի շրջապատում, որոնց նմանատիպ գործիքների փորձն սկիզբ էր առել դեռեւս XIII դարից: Իսկ հայկական մեհեաններում, ապա եւ եկեղեցում, Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունելուց յետոյ, քշոցներ (ծնծղաներ) օգտագործուել եւ օգտագործւում են հոգեւոր ծիսակատարութիւնների ժամանակ, ի սկզբանէ եւ մինչեւ այսօր:

Օսման Բ. սուլթանի ենիչերիների նուագախմբերն անմիջապէս փիրապետեցին Zildjian-ի պատրաստած ծնծղաների օգտագործման ճարտարութիւնն ու հնարները, դրանք օգտագործելով նաեւ ծիսական արարողութիւնների, հարսանիքների ժամանակ, ինչպէս նաեւ օսմանեան բանակում: Սուլթան Օսման Բ. Աւետիսին հռչակեց այդ արհեստի հիմնադիրը՝ համարելով նրան Օսմանեան Թուրքիայում ծնծղաների պատրաստման եւ արտադրութեան հիմնադիր:

ԲԱԳԻՆ

1623 թուականին Աւետիսը, Մուրադ Դ. սուլթանի օրինութեամբ, արտօնագիր է սպացել թողնել Օսմանեան պալատը իր անհատական գործին հետեւելու համար եւ Կոստանդնուպոլսի Սամաթիա արուարձանում հիմնել է իր սեփական դարբնոցը, որտեղ էլ ծնծղաներ է կոփել ու պատրաստել:

1651 թուականին Աւետիսը ծնծղաների պատրաստման արհեստագիտութեան գաղտնիքները փոխանցել է իր աւագ որդուն՝ Արամին:

1680 թուականին դասական երաժշտութեան հեղինակներն սկսեցին ծնծղաներ օգտագործել իրենց ստեղծագործութիւններում: Դասական երաժշտութեան առաջին ստեղծագործութիւնը, որտեղ հնչել են առաջին ծնծղաները, գերմանացի երգահան Նիքոլաս Ադամս Սթրունկքայի «Եսթեր» օփերան է:

XVIII դար՝ ծնծղաները եւ երոպական զինուորական նուագախմբերը

XVIII դարի ընթացքում Եւրոպայի զինուորական նուագախմբերում տարածուեց ծնծղաների համատարած օգտագործումը: 1782 թուականին Վոլֆկանկ Ամատէուս Մոցարթը ծնծղաներն օգտագործել է «Առեւանգումն Հարեմից» օփերայում՝ ենիչերիների երաժշտութեամբ: Քսան տարի անց ծնծղաներ է օգտագործել Եոզէֆ Հայդնը իր «Զինուորական սիմֆոնիա»յում:

XIX դար՝ Zildjian ծնծղաները եւ դասական երաժշտութիւնը

XIX դարի կէսերից Հեքթոր Պերլիոզն ու Ռիխարդ Վակները իրենց ստեղծագործութիւններում սկսեցին լայնօրէն օգտագործել ծնծղաները, նշելով, որ այդ ստեղծագործութիւններում պէտք է օգտագործուեն միմիայն Zildjian-ի ծնծղաները: Այսպիսով ծնծղաները վերջնականապէս նուագախմբում գրաւեցին իրենց հիմնաւոր ու արժանի տեղը, իսկ Zildjian մակնիշը լայն ճանաչում սպացաւ:

1851՝ Միջազգային ցուցահանդէսներ եւ պարգեւներ

Աւետիս Բ.ը լաստանաւ է կառուցել, որով (1851) ճանապարհորդել է Մարսէլ, յետոյ Լոնտոն (1862). այս քաղաքների փօնավաճառներում նա ցուցադրել է իր ծնծղաները, արժանանալով պարգեւների, մետալների եւ պատուոյ գրերի: Աւետիս Բ.ի մահից յետոյ, 1865 թուին, գերդաստանի գործն անցնում է նրա կրտսեր եղբօրը՝ Քերոբին, քանի որ Աւետիսի որդիները Յարութիւն Բ.ը եւ Արամը դեռեւս փոքր էին: Քերոբը Եւրոպա ամէնամեայ վաճառքի է արտահանում 1300 զոյգ ծնծղայ, միաժամանակ շարունակելով մասնակցել միջազգային ցուցահանդէսների Փարիզում (1867), Շիքակոյում (1893), Վիեննայում (1873), Պոսթոնում (1883) եւ Պոլոնիայում (1888, 1907). Զիլջեանի ուղեւորութիւններից եւ ոչ մէկը առանց պարգեւի չի անցել:

1868՝ Սուլթանի հովանաւորութիւնը

Զիլջեանների ընտանիքը, աւերիչ ու կործանիչ մի քանի հրդեհներից յետոյ ի վիճակի չէր մարելու պարտքերն ու նոր նիւթերի ծախքերի հոգսն ապահովելու: Նրանց առաջարկուել էր գործարանը Փարիզ տեղափոխել, սակայն ընտանիքը ոչ մի կերպ չէր համաձայնում հեռանալ հայրենիքից: Այն ժամանակ իշխող փիրակալ Սուլթան Աբդուլազիզը յանձնարարեց անել հնարաւոր ամէն բան, օգնելու վերականգնել առասպելական ծնծղաների արտադրութիւնը:

Պոպ Զիլզեան

Արման Զիլզեան

Քրէյգի Զիլզեան

Տերբի Զիլզեան

Քէոի Զիլզեան

1909՝ երկրորդ գործարանը Պուխարեսթում

Մահկանացուն կնքելուց մէկ տարի առաջ, Քերոբ Զիլզեանը ծնծղաների արտադրութեան գաղտնիքները փոխանցում է Աւետիսի հասակ առած որդիներին: Նրանցից աւագը, Յարութիւն Բ.ը, հրաժարւում է գերդաստանի գործը շարունակելուց, սկսելով քաղաքականութեամբ զբաղուել, դառնալով Կոստանդնուպոլսի գլխաւոր դատախազ: Այդ պատճառով ճարտարագիտական գաղտնիքներին փիրացաւ կրտսեր որդի Արամը: Նա համարեց, որ քաղաքական անկայուն եւ անվստահելի պայմաններում Կոստանդնուպոլսում շարունակել ծնծղաների արտադրութիւնը դժուարին խնդիր է: Միանալով հայկական ազատագրման շարժմանը, Արամը փեղափոխուեց Պուխարեսթ, որտեղ էլ հիմնել է Zildjian ծնծղաներ արտադրող երկրորդ գործարանը, այն դէպքում, երբ Քերոբի դուստր Վիկտորիան ջանում էր Կոստանդնուպոլսի արուարձանում իր բարձրութեան վրայ պահել ու պահպանել գործարանը: Հետագայում վերադառնալով հայրենիք, Արամը կարգաւորում է ծնծղաների արտահանումը Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

1927՝ Ծնծղաների առաջին Գործարանը Միացեալ Նահանգներում

1927 թուին Արամը նամակ է գրել ամերիկաբնակ իր զարմիկ Աւետիս Գ.ին, յայտնելով, որ եկել է իր հերթը ընկերութեան ղեկավարութիւնն սպանձնելու: Բայց Աւետիսը, ինչպէս եւ իր հայրը՝ Յարութիւնը, չցանկացաւ ընտանեկան երեքհարիւրամեայ, սակայն ոչ այնքան բարձր եկամտաբեր գործի պատասխանատուութիւնն սպանձնել: Բացի այդ Աւետիսը Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքացիութիւն ունէր եւ հրուշակեղէնի, նպարեղէնի սեփական գործարան, այդ պատճառով էլ Արամին յայտնեց, որ չի ցանկանում վերադառնալ Կոստանդնուպոլիս: Սակայն, քանի որ Աւետիս Գ.ը մնացել էր ընտանեկան գործի միակ ժառանգը, որոշուել էր, որ նա ծնծղաների արտադրութեան գործարան պէտք է հիմնի Միացեալ Նահանգներում: Արամը ժամանեց Միացեալ Նահանգներ եւ զարմիկին բազմակողմանի օգնութիւն ցուցաբերեց արտադրութիւնը բացելու եւ սկսելու գործում:

Այսպէս ճազի դարաշրջանի ակունքներում Մասաչուսէցի նահանգի Քուինզի քաղաքում յայտնուեց Ամերիկայում Zildjian ծնծղաների առաջին գործարանը:

Արամ Ջիլջեանի նամակը 1927-ին Ամերիկայում բնակուող Աւետիս զարմիկին

«Սեպտեմբեր 18.1927
Սիրելի Աւետիս,

Ուրախութեամբ եւ փիրութեամբ կը զրեմ այս նամակս: Կը ցաւիմ, որ այս պարիքիս եւ վիճակիս պատճառաւ, ինձի անկարելի կ'ըլլայ որ շարունակեմ այս 300 տարուան հոչակոյ զիլլերը շինել:

Վիմակ դուն կ'ըլլաս այս Ջիլճեան ընտանիքին այր անդամը. եւ կ'ըլլայ քու պարտականութիւնը շարունակել շէնքը այս նշանաւոր զիլլերը, որ 3 դարուան զիլճեան ընտանիքին հպարտութիւն էր:

Մնամ սիրով՝
Արամ»

1930-ականներ՝ նոր ոճի համար ծնծղաներ

Աւետիսին յաջողուեց համագործակցութիւն հաստատել ճազային երաժիշտ Ճին Քրուպայի հետ: Նա օգնել է վարպետին ծնծղաները ճազի առաջադրած նոր պահանջներին յարմարեցնելուն, մասնաւորապէս, խորհուրդ է տուել դրանք աւելի բարակացրնել:

Ճազի ակունքներում գտնուող աֆրօ-ամերիկացի երաժիշտները, արագ լեզու գտան Աւետիսի հետ, քանի որ նա էլ ապրելով Փոքր Ասիայում յաճախ ազգային խպրականութեան ճնշումների էր ենթարկուել: Սակայն Zildjian գործարանում ազգային խպրականութեան ոչ մի արտայայտութիւն գոյութիւն չունէր եւ ճազմզէններ Չիք Ուեպպիի եւ Փափա Ճոյ Ճոնսի համագործակցութեամբ էին յայտնագործուել այն ծնծղաները, որոնք հարուածային համակարգերի անբաժանելի մասն են կազմել՝ hihat, paper thin crash, ride, splash u sizzle (ծնծղաների տարատեսակներ, որոնց ամրացւում եւ յարմարեցւում են տարատեսակ աղմկարար օժանդակ յարմարանքներ, օրինակ, շղթաներ): Ի դէպ, նման ծնծղաներն անուանել է ինքը՝ Աւետիսը:

1935՝ Արմանն ընդունում է գաղտնիքները

Աւետիսը ճարտարագիտական գաղտնիքները փոխանցում է իր տասնչորսամեայ որդուն՝ Արմանին, ով աստիճանաբար խորամուխ է լինում գործի բոլոր նրբութիւններում:

1940-ականներ՝ պատերազմական ժամանակների դժուարութիւնները

1941 թուականին Ամերիկան մտաւ Համաշխարհային Բ. պատերազմի մէջ: Պղինձն ու անագը դարձան ռազմական արդիւնաբերութեան հիմնական նիւթերը: Աւետիսը ռազմական պատուէրներ էր ընդունում Միացեալ Նահանգներից եւ Մեծն Բրիտանիայից, որպէսզի նրանց աւելի շատ անհրաժեշտ նիւթաքանակ հասցնի: Վարպետներից շատերին ռազմաճակատ էին ուղարկել, որի պատճառով Zildjian գործարանում երեք աշխատող էր մնացել: Ի հեճուկս դրա, ռազմական պատուէրները ժամանակին կատարւում էին, դրանով իսկ ընկերութիւնը յաղթահարեց ծանր տարիների դժուարու-

թիւնները: Համաշխարհային Երկրորդ պատերազմը պատճառ հանդիսացաւ, որ Zildjian-ների գործունէութեան պատմութեան ընթացքում միակ անգամն էր, որ Ծնծղաների պատրաստման գաղտնիքները փաստագրուեցին (մինչեւ այդ դրանք բացառապէս փոխանցւում էին ժառանգաբար՝ բանաւոր): Դա կատարուել էր այն դէպքի համար, որ Աւետիսի որդին կարող էր ռազմաճակատից չվերադառնալ: Սակայն Տիրոջ ողորմածութեամբ 1945 թուին Արման Զիլջեանը պատերազմից ողջ եւ առողջ վերադարձաւ եւ լիիրաւ, ամենայն պատասխանատուութեամբ ամբողջ արտադրութեան պարտականութիւնն իր վրայ վերցրեց: Այդ շրջանում նա սկսեց ծնծղաների հնչողութեան փորձարկումներ կատարել:

1950-ականներ՝ Zildjian-ը եւ ժամանակակից ճապը

1950 թուականի նախաշեմին Zildjian-ի գործարանն իր 15 աշխատակիցներով թողարկում էր տարին մինչեւ 70.000 ծնծղայ: Յետպատերազմեան տնտեսավարութիւնը (Միացեալ Նահանգներ արտադրուած ծնծղաները ներմուծուածներից աւելի էժան էին) եւ այսպէս կոչուած ժամանակակից ճապի արագութեամբ տարածումը յանգեցնում են Zildjian-ի ծնծղաների վաճառքի աճին: Ինչպէս եւ նրա Աւետիս հայրը, Արման Զիլջեանն էլ եռանդուն համագործակցում էր առաջատար թմբկահարների եւ ծնծղահարների հետ, այն ժամանակ նրանց թւում էին Ճին Քրուփան, Պափփի Ռիչը, Մաքս Ռաչը, Շելլի Մաննէն, Էլուին Ճոնսը եւ Թոնի Ուիլեամսը: Պարբերաբար նրանց ցուցադրելով իր մակնիշի արտադրանքը, Արմանն սկսում է աւելի լաւ հասկանալ, թէ երաժիշտներն ինչ են պահանջում ծնծղաներից: Իսկ դա իմանալով, կարելի էր դասակարգել ճարտարագիտական որոշ նրբութիւններ (nuances)՝ ի պատասխան փոփոխուող երաժշտական սկզբունքների:

1960-ականներ՝ hihat, «New Beat» (Նոր Զարուած)

Գործարանի գործերը շարունակում էին վերընթաց ապրել, արտադրութիւնն աճում է, եւ Արմանը հասկանում է, որ նա միայնակ արդէն ի վիճակի չէ ստուգել, տեսակաւորել արտադրուող բոլոր ծնծղաները: Այսպէս, երաժշտական գործիքների արդիւնաբերութեան մէջ հանդէս է գալիս արուեստագէտների (երաժիշտների) հետ փոխհամագործակցութեան առաջին յստակ բաժինը: Այդ բաժնի հիմնական խնդիրը կայանում էր թմբկահարների ներգրաւումը, մասնակցութիւնը ծնծղաների տեսակաւորման եւ ընտ-

րութեան գործին: Յատկապէս որպէս այդ համագործակցութեան արդիւնք թմբկահար Լուի Պելլսընի շնորհիւ ի յայտ է գալիս hihat «New Beat»ը: Նորամուծութեան գարբերութիւնն արտայայտւում էր ծնծղաների համակարգի վերեւի մասի կշռի պակասեցման եւ ներքեւի մասի աւելացման մէջ: Այդպէս, մէկ ոտնակով նուագելիս սպացւում էր աւելի յստակ հնչիւն: Շուտով «New Beat»ը թմբկահարների շրջանակում գործնապէս ընդունուեցաւ:

1964՝ Beatles-ը պայթեցնում են աշխարհը

1964 թուականին առասպելական քառեակը նուագում է Էդ Սալիւանի ցուցադրութիւնում, ի յայտ բերելով իրականում իրօք Zildjian ծնծղաների պահանջարկի պայթուցիկ, փոթորկայոյզ ալիքներ: Մէկ տարուայ ընթացքում պատուիրուել է 90.000 ծնծղայ:

1973՝ Նոր արտադրամասը

Արուեստաբանության վերջին խօսքով կահաւորուած նոր արտադրամասը բացուեց Մասաչուսէթս նահանգի Նորուէլում՝ գործարանի 350-ամեակի առթիւ. 1981 եւ 1998 թուականներին արտադրական այս տարածքները, որպէս օժանդակ տարածքներ ընդարձակուել էին:

1976՝ ԵՐԵՔ ՄԵՐՆԴԻ համատեղ աշխատանքը

Աւանդոյթը շարունակելով, Աւեդիսը գործարանիի ղեկավարութեան աշխատանքներին մասնակից է դարձրել իր թոռնուհուն՝ Քրէյգիին: Այսպիսով, այդ շրջանում գործարանը միաժամանակ ղեկավարում են Զիլջեան գերդաստանի երեք սերունդ՝ Աւեդիս Գ., Արմանը, Քրէյգին:

1977՝ Արմանը վերցնում է ղեկավարման սանձերը

1977 թուականին Աւեդիս Զիլջեանն իր Արման որդուն նշանակում է գործարանի Նախագահ: Երկու տարի անց հօր մահից յետոյ, Արմանը դառնում է նաեւ փնօրէնների խորհրդի Նախագահ: Այդ շրջանում նա մեծ միջոցներ է ներդրել արտադրութեան արդիականացման, հեղազօդական, փորձակառուցողական, եւ ճարտարագիտական աշխատանքներում,սրեղծելով «Հնչիւնի գիտաշխատանոց» հեղազօդական բաժինը:

1980՝ Յեղափոխական արտադրութիւն

80-ականների սկզբին Արման Զիլջեանը շարունակում էր արտադրութեան արդիականացման գործում մեծ ներդրումներ կատարել: Արտադրութիւնում հադէս են գալիս պտտուող փողեր, դրոշմող կրկնակի հեծաններ, ճշգրտուեցին համակարգիչներով ղեկավարուող յանձնարարուած ծրագրերով կոփման որոշ անճշդութիւնները: Այժմ Արմանին հնչիւնի եւ դրա հնչողութեան փորձարկումներին արդէն ոչինչ չէր սահմանափակում:

1981՝ K (Քերոր) ծնծղաների առասպելական շարքը

K շարքի արտադրութեան ծնծղաներն օգտագործող երաժիշտների հետ շարունակելով համագործակցութիւնը (Էլուին Ճոնս, Թոնի Ուիլեամս) Արման Զիլջեանը որոշում է վերաստեղծել ծնծղաների առասպելական շարքի ձեռքով կոփելու աւանդոյթը, որը Քերոր Զիլջեանի պապուին K էր նշում: Նման որոշման անհրաժեշտութիւնը հիմնաւորուած էր այն բանով, որ երաժիշտները դժուարանում էին իրենց հին նոյնապիսի գործիքներին շուկայում յարմար պահեստամասեր գտնել, որոնց արդէն ընտելացել էին: Եւ Արմանը չսխալուեց, նորացուած K շարքի գործիքների վաճառքը կտրուկ աճեց:

1981՝ ՌՈԲԵՐԹ ԶԻԼՋԵԱՆ

Աւետիս Զիլջեանի երկրորդ որդին՝ Ռոբերթ Զիլջեանը ծնուել է Պոսթընում (Մասաչուսէցի Նահանգ), որտեղ եւ հիմնուել էր Zildjian գործարանի ծնծղաների արտադրութիւնը: Աւետիս Գ. ծնծղաների պատրաստման գաղտնիքը յայտնել էր իր որդիներին՝ Արման եւ Ռոբերթ Զիլջեաններին, սակայն եղբայրների միջեւ փիրող անհանամաձայնութիւնների պատճառով Ռոբերթը (BOB)1981-ին հեռացել է, թողնելով գործարանը եղբօրը եւ SABIAN (ՍԱԲԻԷՆ) Zildjian ծնծղաներ արտադրող եւ արդիւնահանող գործարան սրեղծել Քանատայում՝ Նիւ Պրանսուիք քաղաքում: Ռոբերթը նոր գործարանի անուանկազմաւորել է իր զաւակների՝ Սալլիի, Պիլլի եւ Էնդիի անունների առաջին վանկերից, որն այսօր համաշխարհային փառք է վայելում, ինչպէս Պոսթընի Zildjian մայր գործարանը:

Ռոբերթ Զիլջեանն իր մահկանացուն կնքել է Քանատայի Մեն Նահանգի Նիւ Պրանսուիք քաղաքում 2013 թուականի մարտի 28-ին:

1983՝ Նոր աւանդոյթ՝ Zildjian-ների Օր

1983 թուականին արտադրութիւն հարուածային գործիքների մտկարգուած hihat K/Z: Ինչպէս անունից է բխում, դրանում վերեւի ծնծղան K շարքից էր, ներքեւինը Z շարքից: Արմանի որդին Ռաբ (Ռոբերտ) Զիլջեանը, Լոս Անճելեսում, երաժիշտ արուեստագէտների հետ ունեցած ծանօթութիւնների միջոցով, Քալիֆորնիայում նոր գրասենեակ է բացել: Այս առթիւ նշանաւորում է առաջին Zildjian Day փօնախմբութիւնը: Հանրայայտ կատարողների ղեկավարութեամբ յագեցած վարպետութեան դասընթացներով եւ այլ միջոցառումներով հանդերձ, ոչ միայն Zildjian-ների, այլեւ, երաժշտական գործիքների ամբողջ արտադրութեան աւանդոյթը դարձան:

1988՝ Թմբուկի Zildjian փայտիկներ՝ Կրակով նուագիր

Zildjian վաճառատունը Ալապամայում թողարկել է սեփական արտադրութեան թմբուկի փայտիկներ, որտեղ անհրաժեշտ մեծքանակի ընկուզենի է աճում: Շատ շուտով հանրայայտ թմբկահարները, որոնց թւում եւ Ջոն Քրամերը (Ակրոսմիթը), անցնում են Zildjian վաճառատան փայտիկներով նուագելուն: Նրանց թւում՝ Լուի Պելլսընը, Թոնի Ուիլեամսը, Վիննի Քոլիւթը (Սթինգ),Տեննիս Չեմբերսը (Քարլոս Վանթանա):

1990՝ Նորամուծութիւններ, առաջատար երաժիշտների համագործակցութեամբ

Վիննի Քոլիւթը ներգրաւուեց Custom ծնծղաների նոր շարքի մշակմանը: Նորամու-

ծութիւնը շուտով դարձաւ Zildjian մակնիշի նոր, երաժշտական արուեստում նոր կաղապարներ հաստատող ամենատարածուած մոդելներից մէկը:

1995՝ Իր տեսակի մէջ նուագախմբային առաջին առանձնասենեակը

1995 թուականին Zildjian գործարանը յատուկ շէնք կառուցեց, որտեղ տարբեր նուագախմբերի երաժիշտները կարողէին իրենց անձնական օգտագործման համար ծնծղաներ ընտրել եւ գնահատել: Նուագախմբային առանձնասենեակի առաջին հիւրերն էին Լոնդոնի եւ Պոսթոնի սիմֆոնիկ նուագախմբերի, ինչպէս նաեւ Թագաւորական նուագախմբի երաժիշտները, ովքեր միեւնոյն ժամանակ տպանում էին աշխարհում հարուածային գործիքներ եւ համապատասխան պիտոյքներ արտադրող առաջին գործարանի որակի ISO 9001 CERTIFIKATEը:

1998՝ Առասպելական թմբկահարներ

Գործարանը նշեց իր գոյութեան 375-ամեայ յոբելեանը չորս հանրահայտ թմբկահարներ երաժիշտների՝ Ռոյ Հէյնսին, Էլուին Ճոնսին, Լուի Պելլսընին եւ Մաքս Ռուչին յանձնելով՝ American Drummers Achievement Award մրցանակը: Հանդիսաւոր այդ արարողութիւնն անց էր կացնում Պիլլ Քոսպին: Նման նշանաւոր երեւոյթի առթիւ, Պերքլիի երաժշտանոցը հիմնեց պարգեւատրուած իւրաքանչիւր թմբկահար երաժշտի անուանական կրթաթոշակ: Ի դէպ, այս երաժիշտներին մրցանակների յանձնման ժամանակ բեմահարթակին նրանք հանդիպեցին առաջին անգամ, ընդհանրապէս:

1999՝ Ընտանեկան աւանդոյթների ղեկավարումը

Արման Զիլջեանն իր դուստր Քրեյգիին նշանակեց գործարանի աւագ կառավարիչ: Նա իգական սեռի առաջին ներկայացուցիչն էր, որ կառավարման գործընթացում պաշտօն ստանձնեց: Արմանի կրտսեր դուստրը՝ Դեբբին, դարձաւ պատասխանատուների բաժնի վարիչը: Նրան էլ հէնց փոխանցուեցին 1623 թուից ամենայն փութաջանութեամբ պահպանուող համաձուլուածքների արհեստագիտութեան գաղտնիքները:

2002՝ Սիրելի ԱՌԱՋԱՏԱՐԻ կորուստը

Արման Զիլջեանի գիտահետազօտական վերջին ծրագիրը դարձաւ K Constantinople շարքի ծնծղաների արտադրութեան թողարկումը: Այդ ԾՆԾՂԱՆԵՐՆ ի սկզբանէ մշակւում էին որպէս նուագախմբային, սակայն հետագայում լայնօրէն օգտագործուեցին ride ոճում եւս:

Արման Զիլջեանն իր մահկանացուն կնքեց 81 տարեկանին, դեկտեմբերի 26-ին իր տանը՝ Արիզոնայում:

2003՝ անընդմէջ նորամուծութիւնների 380 տարի

ZJLDJIAN գործարանի հիմնադրման 380-ամեակի առթիւ American Drummers Achievement Award երկրորդ մրցանակը շնորհուեց հանրայայտ թմբկահար Սթիւ Քատտին, ով էլ իր հերթին մեծ շուքով նշեց իր մտերիմ բարեկամ Արման Զիլջեանի յիշատակը:

Միեւնոյն ժամանակ «ՀՆՉԻՒՆԻ ԱՇԽԱՏԱՆՈՑ»ն սկսեց տիտանի (Titan, մետաղ մը) համաձուլուածքի ծնծղաների արտադրութիւնը, որոնք երաժիշտների շրջանում շատ արագ գտան իրենց նուիրեալ կատարողներին:

2004՝ Պահպանելով գերդասպանի աւանդոյթը

Ջիլչեան գերդասպանի 15-րդ սերնդի Արման Ջիլչեանի դստրերի՝ Քրէյգիի եւ Դէրրիի դուստրերը՝ Սամանթան եւ Քէդին ու Էմիլիան այսօր Ջիլչեանների 16 եւ 17 սերունդն են, որ աւանդաբար պատասխանատուութեան մեծ զգացումով շարունակում են աշխարհահռչակ գերդասպանի գործը:

2006՝ K Custom խաչաձեւուած շարքի թողարկումը (hybride, խառն, խառնածին)

Zildjian-ի նորամուծութիւնների մշտական ձգտումն արտայայտուեց K Custom խաչաձեւուած շարքի ծնունդների արտադրութեամբ: Հարուածային գործիքների վարպետ կատարող Աքիրա Ճիմպոյի մասնակցութեամբ իրականացուած արտադրութիւնում իրականացուել են մետաղի թրծման արուեստաբանութեան եւ մշակման երկու տարբերակ՝ աւանդական եւ Brilliant: Արդիւնքում միեւնոյն ծնծղան, կատարման տարբեր ոճերի դէպքում կարող է տարբեր կերպ հնչել: Նրանից կարելի է արտաբերել եւ՛ պայծառ եւ՛ մթագնած հնչողութեան երանգներ: K Custom շարքի արտադրութեան ծնծղաները նշուել են International Press Award Misikmesse-2006, ինչպէս նաեւ 2007 DRUM եւ Drumheads ամսագրի «Տարուայ ԾՆԾՂԱՆԵՐ» մրցանակին:

2008՝ 385-ամեայ Zildjian ընկերութեան յոբելեանը

Ընկերութեան յոբելեանի առթիւ Zildjian Drummers Achievement Award մրցանակ շնորհուեց հարուածային գործիքներին հրաշալի փիրապետող Ջինջրր Պէյքրին (Cream): Լոնդոնում յանձնուած մրցանակը նրան դասեց այդ պատուին նախկինում արժանացած մրցանակակիրներ Ռոյ Հէյնսի, Էլուին Ճոնսի, Լուի Պելսրնի, Մաքս Ռաչի եւ Սթիւ Քափրի անուննեի շարքին:

Միաժամանակ Zildjian գործարանն սկսեց արտադրել Bronze 12 (88 տոկոս պղինձ եւ 12 տոկոս արճիճ) ժամանակակից համաձուլուածքի Pitch Black ծնծղաներ, գործարանային սեւ ծածկոյթով: Այդ ծնծղաներն աչքի են րնկնում իւրայատուկ հարուստ հնչողութեամբ:

Երեւան

**Արուեստագիտութեան թեկնածու*
Կոմիտասի անուան ԵՊԿ դոցենտ, Հայաստանի Ժուռնալիստների, Թատերական գործիչների միութիւնների եւ Երաժշտական ընկերութեան անդամ

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՆԱՏՈԼԻ ԱՒԵՏԵԱՆ՝ ԱԶԱՏ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՄԸ

Արարում եմ ինչպէս կամենում եմ, ինչ կամենում եմ եւ ինչով կամենում եմ:
Անատոլի Աւետեան

Հակառակ երկրի դիմագրաւած դժուարութիւններուն, Երեւանը եռացող քաղաք է եւ կը շնչէ արուեստով. երգահանդէսներ, թատերական ներկայացումներ, պարային ելոյթներ, նկարչական ցուցահանդէսներ: Սրահները միշտ լեցուն են, հեռատեսիլը լայնօրէն կ'անդրադառնայ գրականութեան:

Հայաստան թերեւս այն երկիրն է, ուր նկարիչներուն թիւը բնակչութեան բաղդատած, բարձր տոկոս կը ներկայացնէ: Նկարչութիւնը անարգել կրնայ անցնիլ մէկ երկրէն միւսը, սահման չի ճանչնար, լեզուական արգելք չունի: Միաժամանակ կարելի չէ արձագանգել բոլորին, եւ հասկնալի է, որ ենթակայական դատումով, զրոյցի համար կ'ընտրուի գեղանկարիչը:

Լսել Անատոլի Աւետեանը, որ ընդհանրապէս լոյս կը սփռէ իր արուեստին եւ մասամբ նաեւ Հայաստանի եւ հայ գեղանկարչութեան վրայ:

Նիւթերու, գոյներու, երանգներու հետ զուարճացող բրուտ մըն է այս արուեստագէտը, նիւթի եւ գոյներու *ալշիմիստ* մը, նիւթով երազող, երազը նիւթին շնչառութեան վերածող:

Իր անուան շուրջ աղմուկ չստեղծող արուեստագէտ է Անատոլի Աւետեան, որուն ստեղծագործական դաշտը կը յատկանշուի փեւական որոնումով: Երբ զինք ճանչցայ շուրջ երեսուն տարի առաջ, կը պեղէր հայկական հին արուեստի թաքուն աշխարհը, կը դաջէր մեփաղը, կը դրուագէր, անոր կու տար թելադրական ձեւեր եւ ինքնատիպ գոյներ՝ առանց երանգապնակ գործածելու: Ան հաւասարապէս կ'օգտագործէ մեփաղ ու փայտ, քար, ապակի, կտաւ եւ ներկեր: Մուրճ կամ վրձին ճամբայ կը հարթեն ստեղծագործելու:

Բանաստեղծական դիմագիծեր կային

«Կարմիր սարեր», 2010, նիւթ՝ կտաւ, իւղաներկ

դաջուած մեկտաղի վրայ,- որ հայկական հին արուեստ է,- չէզոք շրջանակներու մէջ, հրաւէրներ՝ մտնելու քչախօս Անատոլիի ստեղծագործական աշխարհը: Ինք չէր բացատրեր իր գործը, այդ զգալու եւ բացատրելու իրաւունքը կը թողուր արուեստասէրին, որպէսզի ան տեսնուածին մէջ ինքզինք կարենայ սեւեռել: Իրաւ արուեստը արդէն ինքնաճանաչման հայելի է, իրականութեան եւ տենչերու միջեւ ձգուած ուռկան:

Յաճախ դիտած եմ Անատոլի Աւետեանի առաջին շրջանի կուսազեղ դէմքի գիծերով կիները, կրակէ անցած պրոնզի երանգներով, որոնք լոյսին հետ կը փոխուէին, մերժելով ծիածանային գոյներու խաղին կախարդանքը: Այդ եթերային դէմքերը կարծէք կը բռնէին վաղանցուկի եւ մնայունի ակնթարթը, միշտ պատուհանէն ինկող լոյսին հետ փոխուող: Այդպէս է ստեղծագործութիւնը, որ արուեստի եւ արհեստի, խօսքի եւ երազի բաժանարար սահմանն է:

Տեսած էի Անատոլի Աւետեանի Վանաձորի արուեստանոցը, երբ տակաւին ամբողջովին մայրաքաղաքի նկարիչ չէր: Երեւանը մագնիսի պէս իրեն կը քաշէ Հայաստանի բոլոր շրջաններու տաղանդները՝ գրական, երաժշտական, գիտական, կրթական, արուեստի, քաղաքական, ամայացնելով շրջանները, հոն ստեղծելով «գաւառականութեան» մթնոլորտ, ուր ժամանակը կանգ կ'առնէ: Քիչեր կը դիմադրեն մեծ քաղաքի կանչին: Կրնա՞ն չդիմադրել, այնքա՜ն բազմաթիւ եւ հասկնալի են պատճառները:

Տարիներու ընթացքին տեսած եմ Անատոլի Աւետեանի ստեղծագործական ոճին մէջ տեսակարար հոլովոյթ, չեմ ըսեր նորութիւն: Մարդը այդպէս է, տպաւորելու միտող նորութիւն-արտառոցութիւն չի փնտռեր: Նոյն խորքն է, նոյն լարերն են, բայց ինչպէս մեղեդին, պատկերներէն անդին լոյսի խաղերը կը փոխուին:

Բ. Աշխարհամարտին մասնակցած հայրը, որ գերի ինկած էր, փախած է, մասնակցած է դիմադրական շարժումներու, Գերմանիոյ դէմ, Եւրոպական երկիրներու մէջ, Պարսկաստանի ճամբով վերադարձած է Հայաստան եւ Ստալինի կողմէ անմիջապէս աքսորուած: Մօրը ըն-



«Մայրութիւն», 1999, ներք՝ պղինձ, դրուագում, ասեղ, պատինա

պանիքն ալ աքսորուած է որպէս գերմանացի, պան անդամները իրարմէ բաժնելով եւ քշելով պարբեր վայրեր: Մինչեւ իր պասնիինգ պարիքը, իր սիպերական ծննդավայր աքսորին մէջ ապրած Անապոլի Աւեպեանին երբ հարց կը պրուի, թէ ի՞նչպէս եղած են իր օրերը, ուսում, նկարիչի շնորհի յայտնաբերում, այդ օրերը հե՛պք ձգած են իր հոգեկան աշխարհին մէջ, ան կը պապմէ:

- Այդ օրերը մասնաւոր հեպք չեն ձգած: Երբ չէի խօսեր դեռ, կը նկարէի, շնորհ՝ ժառանգուած գերմանացի պապէս, մօրս հօրմէն: Սիպերիոյ Փրոքոփեւսք ծննդավայր քաղաքիս մէջ Պիոներական Պալապ կ'երթայի: Մինչեւ 9-րդ դասարան հոն էի, ուր կար շապ լաւ նկարչութեան դասապու մը, որ ինծի ըսաւ, թէ կը նկարէի նոյնքան լաւ, որքան կը քանդակէի: Մեր քաղաքին մէջ հայ չկար, Երեւանի ձայնասփիւռը հոն չէր լսուեր: Հայրս՝ Հայաստանի կարօտով, Պաքուի ձայնասփիւռը կը լսէր:

Անապոլի Աւեպեան միայն 1967-ին Հայաստան կու գայ, այդ օրերու Կիրովականը, այժմ՝ Վանաձոր: Կ'ըսէ, որ կրնային աւելի կանուխ գալ, բայց Հայաստանի մէջ այդ օրերուն կեանքը դժուար էր, եւ Փրոքոփեւսքի մէջ իր ընտանիքը լաւ պայմաններու մէջ կ'ապրէր: Հայաստանի եւ Վրաստանի արուեստի վարժարաններուն մէջ կ'ուսանի: Կենսագրութիւնը ցոյց կու պայ, որ շուտով կը գնահատուի: Ուզեցի, որ խօսի իր արուեստի զարգացման հանգրուաններուն մասին, հայկական հին արուեստ մեպաղի վրայ դաջուած իր դիմապուերներէն մինչեւ այսօրուան գոյները, որոնք ինքնափիպ nature morte-ներ են: Անապոլի Աւեպեան կը պապմէ.

- Մեպաղի վրայ աշխապիլը նորոյթ էր 60-70-ականներուն: Բենիկ Պեպրոսեան (20-րդ դարու երկրորդ կէսի նշանաւոր արուեսպագէպ, 1939-1996) սկսած էր այդ ընել 60-ականներուն, ան ուսումնասիրութիւններ կ'ընէր Մապենադարանին մէջ, մապեաններու դաջուած կողքերու վրայ: Բենիկ Պեպրոսեան եւ Դաւիթ Երեւանցի (այժմ Ֆրանսա) կ'աշխապէին մեպաղի վրայ: Այդ ձեւէն հեռացայ: Մեպաղին պէպք ունէի ծաւալներու համար: Ինձմէ առաջ ոչ ոք այդքան գոյն աշխապած է մեպաղի

«Ամերիկա!», 2006, ներկ՝ կտաւ, իղանակով

Այս մասին խօսեցաւ Անապոլի Աւետեան:

- Անցեալին, խորհրդային օրերուն, նկարիչը ապահովուած էր: Պատուէրներ կը սպանար: Այժմ նկար գնող չկայ: Մշակոյթի նախարարութիւնը պէտք է զբաղի նկարիչի եւ ստեղծագործութեան ճանաչման հարցով: Նկարիչը, անցեալին հետ բաղդատած, ոչ մէկ պաշտպանութիւն ունի: Իսկ միջազգային հրապարակ գալու նախաձեռնութիւնը պէտք է ունենայ մշակոյթի նախարարութիւնը, նկարիչը այդ միջոցները չունի: Արուեստաբանները պէտք է կատարեն ծանօթացման աշխատանքը:

Անապոլի Աւետեան մասնակցած է գեղազարդումի - art déco - ցուցահանդէսներու, այսինքն հրապարակ եկած է նաեւ կիրարական աշխատանքներով: Այս պարագային խնդիր կար, թէ ո՞ւր կը գտնուի գեղազարդում-կիրառական արուեստի եւ ստեղծագործական արուեստի բաժանարար գիծը: Ներկայիս, ինչպէս կ'ըսուի, designer-ներ հեշտութեամբ կ'անցնին գեղանկարչութեան ոլորտ, քիչ մը ամէն վրայ: Բենիկ Պեզրոսեան կ'ըսէր, որ մեզպաղի գործը ինձմով մեծ յառաջդիմութիւն արձանագրեց: Ապա անցայ գեղանկարչութեան՝ մեզպաղի վրայ:

Առաջին անգամ հանդիպած էինք երկրաշարժի օրերուն: Վանաձորը հարուածուած էր: Աղէտը ինչպէս դիմաւորած էր արուեստագէտը:

- Երկրաշարժի տպաւորութեամբ գործեր ստեղծած եմ, ինչպէս *ռէկվիէմ*, փխրութեամբ յատկանշուող պատկերներ, մութ գոյներով: Նման մթնոլորտով գործեր միշտ ալ կան, ինչպէս Ցեղասպանութեան 100-ամեակի:

Նիւ Եորքը ժամանակակից արուեստի, նաեւ նկարչութեան մեծագոյն կեդրոններէն մէկն է: Անապոլի Աւետեան փարի մը հոն մնացած է: Հետաքրքրական էր իմանալ, թէ ինչպէ՞ս դիմաւորած էր այդ աշխարհը եւ ինչպէս ընկալուած էր ինք: Պատասխանը զարմացնող էր:

- Նիւ Եորքի մէջ ես ցուցահանդէս չեմ ըրած: Հոն կեցութեանս ընթացքին ես տեղեկութիւն հաւաքեցի, ցուցասրահներ եւ թանգարաններ այցելեցի, հոն մեծ նկարիչներու գործերը կային: Հոն ռուսի մը պատկանող մեծ ընկերութեան մօտ աշխատեցայ որպէս ներքին գեղազարդող - designer, décoration interne - վճարուած էի: Չկրցայ հոն ցուցահանդէս ունենալ, որովհետեւ ձեռքի արկած ունեցայ եւ վերադարձայ Երեւան:

Նկատի ունենալով, որ արուեստի շուկան մեծ քաղաքներու եւ երկիրներու մէջ է, միթէ պէ՞տք էր Հայաստանէն դուրս գալ միջազգային ճանաչում գտնելու համար: Ակնարկեցի Եուրոզի, որ լայն ճանաչման արժանացած է: Մանաւանդ որ Հայաստանի նկարիչները ընդհանրապէս «քոթէ» չեն, ինչ որ անկարելի չէ, եւ անհրաժեշտ է միջազգային հրապարակ գալու համար, ներկայ ըլլալ աճուրդներու, Սոթպի'զ (Անգլիա) կամ Տրուօ (Փարիզ):

«Ծովափին», 2011, ներկ՝ ալիւմին, ներկեր

պեղ: Այդ սահմանի մասին արուեստագէտը կ’ըսէ.

- Այդ սահմանը կը ճշդուի գործածուած նիւթով, օրինակ, փայտի վրայ աշխատանքը, կիրառականը եւ արուեստը կը զանազանուին գունանկարներով, նկարներով, իւղաներկի, կտաւի եւ թուղթի գործածութեամբ: Կիրառական ժամանակակից գործերը գեղեցիկ կրնան ըլլալ, ժամանակակից նկարագիր ունենալ:

Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական կացութիւնը, հետաքրքրական էր գիտնալ, թէ Անապոլի Աւետեանի գործերը երկրին մէջ կը վաճառուէ՞ին, մանաւանդ, ինչպէս ինք ըսաւ, երբ պետական աջակցութիւն եւ պատուէրներ չկային:

- Գործերս կը վաճառուին: Հանրապետութեան նախագահը եւ ղեկավարութիւնը գործերէս նուէր կը տանին երբ կը ճամբորդեն: Նոյնպէս՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նաեւ երկրի հարուստները իրարու կը նուիրեն:

Ընդլայնելով զրոյցի սահմանները, լաւ պիտի ըլլար իմանալ Նկարիչներու միութեան անդամներու թիւը, քանի որ ժողովուրդին հետ առաջին շփումով իսկ կարելի է պեսնել նկարչութեան, երգի եւ երաժշտութեան հետեւողներու մեծ թիւը: Ի՞նչ էր միութեան ոչ-անդամ նկարիչներու համրանքը: Հարց էր, թէ, բնակչութեան բաղդատած, փոկոսային հաշիւով շատ մեծ չէ՞ր անոնց համրանքը: Նաեւ անոնց գործերուն մէջ կը գտնէի՞նք մեր ժամանակակից եւ անմիջական պատմութեան եւ կեանքի արտայայտութիւնը, լոյսով եւ սպուերով:

Նկարիչներու միութեան վարչութեան անդամ Անապոլի Աւետեան ըսաւ. **«Միութիւնը ունի 760 անդամ, իսկ Միութենէն դուրս մեծ է անոնց թիւը, թերեւս մէկ-երկու հազար է: միութիւնը ամէն տարի, ընտրութեամբ, կ’ընդունի նոր անդամներ: Միութիւնը ոչ մէկ նպաստ կը սպասայ պետութենէն: Բնական է նաեւ, որ նկարիչներ, ինչպէս նաեւ բոլոր արուեստագէտները, կ’արձագանգեն իրենց ժամանակին, բնութեան, տագնապներուն»:**

«Լուսաբաց», պղինձ, դրուագում, ներկեր

«Ճամբորդութիւն Վնդկաստան» շարքէն, «Վնդկական Մատոննա», 2012, ևիւթ՝ կտաւ, իւղաներկ, աքրիլիք

Յաճախ փեսակէփներ արփայայփուած են նկարչութիւնը եւ ընդհանրապէս արուեսփներու մէջ բնորոշ «ազգային» իրայապկութեան ներկայութեան մասին, ըսուած է, որ արուեսփի մէջ անփեղի է ազգայինը փնփռել, թէ ան էապէս համամարդկային է: Ի՞նչ կը մփածէր արուեսփագէփը այդ ազգային դրոշմին մասին, նաեւ ինք սփեղծագործական-նկարչական դպրոցներու կամ հոսանքներու մէջ. խորհրդային *սոց-արթ* (Ժողովրդական արուեսփ) փպաւորապաշփ, վերացական, կամ այլ, ուր կը փեսնէր ինքզինք:

Անապոլի Աւեփեան դասական ձանօթ վերլուծումները չ'ըներ: Պարզապէս կ'ըսէ, որ ինք ոչ *ապպրրակփ* է (վերացական), ոչ ռէալիսփական (իրապաշփ).

- Ոչ մէկ ուղղութեան կը պապկանիմ: Համամարդկային եմ, բայց ան ալ ազգային է, ազգայինը զգացում է, որ կու գայ հողէն, երկրէն, մարդոցմէ, պապմութենէն: Գործը իր գոյնով, գիծով եւ ոճով կը զգացնէ իր պապկանելիութիւնը, կը զգացուի, որ արուեսփագէփը հայ է, առանց բացապրութեան, աչքը կը փեսնէ: Ես կը զգամ: Բայց եթէ կ'ուզէք, որ բացապրեմ, թէ ո՛ւր է իմ գործերուս մէջ ազգայինը, ես չեմ կրնար բացապրել: Վայասպանի եւ սփիւռքի նկարիչներու փարբերութիւնը կը զգացուի շրջապափի ազդեցութեամբ: Սփիւռքի հայ արուեսփագէփը կարօփի հայրենասիրութիւն ունի, բայց իր գործը իր սփացած մշակոյթին եւ շրջապափին հարկապու է, Վայասպանի հայ արուեսփագէփը հեռուէն չի դիփեր երկիրը եւ ժողովուրդը, կ'ապրի, անոնք իր մէջ են:

Ճիշդ է: Անապոլի Աւեփեանի արուեսփը դասակարգումի չ'ենթարկուիր: Բնութեան հանդէպ սէր կայ, այդ վարդերու եւ գոյներու բնութեան մաս կը կազմեն իրերը եւ մարդիկ, գաղափարներ եւ կրօնական յուզումը, կիները, որոնք կարծէք անմիջապէս պիփի խօսին, բան մը պիփի խոսփովանին, թելադրականութիւն, որ իրաւ արուեսփի յապկանիշ է:

Առաջին շրջանի մեփաղի վրայ դաջուած կիները կեանք կը բերէին նիւթին: Իսկ հիմա գոյները կը պապմեն կինը՝ երբ ան կը կանգնի հայելիին առջեւ իր գաղփնիքը չըսելու կամ աղաղակելու համար...

Մեփաղի վրայ դաջուած յաւերժական կինը սիրոյ, ցանկութեան եւ հրայրքի վարարող խորհուրդ է: Եւ Անապոլի Աւեփեանի կիները, իրենց լուռ սպասումով,

ԲԱԳԻՆ

«Հրազդանի կիրճում», ստուարաթուղթ, իւղաներկ

Իր կայքին վրայ Անա-
պոլի Աւետեան գրած է.

Արարում եմ ինչպէս կամենում եմ, ինչ կամենում եմ եւ ինչով կամենում եմ:

Աիրում եմ գոյնը, ձեւը, գիծը, ծաւալը, ֆակտուրան:

Չեմ յարում որեւէ ոճի, բնոյթի, ուղղուածութեան:

Նիւթերի բազմազանույթունը եւ ամէնօրեայ փորձարկումները իմ զարերքն են:

Ես երջանիկ եմ: Ես ազատ եմ արուեստում:

ծաւալներով, կորութիւններու կափարելութեամբ այնքան մօտ են մեզի, ինչպէս մեր երազները:

Անաւրոլի Աւետեան ծնած է Մեպրեմբեր 1952-ին, Փրոքոփեւսք (Միպիր), աքսորականի ընտանիքի յարկին տակ: 1967-ին ընտանեօք փոխադրուած են Հայաստան, Վանաձոր (Կիրովական): 1969-ին կը մտնէ Երեւանի Փանոս Թերլեմեզեան արուեստի վարժարանը, 1972-ին Թիֆլիսի Արուեստից ակադեմիան, 1976-ին կ՛աւարտէ Երեւանի Գեղարուեստից դպրոցը եւ նոյն տարին կը մասնակցի Իսլանդայի մէջ կայացած «Հայաստանի արուեստը» ցուցահանդէսին: 1983-ին Լրագրողներու տան մէջ՝ անհատական ցուցահանդէս: Կը մասնակցի Վոլանդայի մէջ Հայ մշակոյթի օրերուն: 1984-ին՝ հայ արուեստի ցուցահանդէսին Սենթ Փեթերսպուրկի եւ Մոսկուայի մէջ: 1988-ին՝ անդամ Խորհրդային Միութեան Արուեստագէտներու միութեան: 1989-ին՝ Հայ գարդարուեստի ցուցահանդէս՝ Զուիցերիա: 1992-ին՝ Երեւան եւ Փարիզ: 1993-ին՝ Ֆրանսայի Մշակոյթի նախարար Ժաք Թուպոնի հրաւէրով՝ Փարիզի 13-րդ թաղամասի քաղաքապետարանին մէջ: 1994-ին՝ Վալէպ, Ուաշինկթըն եւ Լոս Անճելըս, 1997-ին՝ Շիքակօ, Աթլանթա եւ Երեւան: Նոյն տարին անդամ կ՛ընդունուի ԵՈՒՆԵՍՔՕ-ի Արուեստագէտներու միջազգային միութեան: 2001-ին՝ Պելճիքայի Քնոք-Զուր պանթէոնին եւ Մոսկուայի Նկարիչներու ցուցասրահներուն մէջ: 2002-ին՝ Հայաստանի նկարիչներու տան մէջ, Երեւան: 2005-ին՝ յոբելեանական ցուցահանդէս, Երեւան: 2006-ին կ՛ապրի եւ կը գործէ Նիւ Եորքի մէջ: 2007-ին՝ ցուցահանդէս Վանաձոր: 2008-ին՝ Գորիս, նաեւ՝ Երեւանի նկարիչներու տան մէջ: Անդամ է նկարիչներու միութեան վարչութեան: 2009-ին կը սրահայ Հայաստանի վաստակաւոր արուեստագէտի եւ Վանաձորի Պատուոյ քաղաքացիի կոչումները: 2012-ին յոբելեանական՝ Վանաձոր, Ալլահվերդի, Երեւանի Արդի Արուեստի թանգարան: Պարգեւատրուած է Լոռիի մարզպետի ոսկի շքանշանով: Գործերը կը գտնուին Հայաստանի արուեստի ազգային ցուցասրահին, Ազգագրական եւ Երեւանի արդի արուեստի թանգարաններուն մէջ, Մշակոյթի նախարարութեան, Հայաստանի արուեստի հիմնադրամի, Մոսկուայի արուեստներու հիմնադրամի, Պոսթոնի ԱՄՄ թանգարանի, Փարիզի քաղաքապետարանի, Փարաճանովի տուն-թանգարանի մէջ, նաեւ՝ Հայաստանի, Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Ամերիկայի նախագահներուն, Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ Հռոմի պապին նուիրվայրերուն մէջ:

■«ՍԱՅԱԹ ՆՈՎԱ»
■«ՍԱՅԱԹ ՆՈՎԱՆ ԱՇՈՒՂՆԵՐԻ ԽԱՂԵՐԻ ՄԷՋ»
■«ԱՇՈՒՂ ՍԱՉԱՅԻ ԱՆԻՐԱՒ ԱՇԽԱՐՀ»
Աշխատասիրեց Թովմաս Պօղոսեան
Երեւան, 2012, 2013, 2014

«ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» Ա. Հատոր
Հեղինակ՝ Յակոբ Օշական
Անթիլիաս, 2015

«ԸՆԴ ԵՂԵԳԱՆ ՓՈՂ»
(Հայոց Ցեղասպանութեան թեման հայ պոեզիայում)
Հրատարակութիւն Հայ-ռուսական համալսարանի
Երեւան, 2015



«ՏԵՐԵՒՆԵՐ ԴԵՊՆԱԾ ՅՈՒՇԱՏԵՏՐԷ ՄԸ»
Հեղինակ՝ Շաւարշ Միսաքեան
Մարսէյ, 2015

«THE LEGACY OF LOST THINGS»
Aida Zilelian
New York, 2015



«ZAHRAD 90»
Translation and analysis by Herand M. Markarian
New York. 2014

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼԸ.

ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՉՂՐԿԵԼ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ,
ՈՐՈՆՔ ՆԱԽԱՊԷՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ ԳԻՐՔՈՎ, ՄԱՄՈՒԼՈՎ ԿԱՄ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ:

ԱՆՏՈՒՆԻ

Սիրտըս նման է էն փըլած տըներ,-
Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ.
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր
Երթամ՝ ձի թալեմ էն ելման գետեր.
Ըլնիմ ձկներու ձագերացըն կեր:
Ակ, տօ լա՛ճ տընաւեր:

Սեւ ծով մ'եմ տեսէ, սիպտակն էր բոլոր,
Ալին կը զարնէր, չէր խաոնի յիրոր.
Էն ո՞րն է տեսէ մէկ ծովն երկթաւոր,-
Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր:
Ախ, իսկի մի՛ լնիք սըրտիկ սեւաւոր:
Ակ, տօ լա՛ճ տընաւեր:

ՀԱՍԱՋԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ